# ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

## Ի. ԴԱՐԻ ՄԻՋՆԱԴԱՐ (ԻՍԼԱՄԱՑՈՒԱԾ, ԻՍԼԱՄԱՑԱԾ, ԱԼԵՒԻԱՑԱԾ, ԾՊՏԵԱԼ ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ)[1] (Բ.)

ՀՐԱՆՈՒՇ ԽԱՌԱՏԵԱՆ
hkharatyan@gmail.com

18 Դեկտեմբերի 2010ին Ստամբուլում բարեկամուհուս տանը զրուցում էինք Ստամբուլի հայութեան խնդիրների շուրջ: Ստամբուլից չորս հոգի էին զրոյցի մասնակիցները՝ զոյգ ամուսիններ: Բոլորն էլ՝ հայախօս, բոլորն էլ՝ հայութեան ճակատագրով մտահոգ մտաւորականներ: Խօսք գնաց վերջերս տեղի ունեցած մի դէպքի մասին, որ խորապէս ցնցել էր համայնքը եւ որին անդրադարձել էին նաեւ լրագրերը: Մի հայ աղջիկ ամուսնացել էր մահմեդականի հետ: Վերջին քսան տարիների համար զգալիօրէն սովորական պատմութիւն: Սակայն տուեալ դէպքում աղջկայ ընտանիքը կտրուկ դէմ էր այդ ամուսնութեանը եւ կապերը աղջկայ հետ խզել էր: Սրտցաւ միջնորդները երկար ժամանակ աղջկայ եղբօրը համոզել են հաշտուել կատարուածի հետ, հանդիպել քրոջն ու փեսային: Վերջինս ի վերջոյ համաձայնուել է, գնացել է հանդիպմանը, եւ անմիջապէս սպանել է թէ՛ քրոջը, թէ՛ փեսային: Միայն հետաքննութեան ժամանակ է պարզուել, որ փեսան էլ… սասունցի իսլամացած հայերի ընտանիքից է:

Այս դէպքը առիթ էր դարձել կրկին անդրադառնալու Թուրքիայում զգալի ծաւալ կազմող իսլամացած (թրքացած, արաբացած, քրդացած), իսլամացած եւ հայ ինքնութիւնը պահած, ալեւիացած, ծպտեալ ու ոչ-ծպտեալ հայերի խնդիրներին:

Զրոյցի ընթացքում պարզուեց, որ բոլոր չորս զրուցակիցներս էլ իսլամացած ազգականներ ունեն, եւ չնայած իրենք բոլորն էլ որոշ յարաբերութիւններ միմեանց հետ պահում են, միմեանց այցելում են, անհրաժեշտ դէպքերում միմեանց օգնում են, սակայն «երկու կողմն էլ» գերադասում է այդ յարաբերութիւնները «չցուցադրել»՝ ո՛չ հայկական, ո՛չ իսլամական միջավայրերում: Եւ սա շատ տարածուած երեւոյթ է:

Գաղտնիք չէ, որ իսլամաց(ու)ած հայերի թեման յատուկ սրութեամբ սկսել է քննարկուել վերջին տաս տարիներին: Այս ընթացքում արդէն հակոտնեայ կարծիքներ են ձեւաւորուել՝ **հայ են-հայ չենի**, **ընդունենք-չընդունենքի**, **իմանանք-չիմանանքի** եւ այլ նմանօրինակ հարցերի շուրջ: Հայերից առաւել, կարծէք թէ թուրքերն են շահագրգիռ հասկանալ խնդիրը: Թուրքական իշխանութիւններն այնքան երկար շահարկեցին քուրդ զինեալների «հայկական ծագման» թեման, որ տպաւորութիւն է ստեղծուում,

թէ այն միտուած է «թուրքի հիմնական, եթէ ոչ միակ թշնամին հայն է» կարծիքի զօրացմանը: Ընդ որում կրօնափոխուածներին այս համապատկերում երբեք իւրային չեն դիտում. չափազանց յաճախ է հնչում «կրօնափոխուած հայ վիժուածքներ» ձեւակերպումը: Կրօնափոխուած, չկրօնափոխուած՝ թուրքական ներքին լսարանին ուղղուած բառամթերքում հայը միշտ «վիժուածք» է: Իմ զրուցակիցներից մէկի դիպուկ գնահատմամբ պատահական չէ, որ թուրքերը տեւական ժամանակ է՝ թշնամի են համարում յոյներին, հրեաներին, քրդերին, բայց դրանցից ոչ մէկին չեն ատում: Ատելութեան ծանր զգացումը վերապահուած է միայն հայերին (տե՛ս՝ «Իսրայէլցիների, Յոյների...» հետեւեալ նիւթը): Հայը՝ իր բոլոր կերպարներում՝ քրիստոնեայ, մահմեդական, ալեւի: Աւելին՝ սուննի, ալեւի, թրքախօս, քրդախօս հայը միշտ ծպտուած կամ բացայայտ թշնամի է դիտւում Թուրքիա պետութեանը եւ կազմաւորուող թուրք ժողովրդին: Թուրքիայում հայ ժողովրդի պատմութիւնը չիմացողի համար այնպիսի տպաւորութիւն է ստեղծւում, որ կարծէք հայերը, խաբելով թուրքական իշխանութիւններին, ծրագրաւորուած, կամաւոր եւ թաքուն կրօնափոխուել են՝ թուրքական հասարակութիւնը ներսից պայթեցնելու հեռահար նպատակով: Իսկ հայերի պատմութիւնը Թուրքիայում ամէնից աւելի չգիտի հենց թուրքական հասարակութիւնը:

Եթէ ընդհուպ մինչեւ Ի. դարի վերջերը թուրքական քաղաքական միտքը զգալիօրէն հանգստացել էր «թշնամի հայերի» նկատմամբ ատելութեան հրահրման անհրաժեշտութիւնից, ապա ժողովրդավարացող Թուրքիան մեծ թափ է հաղորդել այդ ատելութեանը: Քաղաքականութեան հասնող ատելութեան հրահրումն, անշուշտ, ուղեկցւում է փոքրամասնութիւնների, մասնաւորապէս հայերի նկատմամբ հանդուրժողականութեան կոչերի արտաքին ցուցադրութեամբ: Իրավիճակը շատ է յիշեցնում Ի. դարի սկզբի երիտթուրքերի սահմանադրութեան շրջանը՝ եղբայրութիւն, հաւասարութիւն, արդարութիւն, ազատութիւն հռչակագրերի ետեւում հիւսուող Ցեղասպանութեան ծրագրերը: Պաշտօնական մակարդակով ոչ ոք չի խոստովանում, որ հայերի իսլամացումը պետական ճնշման հետեւանքով էր, փոխարէնը բարձրաձայնւում է իսլամացած հայերից իբրեւ թէ Թուրքիային սպասուող սպառնալիքը: Պարզ է, որ այս վիճակն ազգայնականներին թելադրում է խստացնել իսլամացած հայերի նկատմամբ մերժողականութիւնը, որով ոչ միայն վերահաստատւում է կրօնափոխուած հայերի մեկուսացումը, այլեւ՝ համարկման դժուարութիւնները:

Ատելութեան եւ դրան հետեւող վախի ընդհանուր մթնոլորտը զգալիօրէն բարդացնում է իսլամացած հայերի ինքնութեան փնտռտուքի հանգրուանը: Եթէ քեմալական Թուրքիայում իսլամացած հայերը թաքուն յոյսեր էին փայփայում, որ իրենց առաջիկայ սերունդները կը

կարողանան այդ բարդ երկրում բաւականաչափ համարկուել եւ դառնալ պարզապէս քաղաքացի, ներկայումս նրանց համար ակնյայտ է, որ այդ հեռանկարը դեռեւս շատ հեռու է: Չափից աւելի յաճախ են մարդկանց յիշեցնում նոյնիսկ տատի, նախատատի հայ լինելու հանգամանքը:

Հայերի իսլամացման շրջանում Թուրքիայում բաւական էր «սուննի մահմեդական» լինելը: Եւ կրօնափոխուած հայերի զգալի մասը սուննիացել է՝ յարմարուելով առաջադրուած պահանջին (ալեւիացումը մասնաւոր իրավիճակի հետեւանք էր): Ներկայումս դա բաւարար չէ. Սուննիացումից զատ անհրաժեշտ է «թուրք» լինել: Եթէ հարիւր տարի առաջ «թուրք» էթնանունը դեռեւս յեղյեղուկ էր եւ առնուազն հասարակութեան մէջ զգալի չափով ստորակարգուած, ապա պաշտօնական քաղաքականութեան հետեւանքով այն իննսուն տարուայ ընթացքում ձեռք է բերել Թուրքիայում յաջողութեան հասնելու անհրաժեշտ պայմանի կարգավիճակ: Մինչդեռ իսլամացած հայերի մէջ անհամեմատ շատ են «քրդական», մասամբ՝ «արաբական» միջավայրի սուննիները, չխօսելով արդէն ալեւիացածների մասին: Արդիւնքում իսլամացած-քրդացած հայերը կրկին յայտնուել են թիրախաւորուած անցանկալիների շերտում եւ նոր դժուարութիւններ են առաջացել նրանց համարկման համար:

Չնայած ողջ Ի. դարի ընթացքում ամէն ինչ արուել է, որպէսզի իսլամացած հայերի տեղաշարժերը վերահսկուեն պետական մարմինների կողմից, սակայն բնաւ չի բացառուում, որ թուրքական իշխանութիւններն այսօր իսկապէս լիովին չեն տիրապետում իսլամացած հայերի տարածքային բաշխուածութեան եւ թուական տուեալներին: Մինչեւ 1930ականները հայկական ծագումով մարդիկ իրաւունք չունէին վերադառնալ իրենց ծննդավայրերը, իրենց փաստացի կեցութեան վայրերում պարբերաբար պէտք է ներկայանային ոստիկանութիւն եւ գրանցում կատարէին այդ մասին: Երեսնականներին իրականացուել են նոր աքսորներ, իսկ Դերսիմի բնակչութեան ջարդերի շրջանում՝ նաեւ կենդանի մնացած հայերի սպանութիւններ: 1940ականներին թոյլ են տուել աքսորներից վերադառնալ, բայց նոր կեցութեան վայրերում գրանցուել ոստիկանութեան տեղական բաժիններում: Սակայն 1950-70ականներին տեղի են ունեցել իսլամացած հայերի անկազմակերպ տեղափոխութիւններ եւ, հաւանաբար, պատկերը մասամբ խառնուել է: 1970ականներին, երբ թուրքական նոր սերունդն արդէն դպրոցական կրթութեան բերումով ամբողջովին «հայերը դաւաճանել են Օսմանեան պետութեանը» հիպնոսի տակ էին եւ նոյնիսկ կարգին տեղեակ չէին, «ովքե՞ր էին այս հայերը, որտեղի՞ց են եկել», ողջ երկրում «հայկական թեման» փակուած էր համարւում՝ հայերի գոյութեան մասին տեղեկութիւնների բացակայութեան պատճառով:

1950-80ականներին գաւառներում փրկուած հայերի զգալի մասն աստիճանաբար տեղափոխւում էր Ստամբուլ: Այդ թուականներին տեղա-

փոխուողները գլխաւորապէս Կիլիկիայի հայերն էին, ովքեր միայն Ստամբուլում պիտի հասկանային Ցեղասպանութեան ծաւալներն ու իրականութիւնը: Աւելի շուտ՝ Ստամբուլ էին տեղափոխւում հայերի՝ գլխաւորապէս քրիստոնէական ինքնութեամբ ընտանիքները, իսկ նրանց իսլամացած ազգականները մեծ մասամբ մնում էին աւելի սովոր պայմաններ ունեցող եւ ապահով թուացող գաւառական բնակավայրերում: 1970ականներից սկսած, այս տեղափոխութիւնը տարածւում է բուն արեւմտահայկական տարածքներում, յատկապէս լեռնային փոքր գիւղերում կղզեակներով մնացած հայերի վրայ՝ Բիթլիս, Էրզրում, Մուշ, Սասուն, Վան: Կիլիկիահայութիւնը եւ ստամբուլահայութիւնը նոյնիսկ տեղեակ չէր, որ Արեւմտեան Հայաստանի տարածքում փրկուած հայեր կային:

Այդ տարիների հայերի տեղափոխութիւնները եւ դրանից բխող փոփոխութիւնները գործընթացներ էին, որ միայն հայկական համայնքի համար էին նշանակալի եւ կարեւոր: Քեմալական Թուրքիայի կրօնական-աշխարհիկ բարդ ինքնութիւնների դիմակայութեան պայմաններում թուրքական հասարակութեան համար սրանք միանգամայն անտեսանելի եւ անկարեւոր երեւոյթներ էին: Սակայն հայութեան համար այս երեւոյթները ծնում էին նոր մարտահրաւէրներ, այդ թւում՝ թէ՛ իսլամացած, թէ՛ քրիստոնեայ խմբերի համար:

Ստամբուլում քրիստոնէական գործող համայնքը, նոյնիսկ ակամայ, նոր ազդակներ էր հաղորդում մեկուսացուած ու լուռ հայերին: Գաւառներից տեղափոխուածները սկսում էին հայերէն սովորել, վերաքրիստոնէանալ, այսինքն՝ առնչուել իրենց ինքնութեան մաս կազմող քրիստոնէութեան դաւանաբանական-ծիսական կողմին: Քրիստոնէութիւնը ազգային ինքնութեան վկայութիւնից զատ սկսում էր նոր կենցաղային էթնիկական մշակոյթ վերաձեւաւորել: Սրանք, իհարկէ, չէին կարող հետք չթողնել նրանց իսլամացած ազգականների հոգեբանութեան, հասարակական վարքի, կարգավիճակի, ներընտանեկան յարաբերութիւնների վրայ: Իսլամացածները երբեմն վախենում էին հանրային ուշադրութիւն գրաւել իրենց քրիստոնեայ ազգականների «անխոհեմ վարքի» պատճառով: 60ականներին սրան գումարուել էին նաեւ հայկական մշակութային հետքերը վերացնելու վերջին գործողութիւնները: Հենց այդ տարիներին է քանդուել գաւառների եկեղեցիների, վանքերի մեծ մասը, դատարկուել են գրադարանները: Հայկական թեման դեռ շատ վտանգաւոր էր, եւ կրօնափոխ հայերի համար երբեմն այս ամէնի հետեւանքը լինում էր քրիստոնեայ ազգականների հետ կապերի լիակատար խզումը՝ ընդհուպ մինչեւ թշնամանքի աստիճան, մէկ այլ դէպքում՝ դեռեւս քրիստոնեայ մնացած ազգականների իսլամացումն արագացնելու ջանքերը, երրորդ դէպքում՝ քրիստոնեայ հայերին միանալու մտատանջութիւնը:

Այս խմորումները, սակայն, աւելի «հայկական ներքին աշխարհի» գործօն էին: Հայերի համար իմաստալից ու կրքոտ յուզումներով, վախերով, տագնապներով հարուստ այս զգայական աշխարհն ամբողջովին դուրս էր Թուրքիայի բոլորովին այլ մտահոգութիւններով ապրող բնակչութեան «աշխարհից»: «Թուրքական աշխարհում» հասունանում էին նոր խնդիրներ՝ քրդական ինքնութեան զարթօնքը, ընկերային ձախ շարժումները, նոր ձեւեր էր ընդունում քեմալիզմի դէմ պայքարող կրօնական ազգայնականութիւնը: 1970ականներին Թուրքիայի պաշտօնական աշխարհիկացման ծրագրում նոյնիսկ փոփոխութիւն եղաւ: Ուժեղացաւ կրօնի գործերի վարչութեան գործունէութիւնը, միաժամանակ դպրոցներում մինչ այդ ընտրովի կրօնական կրթութիւնը դարձաւ պարտադիր: Թուրքական հասարակութեան համար այս բոլոր կարեւոր երեւոյթների շարքում բոլորովին աննկատ էին թուրքական հասարակութեան մաս չկազմող հայերի ֆիզիկական տեղաշարժերը. նրանց համար Թուրքիայում հայեր գոյութիւն չունէին: Հայերը դասագրքերում յիշատակուած անցեալի թշնամիներ էին:

Բնակչութեան համար «հայեր գոյութիւն չունէին», սակայն նրանք իրապէս գոյութիւն ունէին թուրքական յատուկ ծառայութիւնների համար: 1970ականների ձախ շարժումները ճնշելիս, քրդական ինքնութեան զարթօնքը ճնշելիս թուրքական գաղտնի գործակալութիւնները «չէին մոռանում» բոլորովին անպաշտպան հայերին, որոնց անհետացումներն անգամ չէին դառնում եւ չէին դառնալու հանրային իրազեկման մաս: Քրդական շարժումները միանգամայն յարմար առիթ էին «թաքնուած հայերին» հրահրողներ համարելու, եւ ծայրամասերում սուս ու փուս գոյատեւող, բայց որպէս հայ ապրողների որս էր սկսուել: Մարդիկ յաճախ պարզապէս «անհետանում» էին: «Անհետացողների» ճակատագրով հարազատները չէին համարձակւում հետաքրքրուել: Հասկանում էին, որ դա յատուկ ծառայութիւնների գործն է: Եթէ նոյնիսկ այդպէս չէր, դա հաստատուն համոզմունք էր: «Մինչեւ 1970ականները վատ չէր, յետոյ հայերին որսում էին» ձեւակերպումը յաճախ է հանդիպում իրենց ոչ-հեռաւոր անցեալը յիշող կրօնափոխ հայերի պատմութիւններում: Արեւմտեան Հայաստանի՝ Արեւելեան Թուրքիայի տարածքի, իմ բոլոր զրուցակիցներն իրենց վրայ զգացել են այդ կտրուկ բացասական փոփոխութիւնը: Եթէ մինչ այդ հայերի մասին բացարձակ լռութեան պայմաններում առիթ էր տրուել մասնաւոր յարաբերութիւնների միջոցով աստիճանաբար ձուլուել կամ լռելեայն սերնդէ-սերունդ փոխանցել հայկական ինքնութեան փշրանքներ, ապա 1970ականներին նոյնիսկ ամենահեռաւոր, խուլ գիւղերում առնուազն գիտէին, որ յարմար պահ է ստեղծուել կրկին խլել հայերի ունեցուածքը, եւ հայ սպանելը կարող է պատասխանատուութիւն չառաջացնել: Այդ տարիներին է վերաբերում Սասունի, Բիթլիսի, Մուշի, Ադիամանի

հայերի զգալի մասի արտագաղթը: Հայերն շտապում էին յայտնուել մեծ քաղաքներում, որտեղ իրենց անցեալի վերաբերեալ տեղեկութիւնները յայտնի չէին: «Թշնամի հայերի» թեման վերադարձել էր բարձրաձայնուող քաղաքականութիւն: Միաժամանակ նոյն տարիներին խորացաւ իսլամացումը: Ազգակցական խմբերի իսլամացուած հատուածներն ստիպում էին իրենց քրիստոնեայ մնացած ազգականներին արագօրէն իսլամանալ եւ մոռանալ իրենց կապը հայութեան հետ: Ոչ ոք երբեք չի կարողանայ վերականգնել այդ տարիներին անհետացած հայերի քանակը: Ստամբուլի հայերը նոյնիսկ չգիտէին Արեւմտեան Հայաստանում առկայ հայութեան գոյութեան փաստը:

Ժողովրդավար թուրք մտաւորականները 1970ականներին վերադարձած «հայկական գործօնը» սովորաբար կապում են բացառապէս թուրքական հանրութեան միջավայրի՝ ԱՍԱԼԱի գործողութիւնների նկատմամբ թուրքական ներքին լսարանին հասցէագրուած հռետորաբանութեան: Այդ տարիները նաեւ ձայնասփիւռի եւ հեռուստատեսութեան զանգուածայնացման, ուրեմն նաեւ տեղեկատուութեան բազմազանեցման տարիներ էին: *«1960ականների Թուրքիայում հայկական հարցը գոյութիւն չունէր: 1970ականների Թուրքիայում մօտեցումը կատարելապէս փոխուում է: Հայկական հարցը բիւրեղացնում է օտարի նկատմամբ վախը. կրօնական մի ատելութիւն, որն ուշացումով ու աստիճանաբար է տարածուել, սակայն որն ի վերջոյ հաստատուել է: Հայկական հարցն իր մէջ խտացնում է ազգայնականութիւնը՝ էթնիկ ազգայնականութիւնը: Երիտասարդ սերունդները նոյնպէս աւելի ու աւելի մոլեռանդ ազգայնական են դառնում հայկական հարցի առնչութեամբ»*,- այսպիսին է հայկական թեմայի ուժականութիւնը թուրք մտաւորական Ահմէթ Ինսէլի ճանաչած Թուրքիայում[2]: Այն զգալիօրէն տարբեր է Թուրքիայի հայերի ընկալած՝ Թուրքիայում «հայկական գործօնի» ուժականութիւնից:

Փաստօրէն հենց 1960-70ականներին են հիմնականում սկսուել բուն Արեւմտեան Հայաստանի տարածքներում մնացած քրիստոնեայ եւ իսլամացած հայերի տեղաշարժերը: Դրանցից իւրաքանչիւրն ունեցել է իր դրդիչ որոշակի պատմութիւնը՝ հողն են խլել, գիւղում անհասկանալի պատճառով հայ է զոհուել, աղջիկ են փախցրել, կեանքի համար սպառնալի նոր իրավիճակ է առաջացել եւն.: Բոլոր դէպքերում խախտուել է այն փխրուն հաւասարակշռութիւնը, որ ժամանակի ընթացքում աստիճանաբար ձեւաւորուել էր այս կամ այն բնակավայրում: Ուշագրաւ է նաեւ, որ այդ թուականներին Թուրքիայի գաւառներում այս կամ այն չափով աշխուժացել է սեփականութիւնների գրանցման գործընթացը, իսկ հայերը, այդ թւում իսլամացած հայերը, որպէս կանոն պարզապէս լքել են իրենց կողմից օգտագործուող եւ ոչ-պաշտօնապէս իրենց սեփականու-

թիւնը համարուող անշարժ գոյքը՝ բնակարանը, տունը, հողը, այգին… Այդ մասին յիշում են յատկապէս Սասուն-Բիթլիսի տարածքի մեր զրուցակիցները: Հնարաւոր է, որ այս ներքին տեղաշարժերը որոշ չափով դուրս են մնացել պետական մարմինների ուշադրութիւնից: Թերեւս դրանով պէտք է բացատրել 2004 Դեկտեմբեր 22ով թուագրուած այն փաստաթուղթը, որով թուրքական իշխանութիւնները տեղական իշխանութիւններին հրահանգում են պարզելու Թուրքիայի արեւելեան եւ հարաւ-արեւելեան շրջաններում հայկական արմատներ ունեցող քաղաքացիների իրական թիւը: Այս փաստաթղթի մասին տեղեկութիւն հրատարակուեց 2011ին գաղտնի փաստաթղթերի հրապարակմամբ զբաղուող WikiLeaks կայքում[3], որում ներկայացուած փաստաթուղթը Թուրքիայում ԱՄՆ դեսպանատան տեղեկութիւնն է յիշեալ հրահանգի մասին՝ ԱՄՆի պետքարտուղարութեանը:

Բոլոր իսլամացած հայերը միշտ վստահ են եղել, որ թուրքական յատուկ ծառայութիւնները միջոցներ են ունեցել ծագումով հայերին մշտապէս վերահսկողութեան տակ պահելու համար: Այդ մասին նրանք բազմաթիւ փաստարկներ են բերում իրենց կեանքում տեղի ունեցած դէպքերից: Այս համոզմունքը նրանց մի մասին հարկադրել է «Հռոմի պապից աւելի կաթոլիկ լինել», լրացուցիչ ջանքեր գործադրել իրենց անվերապահ նուիրուածութիւնը եւ հնազանդութիւնը ցոյց տալու: Միւսներն, ընդհակառակն, համարել են, որ երբեք ու ոչ մի պարագայում իրենք չեն դառնայ Թուրքիայի լիիրաւ քաղաքացի եւ որքան շուտ կարողանան ազատուել այդ երկուութեան բեռից, այնքան լաւ: Կան նաեւ երրորդները: Այս խումբը իսլմութիւնն օգտագործել է բացառապէս ինքնապաշտպանական նկատառումներով եւ ընտանիքում սերնդէ սերունդ պահպանել է հայկական ինքնութիւնը: Նրանց մի մասը դա արել է «բաց», այսինքն երբեք չի ապրել կրօնական չափանիշերով, չնայած երբեք հակակրօնական ցուցադրութիւն նոյնպէս չի արել: Միւսներն, ընդհակառակն, հանրութեան համար ցուցադրել են իսլամական կրօնական հաւատարմութիւն, պահպանել են կրօնական տեսանելի չափանիշերը, սակայն ընտանիքում՝ «փակ տարածքում» պահպանել են քրիստոնէական չափանիշեր կամ, յամենայն դէպս, «հայ» մնալու ջանքեր են գործադրել: Միայն այս վերջին խումբն է, որոնք «գաղտնի» կամ «ծպտեալ» հայեր են[4]: Անշուշտ յիշեալ խմբերից զատ այսօր կան իսլամացած հայեր, ովքեր այս հարցերին յատուկ գիտակցական մօտեցում չեն ունեցել եւ մինչեւ այսօր չունեն, այսինքն՝ «ընտրութիւն» չեն կատարել: Նրանք իսլամութիւնը ժառանգել են Ցեղասպանութեան շրջանում կրօնափոխուած ծնողներից, ովքեր ամէնից աւելի յաճախ վաղ մանկական հասակում իսլամացել են իրենց որդեգիր ընտանիքներում, մեծացել են այդ միջավայրում եւ մասնաւոր երկուութիւն չեն ունեցել,

չհաշուած այն կենցաղային-առօրէական դէպքերը, երբ որեւէ անկարեւոր բախումնային իրավիճակում իրենց հասցէին լսել են «գեաւուր», «գեաւուրի որդի» եւ առհասարակ «գեաւուրական» ծագումը յիշեցնող բառեր: Միաժամանակ այսօր «իսլամացած հայերի» թիւը եւ որակը յաճախ քննարկւում է նաեւ «հայ տատ» կամ «հայ պապ» ունեցած անձանց ինքնաբացայայտմամբ, դէպքեր, որ ամէնից աւելի յաճախ ի յայտ են գալիս քրդական միջավայրերում, որտեղ երբեմն «հայկական արիւնը» կամ լրացուցիչ քաղաքական աղբիւր է, կա՛մ «հայութեան հետ կամուրջ», կա՛մ տեղական իւրայատուկ քաղքենիութիւն:

2000ականներից, հենց որ Թուրքիան յայտարարել է Հայաստանի հետ երկխօսութեան իր մտադրութեան մասին, թուրքական ԶԼՄները[5] զգալի չափով անդրադարձել են «հայերի նկատմամբ ատելութեան» թեմային: Որոշ վերլուծաբաններ փորձել են հասկանալ, թէ ինչպէ՛ս կարող է Թուրքիայում յաղթահարուել այդ ատելութիւնը, այլք այդ ատելութեամբ փորձել են կասկածի տակ դնել իշխանութիւնների մտադրութիւնը, երրորդները պարզապէս հաստատել են ատելութեան փաստը եւ դրա աճը, չորրորդները պարզապէս խթանել են այն եւն.: Որոշ թուրք ժողովրդավարներ նոյնիսկ վախ են արտայայտել հայերի նկատմամբ ատելութեան ծաւալի եւ դրա աճի մասին: Ընդ որում ակնյայտօրէն հայերի հանդէպ ատելութեան թեման աւելացնում է ատելութեան ծաւալը: 2004ով թուագրուող WikiLeaks կայքի վերոյիշեալ փաստաթուղթը, անցեալի հայկական արմատներով սուննի քաղաքական գործիչներին վարկաբեկելու, քրդական զինեալների հայկական ծագման երբեք չնուազող թեմայի հետ միասին, եւ առհասարակ հայկական անցեալը ուրուականի նման խաղարկելու փաստացի քաղաքականութիւնը հաստատում են, որ իշխանութիւններն իսկապէս ինչ որ քաղաքական ծրագիր են հասունացնում իրենց իսկ ջանքերով դեռեւս չհամարկուած իսլամացուած հայերի նկատմամբ: Յամենայն դէպս, իսլամացած հայերն այդ տագնապներն ունեն եւ նրանցից շատերն իրենց «հայկական հետարքրութիւններն» աւելի ու աւելի խոր են թաղում:

Միշտ չէ, որ կարելի է «գտնել» նախկին հայերի վերջնականապէս մահմեդականացած ներկայիս սերնդի ներկայացուցիչներին: Նրանց զգալի մասը, յատկապէս թրքացածները, սովորաբար գերադասում են խուսափել հայերի հետ շփումներից: Չուզենալով կապեր պահպանել իրենց արդէն զգալիօրէն հեռացած քրիստոնեայ ազգականների հետ, նրանք յաճախ չեն արձագանգում այդ ազգականների երաշխաւորած ծանօթութիւնների առաջարկին: Անհամեմատ հեշտ է գնալ իսլամացած հայերի գիւղ եւ այնտեղ փորձել պատահական ծանօթութիւններ հաստատել: Բայց «Հռոմի պապից աւելի կաթոլիկ լինելու» փորձը տուեալ դէպքում աշխատում է հայ հետազօտողի դէմ. նրանք հաւանաբար

վախենում են Թուրքիայում յայտնի գործակալական ցանց ունեցող յատուկ ծառայութիւնների ենթադրեալ իմացութիւնից եւ սկզբունքօրէն գերադասում են հայերի հետ չառնչուել: Ինձ շատ դժուար էր համոզել նրանցից շատերին՝ զրուցել իրենց կեանքի մասին: Նրանց մեծ մասը զրոյցի այդ հրաւէրն ընկալում է որպէս զրոյց «իսլամական կեանքի» մասին, դա համարում է քաղաքական թեմա եւ չի ուզում այդ մասին խօսել: Այն քչերը, ովքեր համաձայնեցին զրուցել, կտրուկ առարկեցին զրոյցը ձայնագրելուն եւ առաւել եւս հրատարակելուն: Այն քիչը, որ այստեղ հրատարակւում է, քաղուած է գլխաւորապէս կա՛մ վերաքրիստոնէացած հայերի պատմութիւններից, կա՛մ՝ փաստաթղթերով մահմեդական, բայց հայկական էթնիկական ինքնութեամբ եւ Թուրքիայի հայկական միջավայրում (գլխաւորապէս Ստամբուլում) իրենց «տեղը փնտռող» հայերի պատմութիւններից: Այս մարդիկ հանրայնօրէն «ինքնաբացայայտուած են»:

Առանձին քննարկման հարց է հայկական միջավայրում մահմեդական հայերի «տեղի փնտռտուքի» թեման: Սա պակաս չի յուզում այն իսլամացած հայերին, ովքեր թէ՛ զգայական, թէ՛ վարչական զգալի դժուարութիւններով նոյնիսկ վերաքրիստոնէանալով իրենց մերժուած են զգում Թուրքիայի հայկական համայնքի կողմից: Ստամբուլի մտաւորական հայուհիներից մէկը պատմեց դերսիմցի մի տղայի մասին: 2000ին նա, ինքն իր դէմ երկար պայքարելուց յետոյ, անձայն դիմում է դատարան, խնդրելով իր անձնագրում «մահմեդականի» փոխարէն գրել «քրիստոնեայ», հիմնաւորելով, որ իր պապերին հարկադրել են իսլամանալ եւ իր իսլամութիւնը իր պապի նկատմամբ կիրառուած բռնութեան հետեւանք է: Դատարանի որոշմամբ անձնագիրը փոխւում է: Ողջ գործընթացը տեւում է երկու շաբաթ, որից յետոյ սկսւում է տղային առաջին, բուն հայկական, տառապանքը: Տղան գալիս է պատրիարքարան՝ խնդրելով իրեն եւ իր ընտանիքին մկրտել եւ այստեղ վրդովւում են, որ նա «ինքնուրոյն քրիստոնեայ է դարձել»: Պէտք է ուսուցում անցնէր, պէտք է որոշուէր, արդեօք ինքը «հասունացե՞լ է» քրիստոնեայ դառնալու համար: Սկսւում է քաշքշուկ. տղային ուղարկում են իշխանութիւններից թոյլտուութիւն բերելու, նա բացատրում է, որ ինքն արդէն դատարանով հարցը կարգաւորել է… Այս դէպքի առթիւ հրաւիրւում է Թեմական Խորհրդի նիստ, կարծիքները բաժանւում են: Նիստին մասնակցող մտաւորական հայուհին փորձում է հիմնաւորել տղայի իրաւունքը, ասում է, որ իրեն անձամբ մկրտել են մանկահասակ շրջանում, երբ ինքը ոչինչ չգիտէր եւ չէր հասկանում, որ ինքն անտարբեր է իր կրօնական պատկանելութեանը, բայց ահա այս տղան գիտակցուած ընտրութիւն է կատարել… Տղան այդպէս էլ վերադառնում է Դերսիմ: Անշուշտ պատրիարքարանի դիրքորոշումն զգալի չափով - եթէ ոչ

ամբողջովին - պայմանաւորուած է թուրքական իշխանութիւններից ունեցած վախով՝ «յանկարծ մի բան դուրս չգայ»: Միւս կողմից միանգամայն հնարաւոր է, որ հայոց պատրիարքարանը ներքին կարգով բանաւոր զգուշացում ունի ձեռնպահ մնալ «վերահայացումը» խրախուսելուց: Արդիւնքում զուգահեռաբար ընթանում են տարատեսակ «վերահայացումներ». բողոքական եկեղեցիներում, եւրոպական երկրների եկեղեցիներում, երբեմն էլ՝ Հայաստանում: Բայց զանգուածայինն այն է դառնում, որ խուսափելու համար թէ՛ թուրքական վարչական քաշքշուկից, թէ՛ հայկական եկեղեցիների խիստ զգուշաւոր կեցուածքից, ինչպէս նաեւ եւրոպական միջավայրերի հետ շփուելու արդիւնքում, մահմեդական հայերի առնուազն մի մասի մէջ հասունանում է ինքնութեան արտայայտման մէջ էթնիկ պատկանելութիւնը կրօնականից անջատելու ձգտումը,- «եղբայր, ես հայ եմ, բայց ի՞նչ կայ որ մահմեդական եմ»: Իրականում այստեղ առկայ են ընտրութեան դժուարութեան մի շարք նրբերանգներ.

1. Ոմանք չգիտեն ինչ է «քրիստոնեայ» լինելը, եւ ինչպէս են քրիստոնեայ լինում: Արդէն երկրորդ-երրորդ սերունդը մահմեդական է, գիտի այդ կենցաղը, ապրում է այդ միջավայրում եւ վախենում է փոփոխութիւնից՝ իր անյայտ հեռանկարներով: Բայց կ'ուզենար արդէն բացայայտ հայ լինել, ոչ թէ կիսաթաքուն կամ թաքուն հայ.
2. Ոմանք շարունակելու են ապրել իրենց մահմեդական հարազատների, ազգականների միջավայրում, որտեղ որոշակիօրէն իրենց «հայ» լինելուն դէմ չեն, բայց խորթ կը լինի նրանց քրիստոնեայ լինելը.
3. Ոմանք վստահ չեն Թուրքիայում կատարուող փոփոխութիւններով, վախենում են կապերը խզել Թուրքիայի իսլամական աշխարհից: Նրանց ընկերային յիշողութեան մէջ «քրիստոնեան այդ երկրում դատապարտուած է» գիտակցութիւնն ամուր նստած է.
4. Շատերը չեն ուզում գործ ունենալ թուրքական պետական մարմինների հետ, իրաւաբանօրէն ապացուցել իրենց բռնի իսլամացման դէպքը եւ պաշտօնապէս ստանալ ինքնութեան փոփոխութեան իրաւունք: Չնայած օրէնքը թոյլ է տալիս, սակայն պետական մարմինները սովորաբար դժկամութեամբ են ընդառաջում, ստորին օղակների «չինովնիկ»ները կոշտ են վարւում դիմորդների հետ, ձգձգում են, դժուար գտնուող ապացոյցներ են պահանջում եւն.
5. Գաւառներում որոշ վայրերում արխիւները կա՛մ չեն պահպանուել, կա՛մ՝ բանաւոր ասում է, որ չեն պահպանուել, եւ նախնիների ինքնութեան մասին տեղեկանքները հնարաւոր չի լինում ձեռք բերել.

6. Գաւառներում շատերը պարզապէս ամաչում են, անյարմար են զգում ինքնութեան փաստաղթերը հաւաքել մի միջավայրում, որտեղ վարժուել են իրենց մահմեդական համարել.

7. Ընդհուպ մինչեւ 1920ականները Թուրքիայում գրագրութիւնը օսմաներէնով էր, արաբատառ, իսկ այսօրուայ յատկապէս գաւառների ստորին օղակի պաշտօնեաները չեն տիրապետում այդ լեզուին, եւ դա զգալիօրէն դժուարացնում է նախնիների ինքնութիւնների մասին վկայականների ձեռք բերումը.

8. Հայերն իրենք օտարում են մահմեդական հայերին, եւ նրանց զգալի մասը վախենում է, որ վերահայանալու դէպքում օտարուած կը լինի թէ՛ հայկական, թէ՛ իսլամական միջավայրերից, քանի որ փորձը ցոյց է տալիս, որ հայկական միջավայրից յաճախ օտարւում են նոյնիսկ քրիստոնեայ դարձած նախկին մահմեդականները:

Յիրաւի, համարեա հարիւր տարուայ ընթացքում հասարակութեան մահմեդական հատուածում որոշ չափով համարկուած այս մարդիկ վախենում են երկու կողմից էլ մերժուած եւ օտարուած լինել, իսկ իրենք նոյնիսկ առանձին համայնք չեն, ցրուած են ողջ Թուրքիայի տարածքում եւ թողնուած են իրենք իրենց զգացմունքների հետ մեն-մենակ:

Չի կարելի ասել, թէ Ստամբուլի հայկական համայնքին այս խնդիրները չեն յուզում: Այստեղ էլ կատարւում են ներքին խմորումներ, արւում են հարցադրումներ, փնտռւում են պատասխաններ. *«Հիմա մենք ընդունելու՞ ենք մահմեդական հայերին, թէ՞ մերժելու ենք նրանց: Ինչու՞ թրքախօս, ռուսախօս... քրիստոնեան ընդունելի է, մահմեդականը՝ ոչ, եթէ վերջինս իրեն հայ է համարում եւ հայ է զգում: Թող հայկական մզկիթներ լինեն, հայկական մոլլաներ....Կան, չէ՞, քրիստոնեայ թուրքեր: Թուրքերը բոլորին ընդունում են, բոլորին թուրք են անուանում, ով ասում է «ես թուրք եմ»՝ «գլխիս վրայ տեղ ունես»,- ասում են: Իսլամ քրդերին չեն ուզում, բայց ցանկացած կրօնի թուրքերին ուզում են: Թուրքերը իսլամացած հայերին էլ չեն ուզում, նրանք ուզում են թրքացածներին, կարեւորը թուրք լինելն է...ո՞վ եւ որտե՞ղ է որոշելու այս հարցերին մեր վերաբերմունքը: Ինչպէ՞ս պիտի այդ իսլամացածներն իմանան հայութեան վերաբերմունքն իրենց նկատմամբ: Ո՞վ ունի իրաւունք այդ վերաբերմունքը որոշելու...»* եւն., եւն.: Այս երեւոյթների նկատմամբ Ստամբուլում հաստատուած մահմեդական հայերի վերաբերմունքը ցայտուն արտայայտուած է ստորեւ հրատարակուող պատմութիւնների մէջ:

Իսլամացած հայերի մէջ միանգամայն մասնաւոր խումբ են ալեւիացած հայերը: Նրանց մի մասը, յատկապէս քրմանջախօս ալեւիների մէջ ապրողները, մեծ չափով մօտ են քրդական ինքնութեանը, եւ սովորաբար նոյնիսկ չեն ուզում անդրադառնալ իրենց հայկական

ծագման խնդիրներին: Այլ է Դերսիմում եւ շրջականերում զազախսս ալեւիների մէջ ալեւիացած հայերի վիճակը: Նախ՝ նրանց մէջ հայկական էթնիկ միաւորը մնացել է ընդհուպ մինչեւ 1938ի Դերսիմի բնակչութեան ջարդերը: Պահպանուել են ամբողջական հայկական, հայախսս գիւղեր, աշխատելիս է եղել նոյնիսկ Դերսիմում հռչակաւոր Հալուորի Ս. Կարապետ վանքը՝ հայերի եւ ալեւիների հաւասարապէս պաշտամունքի առարկան: Նրանց վերջնական ալեւիացումը տեղի է ունեցել այդ դէպքերից յետոյ, երբ հայերն ակնյայտօրէն դարձան դերսիմեան ջարդերի առաջին թիրախը: Այդ տարիներին նոյնիսկ Խարբերդում, Երզնկայում սուննի-իսլամացած շատ հայեր ենթարկուեցին նոր աքսորների:

Դերսիմում հայերի ալեւիացումը զգալիօրէն հին նախապատմութիւն ունի: Հայերի զանգուածային կրօնափոխութիւնը Դերսիմում սկսուել էր առնուազն ԺԷ. դարից[6] եւ ԺԹ. դարում հասել էր մի աստիճանի, որ ոչ միայն արտաքուստ դժուար էր տարբերել հայերին ու ալեւիներին, այլեւ ալեւիական ընկերային-մշակութային կեանքը մեծ չափով նման էր հայկականին: Կրօնափոխութիւնը սովորաբար անհատներով չէր, այլ՝ ամբողջ բնակավայրով, մեծ մասամբ՝ գիւղերով: Ալեւիացող եւ սուննիացող հայերն արագօրէն ներառուում էին Դերսիմի ներքին համապատասխան ընկերային շերտերի մէջ՝ այս կամ այն աշիրէթի շրջանակներում: Նախկին հայերը երբեմն առանձին աշիրէթներ էին կազմում եւ, հետեւելով Դերսիմի ներքին կանոններին, զէնքի ուժով իրենց տեղն էին գրաւել միւս աշիրէթների շարքում: Ալեւի կոչուող բնակչութեան զգալի մասը հիանալի յիշում էր իր հայկական ծագումը, աւելին, ընթացքի մէջ էին իրենց հայ մնացած ազգականների հետ դեռեւս չխզուած կապերը: Երբեմն նոյն տոհմի մի մասն ալեւի էր համարւում, միւս մասը՝ հայ: *«Պապս կը պատմէր, որ իր մեծ պապի հօրեղբայրը Հալուորու Ս. Կարապետ վանքին երբեմնի վանահայրն եղած է»*[7], *«... մեր նախահայրերն էլ հայեր են եղել, նոյնիսկ իմ հօրեղբօր տղաները..., թէեւ խօսում են ալեւիերէն[8], պահում են իրենց ազգային ծագումը»*[9], Տէր Ովան *«գիւղի քուրդ բնակիչները երբեք չէին ուրանում իրենց [հայկական] ծագումը եւ Աղուջանների օջախի փիրը*[10] *՝ Տեւրէշ-Կուլապիի թոռ Սէիդ-Ալին, հպարտութեամբ պատմում էր իրենց օջախի փիրի՝ Տէր-Ովանի մասին, որը որպէս վանահայր բնակուելիս է եղել Տիրամօր վանքում»*[11], *«Գարապաշան աշիրէթի պետը, որ կոչւում էր Թոռնէ Գարապաշի Սուլէյման աղա, նախկին քահանայի ժառանգներից էր»*[12] եւն.: Անդրանիկը գրում է, որ *«Տերսիմցիներուն եթէ ոչ բոլորը, գէթ մեծ մասն այն կարծիքին է, որ իրենց նախահայրերը հայեր են»* եւ յիշատակում օրինակներ[13]:

Հայերի ալեւիացման դանդաղ, տեւական գործընթացը յանգեցրել էր Դերսիմում հայերի եւ ալեւիների կենցաղային մեծ ընդհանրութիւնների

ձեւաւորման: Ալեւիացած հայերը շարունակում էին պահպանել բազմաթիւ քրիստոնէական եւ նոյնիսկ նախաքրիստոնէական ծէսեր, դերսիմեան «ալեւիզմի» մէջ բազմաթիւ քրիստոնէական եւ մաքուր հայկական տարրեր են համալուծուել: Ալեւիական բանաւոր աւանդազրոյցներում ընդհանրանում են հայերի եւ Դերսիմում յայտնուած ալեւիների ինչպէս ծագումնաբանական, այնպէս էլ ընկերային-կրօնական անցեալը[14]: Դերսիմի ալեւիների «մասալաների»՝ պատմութիւնների դերակատարների մեծ մասը տեղական «հայ քեշիշը» եւ եկուոր «բաբան» են, Ս. Գէորգը («Հազրէթ Իլիաս», «Խըդրը Էլիա»), Ս. Սարգիսը («Հազրէթի Խըդրը»), Անահիտ Աստուածուհու պաշտօնները ժառանգած «Անա Ֆաթիման» եւ Անահիտի նախկին սրբավայրերը, նոյնիսկ՝ Մեսրոպ Մաշտոցը («Մասրուպ») եւն., ովքեր տարբեր ձեւերով դերեր ունեն դերսիմցիների պատմական անցեալում: Ժողովրդական ստուգաբանութեամբ Դերսիմ բառն ինքը ԺԷ. դարի սկզբներում ալեւիացած հայ քահանայ Տէր Սիմոնի (Տերսիմոն, Դերսիմոն) անունից է սերում: Հայկական Հալուորի Ս. Կարապետ վանքը, «որ միակ կենդանի վանքն է Տերսիմի մէջ»՝ մեծ նշանակութիւն ունէր *«տերսիմցի հայերուն եւ ղրզբլբաշներուն*[15] *առջեւ… Նա՝ Հալուորու Ս. Կարապետ, ամէնու համար է, իսկ ամէնը՝ նրա համար: Ամէնքն ալ՝ հայ եւ քուրդ, հաւասարապէս կը պաշտեն նրան եւ տարին մէկ-երկու անգամ մեծագին նուէրներով եւ զոհերով ուխտ կու գան Տերսիմի ամէն կողմերէն»*[16]: Նկատի ունենալով քրիստոնէական յուշարձանների, գործող եկեղեցիների հետ կզլբաշների կապուածութիւնը, Անդրանիկը գրում է. «դերսիմցիների հաւատը հայից զօրաւոր է»[17], «Քրդերը հայերից աւելի հաւատ ունին»[18]:

Եթէ նոյնիսկ հայերի ալեւիացման այս ծաւալները ենթակայական ընկալման հետեւանք էին, վստահաբար դրանք պէտք է տագնապներ առաջացնէին հակահայ ծրագրեր կրող իշխանութիւնների մէջ՝ հայ-ալեւիական հաւանական քաղաքական միութեան շուրջ: 1890ականներին սուննի-քրդական «համիդիէ» զինուած ջոկատների կողմից իրականացուած հայկական ջարդերին Դերսիմի «քուրդ» համարուող մի շարք ալեւի-կզլբաշական ցեղախմբեր հակասուննիական դիրք էին գրաւել եւ չէին մասնակցել հայերի սպանութիւններին[19]:

Ալեւի կզլբաշների հայամէտ թուացող դիրքորոշումը չէր կարող չանհանգստացնել հակահայ քաղաքականութիւն վարող իշխանութիւններին: Թուրքերին յայտնի էր այն ժամանակ մեծ տարածում ունեցող պատկերացումը՝ *«ալեւիների եւ հայերի միջեւ տարածութիւնը սոխի կճեպից մեծ չէ»*[20]:

Շատ հաւանական է, որ Դերսիմի ալեւի-կզլբաշների հանդէպ իշխանութեան քաղաքական վերաբերմունքն արտածւում էր եւ առնուազն վերջին հարիւր յիսուն տարիներին արտածուել է ոչ միայն

սուննիզմին հակառակուող ալեւիական ինքնամեկուսացումից, այլեւ հայ-ալեւիական մասնաւոր անցեալից: Բոլոր դէպքերում, 1915ին հայերի նկատմամբ իրականացուած Ցեղասպանութեան նախապատրաստման եւ իրականացման գործողութիւնները մեծ տագնապներ էին առաջացրել Դերսիմի ալեւիների շրջանում: Հաստատուն համոզմունք կար, որ յաջորդ քայլը լինելու է իրենց ալեւիական ինքնութիւնից հրաժարման հարկադրանքը, եթէ ոչ՝ կոտորածները[21]: Դա լուրջ պատճառ էր, որ Դերսիմի ալեւի հաւաքականութեան «հայկական ծաւալը» զգալիօրէն «նուազեցուի», առնուազն 1915ին եւ դրանից յետոյ այդ մասին չխօսուի: Թէ՛ ալեւիները, թէ՛ քսաներորդ դարից առաջ ալեւիացած հայերը շահագրգիռ էին Դերսիմի ալեւիների «հայկական ծաւալը» շուտափոյթ մոռացութեան տալու, որքան էլ այդ «հայկական ծաւալը» նշանակալի չէր:

Սակայն որքան էլ Դերսիմի թէ՛ հայերի, թէ՛ ալեւի-կզլբաշների համար Ի. դարի սկզբին ցանկալի էր հայկական ներկայութիւնը ալեւի-կզլբաշների հաւաքականութեան մէջ առաւելագոյնս մոռացնել, այնուամենայնիւ Ի. դարի իրողութիւնները՝ 1915ի Ցեղասպանութիւնը, 1938ի Դերսիմի ալեւիների եւ հայերի կոտորածները, դրանց յաջորդած հետապնդումները նոր հայկական համալրումներ առաջացրին Դերսիմի ալեւիների մէջ՝ առաջ բերելով ինքնութեան փնտռտուքի նոր խնդիրներ[22]: Այստեղ ընթերցողին են ներկայացւում Դերսիմի ալեւիացած հայերի հինգ պատմութիւններ, որոնցից իւրաքանչիւրն այս կամ այն չափով տիպական-ձեւաչափային է եւ հնարաւորութիւն է տալիս հասկանալու դերսիմեան գործընթացները:

Թուրքիայում իսլամաց(ու)ած եւ ծպտեալ հայերի թեման նոր է սկսել հետազօտուել, սակայն արդէն իսկ ի յայտ է բերում բազմաթիւ հարցականներ, որոնց պատասխանները փնտռւում են աւելի շատ հենց մահմեդականացած հայերի կողմից: Ինչ վերաբերում է Թուրքիայում մահմեդական հայերի թուին, որը ծայրայեղօրէն շահարկւում է խնդրով շահագրգիռ բոլոր խմբերի կողմից, ապա այն, կարծում եմ, ամենաառաջին խնդիրը չէ: Բոլոր դէպքերում պէտք է ընդունել, որ խօսքը վերաբերում է ոչ միայն Հայոց Ցեղասպանութեանը յաջորդած համարեա հարիւր տարուն, այլեւ դրանից դեռ շատ աւելի վաղ սկսուած՝ համիդեան ջարդերին, ԺԹ. դարի կէսերին, սկզբին, նոյնիսկ ջալալիների շրջանից (ԺԶ.-ԺԷ. դարեր) մահմեդականացած հայերի սերունդների մասին, յամենայն դէպս նրանց, ում ընտանեկան յիշողութիւնը պահել է հայկական ծագման մասին տեղեկութիւնը եւ ում զգայական ընկալման մէջ ու ընկերային միջավայրում այդ յիշողութիւնը որեւէ դեր՝ դրական կամ բացասական, խաղում է:

# ԴԱՆԱԲՈՒՐԱՆ ԳԻՒՂԻ ՄԻԱԿ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ

## (Մենք այստեղ բոլորի նման ենք, ալեւի ենք, ալեւին էլ մուսուլման է: Ուրեմն ինչո՞ւ են գեաւուր ասում)



**Մուստաֆա Ասլանփենչալին**

*2011ին Դերսիմի Մազկերտի շրջանի հայկական համարուող նախկին Խոզըքէօյից (Խոզագիւղ, այժմ Ալանեազի) ոչ-հեռու գտնուող Դանաբուրան գիւղում միայն մէկ հայ ընտանիք կար: Միւսները, ինչպէս մեզ ասացին, քրմանջախօս կամ թրքախօս ալեւիներ են:*

«Միակ հայ ընտանիք»ի տանտէրը նոյնպէս թրքախօս ալեւի էր, ինչպէս գիւղի այլ բնակիչներ, պարզապէս, մարդիկ գիտէին, որ նա հայ է: Միւսների էթնիկութեան այդպիսի շեշտուած տեղեկութիւն չկար, աւելի յայտնի էր, թէ ով որտեղից է եկել:

Դանաբուրան գիւղը առաջին հայեացքից տարբերւում էր զազախօս ալեւիների գիւղերից: Այստեղ կանանց դէմքն ու գլուխներն աւելի փակ էին, քան Դերսիմի զազախօս ալեւիների գիւղերում առհասարակ լինում է, գիւղն էլ պակաս խնամուած էր: Պարզուեց, որ այս գիւղի ներկայիս բնակչութիւնը վերջին շրջանում տարբեր տեղերից հաւաքուածներ են, իսկ բնիկները վերջին յիսունամեակում լքել են գիւղը ընկերային պատճառներով: Գիւղի հողատէրերը պետութեան քաղաքականութեան հետեւանքով իրենց հողերը վաճառել են իրենց նախկին բատրակներին կամ վարձու աշխատողներին եւ իրենք հեռացել են: Այսօրուայ բնակիչները գիւղի հետ կապուած անցեալի յիշողութիւններ չունեն:

Երբ գնացինք «գիւղի միակ հայ» մարդկանց տուն, տանը միայն տարեց ամուսիններն էին: Զաւակներն այժմ գիւղում չեն ապրում: Ասացինք, որ հայեր ենք, Հայաստանից ենք եւ կ'ուզենայինք իրենց հետ զրուցել: Տանտէրն անմիջապէս ասաց, որ իրենք հայ չեն, ալեւի են, եւ ինքն էլ չի հասկանում, թէ ինչու՛ են իրենց հայ համարում: Առաջարկեցինք զրուցել հենց ա՛յդ մասին՝ ինչու՛ են իրենց հայ համարում: Տանտէրերը մեզ շատ սիրալիր ընդունեցին: Նստած էինք փակ պատշգամբում, թէյ էինք խմում, զրուցում: Նրանք անմիջապէս համաձայնուեցին, որ զրոյցը ձայնագրենք:

Ամուսինը՝ Մուստաֆա Ասլանփենչալին («փենչեալի»՝ առիւծի թաթ ունեցող, «փանչ»՝ թաթ) շատ հպարտանում էր «Ասլան» արմատը պարունակող իր ազգանունով՝ այն կապելով սելջուկ Ալփ Արսլանի հետ: Նա հաճելի զրուցակից էր, բայց՝ շատ զգուշաւոր: Ինչպէս պարզուեց, մօտ քսան տարի առաջ նրանց որդիներից մէկը պատանի հասակում միացել էր քուրդ ապստամբներին (հայրն ասում էր՝ «փախցրել են քուրդ գրոհայիները եւ տարել են սարերը»): Դրա հետեւանքով ընտանիքը շատ դառնութիւններ է կրել, այդ թւում՝ իրենց հայկական ծագման շահարկման պատճառով: Հաւանաբար այդ պատճառով այժմ Մուստաֆան ամէն կերպ շեշտում էր պաշտօնական իշխանութիւնների հետ իր համաձայնութիւնը:

Վարժուած լինելով, որ բոլոր գիւղերը անուանափոխուել են, հարցրինք գիւղի նախկին անունը:

- Այս գիւղը աղաների, բէյերի գիւղ է եղել, անունը չի փոխուել[23]: Դանաբուրան եղել է, Դանաբուրան էլ մնացել է: Այստեղ շատ անասուններ են կոտորուել, դանա (հորթ - Հ.Խ.) է կոտորուել, այդ պատճառով գիւղի անունը Դանաբուրան է, «դանա» բառից է[24]:

*- Հիմա այլեւս աղաներն ու բէյերն այստեղ չե՞ն ապրում:*

- 1995ին աղաներն ու բէյերը իրենց ունեցած-չունեցածը ծախեցին գնացին: Իրենք այստեղ մեծ սեփականութիւններ ունէին: Նրանք չէին աշխատում, նրանց համար այստեղ բատրակներն (*էարբքլրք*) էին աշխատում: Ամէն տեղից գալիս էին, նրանց համար այստեղ աշխատում էին: Աղքատ մարդիկ էին, դրանք էին աշխատողները: Յետոյ պետական օրէնքները փոխուեցին, նրանք էլ իրենց հողերը վաճառեցին, թողեցին գնացին: Հարուստ մարդիկ էին, քաղաքներում տներ ունէին: Սա աղքատ գիւղ է, այստեղ մնային ի՞նչ անէին: Այս գիւղի բնակչութիւնը տարբեր տեղերից եկել է այստեղ, աղաների մօտ վարձով աշխատել է: Հիմա նրանք են ապրողները:

*- Այստեղի բէյերը, աղաները ալեւի՞ էին:*

- Չէ, սուննի մուսուլման էին: Ալեւին էլ է մուսուլման, բայց իրենք սուննի էին: Քրմանջերէն էին խօսում:

*- Դուք ինքներդ ո՞ր աշիրէթից եք:*

- (*Պատասխանում է կինը*) Ինքը հայ է:

*- (Դիմում ենք կնոջը) Իսկ դու՞ք:*

- Ես էլ հայ եմ: Ծնողներս հայեր էին: Մենք հայեր ենք:

- (*Ամուսինը*) Մեզ իսկապէս հայ են ասում, բայց ինչպէս ասացի մենք հայութեան հետ կապուած ոչինչ չգիտենք: Ոչ տեսել ենք, ոչ էլ լսել ենք:

*- Իսկ ո՞վ է ձեզ հայ ասում, հայ անուանում:*

- Այստեղ բոլորը գիտեն:

*- Դուք ձեր պապերին գիտէք, չէ՞:*

- Այստեղ, շրջակայքում, հայեր իսկապէս կան, օրինակ՝ Ալանեազը գիւղում հայեր են ապրում: Ալանեազում, Աղաջանում հայեր են ապրել: Այդ գիւղերի անուններն իսկապէս էլ փոխուել են: Ալանեազը նախկինում Խոզընքէոյ էր, իսկ Աղաջանի նոր անունը Շորդա է: Այդ բոլոր գիւղերում, որոնց անունները փոխուել են, նախկինում եկեղեցիներ են եղել: Հիմա, իհարկէ, չկան, բայց տեղերը յայտնի են, եկեղեցիներ եղած տեղերը: Բոլորն էլ այստեղ տեղերը գիտեն: Իսկ մեր գիւղի անունը չի փոխուել: Գինը անունով գիւղ կայ, հին անունը Քոյդարիշ էր, այնտեղ էլ է եկեղեցի եղել: Քոյդարիշում էլ էին աղաներ ապրում: Ես այդ գիտեմ, քանի որ 58ից յետոյ պետութիւնը դրանց օգնում էր, որ իրենց հողերը ծախեն: Հողերը ծախեցին, փողերն առան, գնացին: Դա Դեմոկրատական Կուսակցութեան քաղաքականութիւնն էր: Ժողովուրդն այն ժամանակ դրանցից հողեր առաւ, դրանք էլ փողերն առան, թողեցին գնացին: Պետութիւնը դրամատներից վարկ էր տալիս հող առնողներին: Այդ ժամանակից շատ աղքատներ հողատէր դարձան:

*- Իսկ դուք, ձեր պապական ընտանիքը այս գիւղացի է՞ք:*

- Չէ, չէ, ասում եմ, չէ՞, այս տեղը աղաների գիւղ էր: Ասում են, որ այդ աղաները մի հինգհարիւր տարի առաջ են այստեղ եկել, հողերի տէր են դարձել: Իսկ իմ պապը Դիարբեքիրի կողմերից է եկել, Չունգուշ[25] գիւղից: Ասում են, որ այն ժամանակ հայ են եղել: Բայց մենք այստեղ ազգականներ չունենք, նոյնիսկ երեխաներս այստեղ չեն:

*- Ինչու՞: Ինչու՞ երեխաներդ գոնէ չմնացին ձեզ հետ:*

- Այստեղ շատ անհանգիստ է: Պետութիւնը դա *տեռոր* է անուանում: Գալիս են երիտասարդներին տանում են: Իմ տղաներից մէկին էլ տարան, կապուտաչեայ, 16 տարեկան տղայ էր, տարան սարերը: Խաբեցին տարան: 1993ին տարան: Կապոյտ, մաւի՝ կապտականաչաւուն աչքերով տղայ էր:

*- Ո՞վ տարաւ, ասկեարնե՞րը:*

- Ասկեարներն էլ էին տանում, բայց իմ տղային ՊԿԿները[26] տարան: Տարան սարերը: Սարերից գալիս էին, ջահելներին հաւաքում էին, տանում՝ պետութեան դէմ պայքարելու, կռուելու համար: Դուք չգիտէ՞ք մեր երկրի պատմութիւնը: Դերսիմը միշտ ազատ է եղել, անկախ է եղել: Միշտ պայքարել է իր ազատութեան համար: Բոլորի դէմ է պայքարել: Ֆրանսիացիները եկել էին Աֆիոն Կարահիսարում նստել էին, երեք տարի մնացին, բայց չկարողացան Դերսիմը գրաւել: Ժողովուրդը նրանց քշեց: Բոլոր դպրոցներում սովորեցնում են պատմութիւնը, դուք ինչպէ՞ս է, որ չգիտէք:

*- Մենք Հայաստանից ենք եկել, արդէն ասեցինք, որ Հայաստանից ենք, այնտեղ մեզ ձեր պատմութիւնը չեն սովորեցնում:*

- Մեծ պատմութիւն է Օսմանեան Կայսրութեան պատմութիւնը, շատ փառաւոր պատմութիւն է (զրուցակիցս հպարտութեամբ պատմում է Օսմանեան Կայսրութեան ձեւաւորման իրեն ծանօթ պատմութիւնը՝ յատկապէս շեշտելով սելջուկեան շրջանը՝ մինչեւ Առաջին Համաշխարհային Պատերազմ): Առաջին Աշխարհամարտից յետոյ եւրոպացիները նստեցին, կտրտեցին Օսմանեան Կայսրութեան սահմանները, Լոզանի Կոնֆերանսով մի փոքր Թուրքիա թողեցին: Աթաթուրքը մի փոքր վերականգնեց, բայց եւրոպացիներն իրենց ուզած ձեւով սահմանները կտրեցին: Եւրոպան ամբողջ Թուրքիան գրաւել է, բայց Թունջելին գրաւում չի տեսել, եւրոպացին Թունջելի չի մտել: Թունջելին միշտ անկախ է մնացել:

*- Բայց Թունջելիում էլ թուրքերը հայերին կոտորեցին, դուք այդ մասին որեւէ բան գիտէ՞ք:*

- Պատերազմի ժամանակ է եղել: Ես լսել եմ մարդկանցից, ես ոչ մի որոշակի բան չգիտեմ: Հայերն են այդպէս ասում: Աւելի լաւ կը լինի այդ բաները թողնենք պատմաբաններին:

*- Ի՞նչ մարդկանցից էք լսել: Հայե՞րն են ձեզ պատմել իրենց հետ կատարուածի մասին:*

- Չէ, մենք հայերի հետ չենք շփւում: Բայց ասում են, որ հայերն են պատմում այդ մասին:

*- Լաւ, ասում էք, որ դերսիմցիները միշտ պայքարել են անկախութեան համար: Ումի՞ց էին ուզում անկախ լինել:*

- Բոլորից: Եւրոպացիներից: Ռուսներից: Երբե՛ք ոչ մէկը Դերսիմը չի գրաւել:

*- 38ի դէպքերն ինչպէ՞ս եղան: Լսե՞լ էք այդ դէպքերի մասին: Ումի՞ց էին պաշտպանում Թունջելին, ո՞վ էր սպառնացողը: Ալեւիների կորուստների մասին լսե՞լ եք:*

- Չի կարելի այդպէս միակողմանի ասել: Որովհետեւ, ճիշտ է, պետութիւնը արել է, բայց նրանք էլ են պետութեան դէմ բաներ արել: Պայքարել են պետութեան դէմ: Իմ տղային էլ սարերը տարան պետութեան դէմ պայքարելու համար: Պէտք է այս կողմն էլ ասել:

*- Այ, ասում էք հայութիւնից ոչինչ չգիտէք, բայց ձեր գիւղում ձեզ հայ են ասում: Բայց ձեր կինը հայ է: Ուրեմն ինչպէ՞ս, որտեղի՞ց գտաք նրան, ինչու՞ անպայման հայ:*

- Հաա՛, կինս: Ազգութեան պատճառով չենք ամուսնացել: Մենք ուղղակի իրար հանդիպել ենք, սիրել ենք իրար:

*- Ձեր կինը որտեղի՞ց է ծագումով:*

- Իր ծնողների ընտանիքը Կըզըլ Քիլիսէյից է:

- (*Խօսում է կինը*) Մեր ընտանիքն էլ է շատ տուժել հայերի կոտորածների ժամանակ: Իմ մօր պատմելով մենք ջրի վրայով ենք փրկուել: Իմ պապերը

Փերթեկից (Բերդակ)[27] են եղել: Թուրքերը եկել են մեր գիւղը թալանել, մարդկանց կոտորել են, ով կարողացել է փախչել՝ նրանց մի մասը փրկուել է: Իմ մայրն այն ժամանակ շատ փոքր է եղել: Տատս մօրս հետ կարողացել է փախչել, բայց հեռու չի գնացել: Տեսել է իրենց հետեւում են, երեխային, այսինքն իմ մօրը ջուրն է գցել: Երեւի ասել է կա՛մ կ'ապրի, կա՛մ կը մեռնի, իսկ եթէ ջուրը չգցէր՝ հաստատ կը սպանէին: Բայց փրկուել է մայրս, փրկել են, ջրից հանել են մարդիկ: Մօրն էլ են փրկել, երեխային էլ: Տարել են Կրզրլ Քիլիսէ: Յետոյ մենք ամուսնացանք, ու ես եկայ այստեղ: Հիմա էլ ծերացել ենք, երեխաներն էլ ցրուած են, մեծ մասը Ստամբուլում է: Մենք այստեղ հող ենք մշակում, ցանք ենք անում, իրենք աշնանը գալիս են բերքը տանում են: Շատերի երեխաներն են Ստամբուլում: Այնտեղ մեծ քաղաք է, չես իմանում ով որտեղի՞ց է եկել, ո՞վ է, ի՞նչ է: Յետոյ էլ որտեղ աւելի լաւ է, մարդիկ այնտեղ էլ գնում են:

Քայրէ Եըլդըրըմ

*- Հիմա ձեր երեխաները Ստամբուլում ո՞վ են, հա՞յ են, քու՞րդ են, թու՞րք են:*

- (*Ամուսինը*) Չեմ հասկանում ի՞նչ էք ասում: Դէ երեւի ալեւի պիտի լինեն:

*- Հիմա ձեզ այստեղ ո՞վ է հայ ասում:*

- Սովորաբար ոչինչ էլ չեն ասում, բայց ես գիտեմ, որ մեր մասին հայ են ասում: Յետոյ որ ջղայնանում են՝ գեաւուր են ասում, գեաւուրի տղայ են ասում: Բայց մենք այստեղ բոլորի նման ենք, ալեւի ենք, ալեւին էլ մուսուլման է: Ուրեմն ինչու՞ են գեաւուր ասում:

*- Դուք ինքներդ ի՞նչ էք կարծում, ինչու՞ են ասում:*

- Չգիտեմ: Երեւի պապերս հայ են եղել: Բայց հայրս հայ չի, ես հայ չեմ:

*- Քանի՞ երեխայ ունէք:*

- Չորս որդի, երեք աղջիկ: Ութ երեխայ ենք ունեցել, մնացել են եօթը: Աղջիկներից մէկը Գերմանիայում է, միւսը՝ Իզմիրում: Մէկ աղջիկն ու տղաները Ստամբուլում են:

*- Գալի՞ս են երեխաները, օգնու՞մ են:*

- Տղաներս գալիս գնում են: Բայց օգնող չունենք: 78 տարեկան ենք՝ դեռ աշխատում ենք: Գալիս են մեր ստեղծած բերքն են տանում:

*- Այս կողքի գիւղերում որտե՞ղ են հայերը:*

- Այստեղից առաջին գիւղը Աղաջանն է, յետոյ Խոզրքէօյն է: Դրանք հայերի գիւղեր են: Բուրջուլար գիւղը կայ, այնտեղ բուլղարներ են ապրում: Բայց բոլորը ալեւի են, մուսուլման են:
*- Զազայերէն գիտէ՞ք:*
- Մենք այստեղ քրմանջերէն ենք խօսում: Մազկերտ գնանք՝ քրմանջերէն են խօսում: Հարչիկ գետից այս կողմ բոլորը քրմանջերէն են խօսում, Հարչիկից այն կողմ՝ դերսիմերէն, այսինքն՝ զազայերէն: Նազիմիէյում (Կրզըլ Քիլիսէ), Օւաճիկում, Խոզաթում, Փուլումերիկում[28] (Բոլոմերիկ) դերսիմերէն են խօսում, Մազգերտում՝ քրդերէն, քրմանջերէն: Բայց դերսիմերէն նոյնպէս գիտեն, երբ գնում են այն կողմ՝ դերսիմերէն են խօսում: Չմշկեզիկում (Չմշկածագ) թուրքերէն են խօսում: Ես դերսիմերէն չգիտեմ: Բայց թուրքերէն բոլորս էլ խօսում ենք:
(*Կինը*) -Ինքը (*նկատի ունի ամուսնուն* - Հ.Խ.) միայն թուրքերէն գիտի: Ո՛չ քրդերէն գիտի, ո՛չ դերսիմերէն:
- (*Ամուսինը*) Աթաթուրքի ժամանակ դպրոցներ բացուեցին: Ես դպրոց եմ գնացել: Մենք թուրքերէն ենք սովորել: Հենց մեր այս գիւղում: Սա աղաների, բէյերի գիւղ էր, դպրոցը շուտ բացուեց: Երեք տարի դպրոց եմ գնացել: Բայց կինս դպրոց չի գնացել, գրել կարդալ չգիտի:
*- Ձեր երեխաների անունները չէ՞ք ասի:*
- Թայլան, քրդական անուն է, յետոյ՝Այսէլ, Շուքրա, Իմրա, Արսլան, սելջուկ Արսլան սուլթանի անունով:

*Հրաժեշտ ենք տալիս մեր տանտէրերին: Կինը մեզ ուղեկցում է: Դուրս գալիս դռան մօտ մի պահ յապաղում է, ապա կամաց, որպէսզի ամուսինը չլսի, ասում է.*
- Բիզ այնը ընք (*մենք նոյնն ենք*):

# ԷԼ ՎԱԽԵՆԱԼՈՒ ԲԱՆ ՉԻ ՄՆԱՑԵԼ, ԱՄԷՆ ԻՆՉ ԷԼ ԱՐԵԼ ԵՆ ՄԵՋ ՀԵՏ
## (Մենք որ եկանք, եկանք որպէս ալեւի, բայց մեզ երբեք ոչ ոք որպէս ալեւի չի ընդունել)

*Թունջելի/Դերսիմի Մազգիրտի[29] շրջանի Ալանեազի գիւղը միայն պաշտօնապէս է այդպէս կոչւում: Բոլորն այն անուանում են Խոզըքէոյ: Հարեւանութեամբ գտնուող Շորդա[30] եւ Ալանեազի գիւղերը Թունջելիում բոլորը համարում էին հայկական գիւղեր: «Այնտեղ հայեր են ապրում»՝ այդ գիւղերից որեւէ մէկի անունն ասելիս՝ աւելացնում էին իմ զրուցակիցները 2011ի հանդիպումների ժամանակ:*

*Դերսիմի միւս գաւառակներից Մազգիրդը տարբերւում է նրանով, որ այստեղ առհասարակ շատ են քրմանջերէն խօսողները, այդ թւում՝ ալեւի քրմանջախօսները: Զգալի թիւ են կազմում նաեւ սուննի քրմանջախօսները: Մազգիրդում Դերսիմի Նազիմիէ, Բոլոմերի, Օւաճիկ գաւառակների համեմատ շատ են նաեւ քրդական ինքնութիւն կրողները: Այս մասերի գիւղերը 1993-94ին, երբ թուրքական իշխանութիւնները Թունջելի լեռնային գիւղական բնակավայրերն իրրեւ թէ Քրդական Աշխատավորական Կուսակցութեան զինուած պայքարին մասնակցելու կասկածանքով ամբողջովին աւերեցին եւ բնակչութիւնը ցրեցին Թուրքիայի արեւմտեան շրջանների մէջ, չեն քանդուել, չեն աւերուել, բնակիչներն էլ հիմնականում մնացել են իրենց բնակավայրերում:*

*2011 Յուլիսի վերջերին Դանաբուրան գիւղից գնում էինք Խոզըքէոյ: Ճանապարհին, Շորդա գիւղի մօտ մի տղամարդ կանգնեցրեց մեքենան: Մեր վարորդ Ալին կանգնեց, հարցրեց, թէ ու՛ր է գնում: «Խոզըքէոյ»՝ ասաց տղամարդը: Մենք ուրախացանք, որ հենց ճանապարհին հանդիպեցինք Խոզըքէոյի բնակչի: Մարդը բարձրացաւ մեքենայ: Հարցրինք, թէ արդեո՞ք Խոզըքէոյ գիւղում է ապրում:*

- Այո,- ասաց,- բայց բանջարանոցս այստեղ է, եկել էի մի փոքր աշխատելու: Իսկ դուք որտեղի՞ց էք եկել:

*- Հայաստանից ենք,-* ասացինք,*- Հայաստանը գիտէ՞ք:*

- Հայաստա՞նը: Այո: Ես էլ հայ եմ:

*- Հա՞յ էք: Իսկապէ՞ս:*

- Այո, ես էլ հայ եմ: Պետութիւնն էլ գիտի, բոլորն էլ գիտեն, ես էլ չեմ թաքցնում:

*- Իսկ գիւղում շա՞տ հայեր կան:*

- Հիմա քիչ կան: Բոլորը գնացին. Գերմանիայում են, Ֆրանսիայում, Ստամբուլում: Քիչ մարդ է մնացել, հիմնականում՝ իմ տարիքի մարդիկ, մեծերը: Բոլորի երեխաները դրսերում են:

*- Մե՞ծ գիւղ է Խոզրքէօյը:*

- Այդքան մեծ չի, միքանի փոքր թաղամաս է:

*- Իսկ գիւղում մնացե՞լ են ուրիշ հայեր: Եւ իրենք ասու՞մ են իրենց հայ լինելու մասին:*

- Նրանք, ովքեր վախենում էին ասել, թողեցին գնացին: Հիմա բոլորն էլ գիտեն մեր գիւղացիների հայ լինելը, պետութիւնն էլ, կառավարութիւնն էլ, ժողովուրդն էլ… Բոլորն էլ գիտեն, ասես, թէ չասես՝ ամէն ինչ բոլորին յայտնի է: Մենք Միրաքներից[31] ենք, նրանց թոռներն ենք:

*- Դու՞ք: Դուք Միրաքների թո՞ռն էք:*

- Մեր ամբողջ գիւղն է Միրաքներից: Մենք ոչ մէկից էլ չենք վախենում: Նազիմիէի (նախկին Կրզրլքիլիսէ - Հ.Խ.) կողմերն էլ կան Միրաքներից, այնտեղից էլ են միքանիսը եկել մեր գիւղ: Բոլորն էլ գիտեն մենք ով ենք, վախեցողները գնացել են, մենք մնացել ենք: Հասանք մեր տուն, համեցէք, մեր տուն եկէք, միասին թէյ կը խմենք:

*Մեքենան կանգնել էր ցածր, միյարկանի մի տան մօտ:*

*Մարդը մտաւ իր տուն, որտեղից անմիջապէս դուրս եկաւ մօտ վաթսունամեայ մի հաճելի կին եւ ժպիտը դէմքին ուրախութեամբ մեզ ներս հրաւիրեց.*

- Բարի էք եկել, տուն մտէք, համեցէք:

*Տանտէրերին հետեւելով՝ հանում ենք կօշիկները եւ մեր ամբողջ խմբով՝ հինգ հոգով տուն ենք մտնում: Հին տուն է, ցածր առաստաղով, կրով սպիտակեցրած պատերով, յատակն ամբողջովին ծածկուած է ձեռքով գործած խսիրներով: Մաքուր, խաղաղ տուն է: Պատերին լուսանկարներ են կախուած, եւ դրանցից ամէնամեծը սուրբ Ալիի նկարն է, տակը մակագրութիւն. «Ալլահըն ասլան Հազրաթ Ալի» (Ալլահի առիւծ Սուրբ Ալի): Ալեւիների տների հիմնական բաղկացուցիչներից է այդ նկարը:*

*- Մենք Հայաստանից ենք եկել,- տիկնոջը նոյնպէս բացատրում ենք, որպէսզի յանկարծ այնպիսի բան չասի, որ ցանկալի չէր լինի հայաստանցիներին ասելու:*

- Բարով էք եկել,- ժպիտը դէմքին հաստատում է տիկինը:

*Շարունակում ենք դիտել պատերի լուսանկարները:*

Կինը բացատրում է.- սա հարսս է, սա որդիս է, Ֆրանսիայում է ապրում: Սա էլ մեր հայրն է:
*Մենք յայտնում ենք մեր անունները, հարցնում ենք տիկնոջ անունը.*
- Զուլֆիա Փոլադ (փոլադ՝ պողպատ, պողպատի նման ամուր - Հ.Խ.): Դուք նստէք, զրուցէք, ես գնամ թէյ բերեմ:
*Նստում ենք: Պատմում ենք մեր այցելութեան նպատակը, թոյլտուութիւն ենք խնդրում ձայնագրելու, լուսանկարելու: Ամուսինը հաճոյքով համաձայնւում է զրուցել:*
*- Ձեր գիւղը հի՞ն գիւղ է:*
- Մեր գիւղը նախկինում ամբողջովին հայկական գիւղ էր: Գիւղի անունն էլ, մարդկանց անուններն էլ հայկական անուններ էին: Իննսունականներին լրիւ փոխեցին, թրքացրին: Հիմա գիւղի անունը դարձել է Ալանեազի: Խոզրքէոյ էր առաջ, բայց «խոզը» հայերէն բառ է, «Խոզրքէոյ»՝ այսինքն «խոզերի գիւղ»: Մի քսան տարի առաջ փոխեցին անունը:
*- Ինչու՞ էր անունը Խոզրքէոյ[32]: Հայերը ժամանակին այստեղ խո՞զ են պահել:*
- Այդպիսի բան չի եղել: Մենք այստեղ եկել ենք Նազիմիէից (նախկին Կըզըլքիլիսէ - Հ.Խ.): Մեր պապերը այնտեղից են եկել: Մեր գլխաւորը Միրաք աղան էր, այստեղ բոլորը Միրաքին ճանաչում էին:
*- Հիմա գիւղում բոլորը Միրաքի հետ եկածնե՞րն են:*
- Ոչ, ոչ բոլորը: Ուրիշներ էլ կան: Միրաքներից շատ քիչ են մնացել, գնացին: Գնացել են Գերմանիա, Ֆրանսիա, Հոլանդիա, տարբեր տեղեր, Ստամբուլ…
*- Այս տունը, որտեղ նստած ենք, ե՞րբ է կառուցուել:*
- Սա հին տուն է, հայրս է կառուցել, յետոյ ես միքանի սենեակ եմ աւելացրել:
*- Իսկ ե՞րբ են ձերոնք եկել Նազիմիէից: Ինչու՞ են տեղափոխուել այստեղ:*
- 15 թուից յետոյ: Եկել են նախ Շորդա, այստեղից մօտիկ է: Մենք մեծ խումբ էինք, բոլորը՝ Միրաքներից: Շորդայից եկանք այս գիւղը, այստեղ ոչ ոք չկար, մենք հաստատուեցինք: Բայց յետոյ մի մարդ կար, Թամիր աղան, ասաց, որ ինքն է այս տեղերի տէրը: Նա որ չլինէր, մենք հիմա այստեղ տէր կը լինէինք:
*- Երբ որ այս գիւղ եկաք, դուք դեռ քրիստոնեա՞յ էիք:*
- Մեր հայ լինելը բոլորը գիտեն, ժողովուրդն էլ գիտի, կառավարութիւնն էլ գիտի: Մենք որ եկանք, եկանք որպէս ալեւի, բայց մեզ երբեք ոչ ոք որպէս ալեւի չի ընդունել: Ալեւի չեն ընդունել, որովհետեւ բոլորն էլ իմացել են մեր հայ լինելը, եւ մենք էլ դա չենք թաքցրել: Տեսէք, հիմա էլ չեմ թաքցնում եւ կրկնում եմ, որ պետութիւնն էլ գիտի:

*- Հայաստանում դերսիմցի մի մարդ գիրք է գրել, որում գրուած է, որ Խոզըքէօյում դեռ 15ից առաջ Միրաքներ էին ապրում*[33]:
- Չի եղել այդպիսի բան, այստեղ յետոյ, 15ից յետոյ են եկել մեր պապերը: Բայց հնուց էլ սա հայկական գիւղ է եղել: Այդ հայերին կարծեմ կոտորել են: Այդպէս են պատմում: Այստեղ վաղուց մի զիարէթ է եղել, այդ զիարէթում Սուրբ Յիւսուքի[34] գերեզմանը կայ, հենց աղբիւրի մօտ է: Այսօր էլ մարդիկ գնում են, մում են վառում, մատաղ են անում: Ոմանք էլ տակն այնքան են փորփրել, ոսկի են փնտռում, որ քարն ամբողջովին խախուտ է դարձել: Մերոնք անցեալում խելօք են եղել: Նախկինում դրամատներ չկային, դրա համար էլ մարդիկ ինչքան հարստութիւն, փող ունէին՝ տանում էին գետնի տակ, հողում թաղում, անունն էլ զիարէթ էին դնում, այսինքն՝ սրբավայր, սուրբ տեղ, որպէսզի որեւէ մէկը չգնայ այնտեղ փորի: Շատ խելօք են եղել: Բայց պետութիւնն այդ բոլորն իմացել է, յետոյ իրենք եկել են այդ բոլոր սրբատեղերը փորել են, հարստութիւնները տարել են: Հիմա մեզ, մեր ցեղին, ում որ այդ ամբողջ հարստութիւնը պատկանում է, ասում են՝ «մի փորէք, սրբատեղի է»: Իսկ դուք թաղուած գանձերի տեղերի քարտէզ չունէ՞ք: Եթէ ինձ մի հատ քարտէզ ցոյց տաք, ես ձեզ կը տանեմ, բոլոր տեղերը ցոյց կը տամ[35]: Անընդհատ այդպիսի մարդիկ են գալիս, քարտէզները ձեռքներին փնտռում են: Որտեղի՞ց են ճարում այդ քարտէզները՝ չեմ հասկանում: Բայց կան այդպիսի մարդիկ:
*- Այսքան գրուցում ենք, բայց ձեր անունը չասացիք:*
- Զիա Փոլադ: (Զիյա՝ լոյս է նշանակում - Հ.Խ.):
*- Իսկ ձեր պապական, հայրական, ձեր գերդաստանի անու՞նը:*
- Մեր պապական ազգանունը Բոշթաշ է եղել: Հօրեղբայրս ու հայրս մի տարածքի, հողի համար վէճ են ունեցել, հօրեղբայրս հօրս ձեռքից այդ տարածքը վերցրել է: Հայրս էլ ջղայնացել է, գնացել հրաժարուել է Բոշթաշ ազգանունից, վերցրել է Փոլադ ազգանունը: Հիմա մենք Փոլադ ազգանունով ենք:
*- Ձեր կնոջ պապական ազգանունն ինչպէ՞ս էր:*
- Անունը Զուլֆիա է, հայրական ազգանունը՝ Գոք: Կնոջս հայրը հայ է:
*- Զուլֆիան նոյնպէ՞ս ձեր գիւղացի է:*
- Չարսանջաքից[36] է, Գունէ Դերէի Բոշքու գիւղից: Հուշտակում էլ հայեր կան:
*- Հիմա ձեր այս գիւղում Միրաքեան ազգանունով մարդ կա՞յ:*
- Ես Գերմանիայում երկու հատ գիրք եմ տեսել, այդ գրքում այս տարածքի, այստեղի բոլոր աշիրէթների, ազգանունների ծագումը, պատմութիւնը գրած է: Հայերէն գիրք է: Այդ ժամանակ ես երիտասարդ էի, նոյնիսկ ամուսնացած չէի, այդ գիրքը ցոյց տուողին ասեցի այդ գրքով նայի, ինձ համար մի լաւ չափանիշներով աղջիկ գտի: Խոստացաւ, յետոյ

գնաց Շուէյցարիա: Խոստացել է այդ գրքերը թարգմանած ինձ ուղարկել, բայց դեռ չեմ ստացել:

*- Ձեր գիւղը ե՞րբ է ամենամարդաշատը եղել, ե՞րբ էր, որ մարդիկ այս գիւղից չէին գնում եւ բնակիչների թիւն աճում էր:*


ՎԿԱՅԱԳԻՐ ՄԿՐՏՈՒՄԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՊՈՒՐՔԻՈՅ
Անուն մկրտեալ Այգիւն ԲՈԼՈՐ
Հայրը Գոյա ԲՈԼՈՐ
Մայրը Զուլֆիկէ
Ծնեալ թ. եւ տարեթիւը Քաղեցի 20.8.1970
Թվականը 1974
Ուր մկրտուած է Բարեգործական Մէջ
Կոչումը Պապաս ԳՈՄՇ
Կրօնական Հ.Պատրիարքարանի Հայոց Եկեղեցի
Թիւ Դասաւորագրքի մայր օրինակի Հ.10899
Թիւ Եկեղեցւոյ տեսակի Պ.19.7.2001
Եկը Հաստատեցէք որ վերոյիշեալ անձը, մկրտուած է քառ արարողութեամբ ըստ սովորութեան Հայոց Եկեղեցիի:
19 ԻՍԿԻՍ 2001
Գրիգոր Ամենայն Հայոց Կաթողիկոս
Հայրապետական Դիւան

Դժուար թէ կարողանամ ասել, բայց հիմա 100 մարդուց աւել չի լինի: Ես ինքս էլ իմ երեխային, տղայիս ուղարկեցի Գերմանիա: Ես իմ ձեռքով իմ տղային վստահագիր տուեցի, նա գնաց Ստամբուլ, իր ինքնութիւնը՝ հայ լինելը վերականգնեց, հայ դարձաւ եւ այդպէս գնաց Գերմանիա: Գերմանիայում նրա ինքնութիւնը հիմա հայկական է:

**Ինքնութեան վկայականը հայերէն**

*- Ինչպէ՞ս փոխեց ինքնութիւնը, ի՞նչ գործողութիւններ արեց:*

- Սկիւտարում[37] մենք ծանօթներ ունենք, նրանք արեցին, օգնեցին: Ես նրա ինքնութեան վկայականն ունեմ, բերեմ ցոյց տամ:

*Գնում է վկայականը բերելու: Հարցնում ենք կնոջը.- Այս տարածքում քանի՞ մարդ փոխած, վերականգնած կը լինի ինքնութիւնը: Ինչպէ՞ս են դա անում:*

(*Կինը*)-Ես չգիտեմ, իրեն հարցրէք:

Ամուսինը ետ է գալիս ինքնութեան վկայականով:

*- Ձեր տղայի անու՞ն էլ է փոխուել:*

- Ոչ, նոյնն է մնացել: Այգուն Փոլադ: Այգուն Փոլադ, էրմանի (հայ): Ահա վկայականը[38]:

*- Հիմա Ձեր որդին, որ գնացել է Գերմանիա, ու հայի ինքնութեան վկայականով է գնացել, Գերմանիայում փորձե՞լ է հայերի հետ կապուել, ծանօթութիւն հաստատել:*

- Ես չգիտեմ, նա այնտեղ է, ես՝ այստեղ, ի՞նչ իմանամ:

*- Այսինքն ուզում եմ հարցնել, թէ ինքնութեան վկայականը ի՞նչ է փոխում մարդու մէջ: Նոր շրջապատ, նոր մարդի՞կ են յայտնւում: Կամ գուցէ շրջապատի մարդկանց վերաբերմու՞նքն է փոխւում:*

- Դէ հիմա իմ որդին գնացել է Գերմանիա, աշխատում է, ոնց որ թէ հայերի հետ է աշխատում: Դիմել է կեցութեան իրաւունք ստանալու, բայց դեռ ընթացքի մէջ է, դեռ օրինական չի: 2001ին փոխել է ինքնութիւնը[39] եւ գնացել:

*- Ձեր միւս երեխաները որտե՞ղ են ապրում:*

- Ստամբուլում են: Ութ երեխայ ունեմ, չորսը ամուսնացած են, չորսը ամուսնացած չեն: Տղաներիցս մէկն այստեղ է, ինձ հետ է ապրում: Այս տարուայ փառատօնին[40] Թունջելիում մի աղջիկ է տեսել, հաւանել է, ասում է վաղը կը գամ, կը խօսենք:

*- Այդ աղջիկն ալե՞ւի է:*

- Այո, ալեւի է: Կարծում եմ նրա ծնողները դէմ չեն լինի: Դէ այստեղ այնքան ալեւիացած հայեր կան, որ ում էլ հարցնես՝ կը պարզուի արմատներում հայ կայ: Մենք որ՝ դէմ չենք: Դեռ երեխայ են, փոքր են, թող մեծանան, ես տղայիս համար կ'ուզեմ: Մենք չենք թաքցնում մեր հայ լինելը: Ինչու՞ թաքցնեմ, ինչի՞ց վախենամ, ումի՞ց վախենամ: Կառավարութիւնը շատ լաւ էլ գիտի ամէն ինչ, գիտի մեր արմատները: Մեր գիւղապետն էլ շատ լաւ գիտի: Գալիս է, գնում է, այստեղ մեզ հետ նստում է, խօսում է, ուտում ենք, խմում ենք:

*- Ձեր միւս զաւակների ինքնութիւնները վկայականով չէ՞ք փոխել:*

- Չէ, դրա կարիքը չի եղել: Այն մէկը գնում էր Եւրոպա, այդ պատճառով փոխեցինք: Բայց ցանկացած փոփոխութիւն խօսակցութիւններ է բերում լրացուցիչ հետաքրքրութիւն, ի՞նչ իմաստ ունի այդ ամէնն սկսել:

*- Վերջին տարիներին թուրքական թերթերը յաճախ են գրում դատարանով կամ հայոց պատրիարքարանում ինքնութիւնը վերականգնած հայերի մասին: Դա ձեզ ուրախացնու՞մ է:*

- Պետութիւնը միշտ էլ իմացել է մեր մասին, միշտ էլ իմացել է մեր համոզմունքների մասին, բայց նախկինում վախենում էինք բարձրաձայն ասել այդ մասին: Այլապէս հայերն այստեղ շատ-շատ են, բայց միայն վերջին հինգ-վեց տարիներին է, որ ոմանք սկսել են խօսել, ասել այդ մասին:

*- Հայկական ծագումով մարդիկ գուցէ շատ են, բայց արդեօ՞ք շատերն են իսկապէս ցանկանում վերականգնել հայկական ինքնութիւնը: Ոչ թէ վախի պատճառով, այլ՝ համոզմունքների: Գուցէ մարդիկ չե՞ն ուզում հայութեանը վերադառնալ:*

- Վախենում են, թէ չէ՝ շատերը կ'ասեն, կը վերականգնեն: Հայերը շատ են, բայց վախենում են: Նախկինում այստեղ մարդիկ են եկել, հարցրել են, թէ ինչքա՛ն հայ կայ: Այստեղ՝ Դերսիմում ասել են, թէ քիչ են, միքանի մարդ են: Այսպէս ասողին տարել են, չարչարել են, սպառնացել են, ասել են՝ «դու սուտ ես խօսում, մենք գիտենք, որ այստեղ հայերը շատ են, ինչու՞ չէք խոստովանում»: Այսինքն միշտ դրանով հետաքրքրուել են, հետաքրքրուել են, որ պարզեն հայերի թիւը: Այդ պատճառով էլ են մարդիկ վախենում: Ես մի հօրեղբայր ունէի Լեւոն անունով, զինուորութեան են տարել Հարփութ (Խարբերդ - Հ.Խ.), այնտեղ անյայտ կորել է: Տարիներ շարունակ փնտռում ենք ու չենք գտնում:

*- Ձեր հորեղբոր անհետանալը դուք նրա հայ լինելու կամ հայկական ծագում ունենալու հետ էք կապում:*
- Ես չգիտեմ, գուցէ այդպէս է, գուցէ այդպէս չէ:
*- Իսկ որոշ հայեր, կամ հայկական ծագում ունեցող մարդիկ, որեւէ նեղութիւն, հալածանք կրե՞լ են 15ից յետոյ:*
- Իմ գիտակցական կեանքի շրջանում ես հայերի սպանութեան դէպքեր չգիտեմ: Բայց մեր պապերին, ծնողներին շատ են սպանել: Մեր պապերը մեզ այստեղ են բերել, որպէսզի ապահով լինենք: Բայց այստեղ սուննիներ կան շատ, նրանք սպանել են հայերին, այդ պատմութիւնները յայտնի են: Տարել են Խաշնարների[41] կողմը, այնտեղ կոտորել են: Դա արդէն 15ից յետոյ էր: Դա մեզ պատմել են, ես չեմ տեսել:
*- Հայ էին՝ ա՞յդ պատճառով: Այսինքն իրենց հա՞յ էին անուանում:*
- Ոչ, արդէն զազայացել էին, իրենց զազա էին ասում: Սուննիներն են սպանել: Սուննիները քնեցին, քնեցին, յետոյ արթնացան, ասացին դուք այստեղ տեղ չունէք, ինչու՞ էք եկել: Այստեղի հին աղաներից էին: Ասում էին այստեղ մի՛ մնացէք:
*- Իսկ ինչպէ՞ս է, որ դուք չէք վախենում, ձեր հայ լինելու մասին ասում էք:*
- Ես էլ այլեւս ինչի՞ց վախենամ: Ինչ ասէք՝ մեզ հետ արել են, ինչքան ասէք չարչարել են, տանջել են, քանիսներին աքսորել են: Էլ վախենալու բան չի մնացել, ամէն ինչ էլ արել են մեզ հետ: Այդ աղաների կառավարիչը, Ջամալ փաշան, քանի անգամ հենց ինձ տարել է, ծեծել է: Դա արդէն 1993-94ին էր: Ինձ տարել էին, ասում էին ասա, թէ սարերում ովքե՛ր են թաքնուել, որտե՛ղ են թաքնուել: Բայց մենք ի՞նչ իմանայինք ովքեր են, որտեղ են: Արդէն այնքան են չարչարել, որ էլ վախենալու բան չի մնացել: 1993ին բոլորին էլ քաշ են տուել:
*- Կարծում էք ձեզ որպէս հայի՞ են տարել ծեծել: Գուցէ ձեզ տարել են, որովհետեւ այստեղ, Դերսիմում, բոլոր տեղացիներին էին տանում հարցաքննում:*
- Նաեւ որպէս հայի: Քանի որ այստեղի հողերի տէրերը իրականում հայերն են, բայց նրանք փաստաթուղթ չունեն, վկայական չունեն: Ո՞ր հայը կարող էր գնալ փաստաթուղթ պահանջել: Կը սպանէին: Չնայած ալեւի էին, բայց բոլորն էլ գիտէին, որ հայ են, ո՞վ կը համարձակուէր գնալ պետութեան գրասենեակը: Դրանից բացի էլ եթէ հայերը գնային գրասենեակ, ալեւիները կը մատնէին, կ'ասէին հայ է, ինչու՞ էք նրան հողի սեփականութեան վկայական տալիս: Ալեւիներն էլ են մեզ կողոպտել: Այս գիւղում հիմա ընդամէնը մի 4-5 հողակտոր կայ, դրանք էլ աղաներինն են: Աղաները սուննի են: Բոլորն էլ գիտեն, որ դրանք հայերի հողերն են եղել: 15 թուից յետոյ ով էլ որ այստեղ գիւղապետ էր գալիս, աղաներին էր պաշտպանում: Նրանց սեփականութեան վկայականներ տուեցին: Այն ժամանակ ոչ մի բան փաստաթղթով չէր: Աղաները երկու վկայ էին

տանում, դէ պարզ է, հենց նրանց անունով էլ հողերը գրանցեցին: Մենք այստեղ միշտ բատրակութիւն ենք արել աղաների հողում: Հիմա վերջերս գիւղացուն նոյնպէս թոյլ են տուել հող գնել: Բայց աղաները դրա ձեւն էլ գիտեն: Եթէ նոյնիսկ իրենց հողը մշակող չլինի՝ հողը չեն վաճառում, մինչեւ գնորդը ամբողջ փողը չտայ եւ աղային էլ հետը հաւասար բաժնէտէր չընդունի: Ես հենց այդպէս եմ իմ բանջարանոցի հողը գնել: Այ, որ դուք ինձ տեսաք, այդ նոյն բանջարանոցից էի գալիս: Հենց հիմա էլ փաստօրէն նոյն բատրակութիւնն եմ անում: Հողն իբր թէ իմն է, բայց աղան էլ հաւասար իրաւունք ունի: Բայց աշխատողը միայն ես եմ, ես եմ մշակում: Աղան էլ ասում է՝ չես ուզում, մի՛ մշակի: Ինքը շատերի հետ է բաժնէտէր, բայց իմ հողը միայն այդ մի փոքր հողն է, ինչպէ՞ս չմշակեմ:

*- Իսկ ինչքա՞ն է ձեր հողի չափը:*

- Մենք չորս եղբայր ենք, շատ է (հողի չափը չի ասում - Հ.Խ.):

*- Իսկ հողը կարո՞ղ էք վաճառել: Գնորդ կը լինի՞:*

- Այո, հողի գնորդ շատ կայ: Բայց հողը դեռ լրիւ իմը չի: Եթէ կարողանամ աղայի բաժինը գնել, ցանկութեան դէպքում հողը կը կարողանամ վաճառել: Այստեղից շատ հեռու տեղ մի կտոր հող էլ ունէի, հեռաւորութեան պատճառով չէի կարողանում մշակել, այդ կտորը վաճառել եմ:

*- Իսկ հիմա, երբ որ ձեր գիւղը դատարկւում է, տները կարողանու՞մ են վաճառել: Գնորդ լինու՞մ է: Օրինակ այս տունը, եթէ ուզենաք, կարո՞ղ էք վաճառել:*

- Գալիս են գնորդներ, հարցնում են: Գիտեն, որ տեղացիները գնում են, գնորդներն իրենք են գալիս հարց ու փորձ անում:

*- Ի՞նչ էք ցանում այդ հողում:*

- Առուոյտ է անասունի համար, գարի է, ցորեն:

*- Հիմա ձեր գիւղում եկեղեցի չկայ. եկեղեցու աւերակ, էդ Յուսիկի զիարէ՞թն է միայն:*

- Եղել է, եկեղեցի եղել է, մարդիկ են քանդել: Քանդել են, քարերը տարել են, օգտագործել են շինարարութեան համար: Մեր գիւղի եկեղեցին հենց Յիւսուքի զիարէթի կողքին էր, քանդուած տեղերն էլ դեռ երեւում են: Այս ամբողջ տարածքի գիւղերում եկեղեցիներ շատ են եղել:

*- Բայց հայեր էին այդ մարդիկ, չէ՞, ձեր գիւղի հայե՞րն են քանդել:*

- Բոլորն էլ քանդել են: Աւերակ եկեղեցի էր, քարերը տարել են, պատերի մէջ շարել են: Այս կողքի գիւղերում էլ հայկական եկեղեցիներ կային: Հիմա չկան, ոչ մի տեղ չկայ: Շատերն էլ քանդում էին, որ տակից գանձ գտնեն: Բայց վերջերս խօսում են, որ իզուր քանդեցին: Հիմա շատ հայեր են գալիս Եւրոպայից, Ամերիկայից: Հիմա խօսում են, որ կարող էին այդ եկեղեցիներով զբօսաշրջութիւն զարգացնել:

Զուլֆիա եւ Զիա Փոլադ

*Յետոյ կինը ցոյց է տալիս տան պատերից մէկի մէջ փորուած պատուհանիկը, ասում է, որ նախկինում տները միմեանց կից էին կառուցում, եւ այդպիսի պատուհանիկներով միմեանց հետ հաղորդակցում էին, վտանգի դէպքում միմեանց զգուշացնում էին:*

*Դուրս ենք գալիս եւ գնում Յուսիկի գիարէթը լուսանկարելու, խնդրելով, որ ճանապարհին պատմի, թէ ինչ գիտի այդ սրբավայրի մասին: Յուսիկի սրբավայրը ծառի տակ մի միայնակ տապանաքար է: Զիա Փոլադն ասում է, որ հիմա հազուադէպ են գնում Յուսիկի սրբավայր, երբեմն-երբեմն մատաղներ են անում այնտեղ, բայց շատերը սահմափակւում են մոմ վառելով:*

*Տապանաքարը խիստ հողմահարուած էր, բայց վրան նշմարւում էին հին արձանագրութեան հետքեր: Այնպիսի տպաւորութիւն է, որ վրայի գրերը քերել են, բայց հետքերը երեւում են: Զիա Փոլադն ասում է, որ քարի տակն էլ, ծառի տակն էլ մարդիկ փորել են գանձ գտնելու յոյսով, հիմա ծառը համարեա չորացել է: Տապանաքարի մօտ յարմարեցուած քարից երեւում էր, որ յաճախ է մոմավառութիւն լինում:*

*Սրբավայրից մօտ հարիւր մետր հեռաւորութեան վրայ, նախկին եկեղեցու*

*տարածքում, տաշուած քարեր կային, միքանիսի վրայ՝ փոսեր, որպիսիք սովորաբար լինում են խաչքարերի տակի պատուանդան քարերի վրայ:*

*Ամենայն հաւանականութեամբ դրանք եկեղեցու մօտ կանգնեցուած կամ եկեղեցու շուրջ երբեմնի գերեզմանատան խաչքարերի կամ տապանաքարերի պատուանդաններ պէտք է եղած լինէին:*

Յուսիկի գիարէթը

*Յուսիկի սրբավայրին շատ մօտ մի տուն կար, որին յարող հարթ տարածքում մարդիկ էին նստած: Զիա Փոլադն ասաց, որ Գերմանիայից որդին իր ընտանիքով հօրը հիւր է եկել, նոյնպէս հայկական ծագումով ընտանիք է: Մօտեցանք, ծանօթացանք: Առաջարկեցին նստել: Մեր*

*հարցերին պատասխանում էր հիմնականում Գերմանիայից հիւր եկած որդին, երբեմն՝ նրա մայրը:*

*- Դուք Խոզրքէօյում երբուանի՞ց էք ապրում:*

- Վաղուց ենք ապրում:

*- Գիւղի պատմութիւնը գիտէ՞ք, երբուանի՞ց է, ովքե՞ր են ապրել:*

- Մենք յետոյ ենք այստեղ եկել, մեր պապի պապն է եկել: Մենք հին պատմութիւնը չգիտենք:

*- Որտեղի՞ց է եկել, ե՞րբ է եկել:*

- Նազիմիէի մօտից, Հաքիսից: Հին Հաքիսից[42]: Պապիս պապը հայ է եղել: Այնտեղ, Հաքիսում, Պետրոս Թեփէսի կայ, մեր պապինն է: Աւելի ճիշտ՝ մեր պապի պապինը: Իրենք երկու եղբայր են եղել, Միրաքներից էին: Դա Դերսիմում շատ յայտնի ընտանիք է եղել: 15ին իրենց ընտանիքներով փախել են, եկել են այս տարածքը, գնացել են նախ Դանաբուրան գիւղում են հաստատուել: Բայց յետոյ զինուորները եկել են, տեղի մարդկանց կանչել են, եւ այս մարդիկ մեր պապերին տարել են ա՛յ այնտեղ (ցոյց է տալիս լեռան լանջը) սպանել են: Իհարկէ պետութիւնն է հրահրել տեղացիներին: Տարել են, նոյնիսկ զէնք չեն օգտագործել, մեծ քլունգներով գլուխները ջարդել են: Զինուորներն են ստիպել տեղացիներին, որ սպանեն: Մերոնք պատմում են, որ երբ զինուորներն այստեղի գիւղացիներին ստիպում էին քլունգներով սրանց գլուխները ջարդել, մերոնցից մէկն ասել է, որ մի՛ արէք այդ բանը, մենք հարեւաններ ենք, մի՛ արէք, թէ չէ վաղն էլ ձեր գլուխներն են ջարդելու: Եւ իսկապէս էլ իրենց ետեւից էլ եկան 38 թուին: Բոլորին այստեղ սպանել են 38 թուին, գետն են գցել: Իհարկէ, ժողովուրդն էլ հայերի ոչնչացման մէջ իր մասը, իր դերակատարութիւնն ունէր: Հայերի գեղեցիկ աղջիկներին տարան, յետոյ էլ նոյն ձեւով Դերսիմի գեղեցիկ աղջիկներին տարան: Դրանից յետոյ ով կենդանի է մնացել՝ ալեւի են դարձել, անունները փոխել են, ձուլուել են:

*- Հիմա դուք Գերմանիայում էք ապրում: Այնտեղ ինչպէ՞ս էք ծանօթացւում, որպէս ի՞նչ՝ հա՞յ, ալեւի՞, քուրդ ալեւի՞, հայ ալեւի՞:*

- Ես էլ չգիտեմ, դրանց բոլորի մէջտեղերում եմ մնացել, ոչ մէկում ինձ լիարժէք չեմ համարում, չեմ զգում: Այդ խմբերից իւրաքանչիւրում իրենց հետ եմ: Իրականում ես ընկերվարական հայեացքներ ունեմ, այդ բաները ինձ համար կարեւոր չեն: Բայց Գերմանիայում մեզ որպէս քուրդ ալեւի են ընդունում:

*- Իսկ Գերմանիայում ձեր հայրենակիցների միջավայրում ի՞նչ լեզուով էք խօսում:*

- Քրդերէն: Քրդերէն ենք խօսում, քրմանջի, քանի որ այստեղ, մեր գիւղերում սուննի քրդեր են:
*- Իսկ ձեր երեխաներն էլ գիտե՞ն քրմանջերէն:*
- Հասկանում են, բայց չեն խօսում: Թուրքերէն էլ գիտեն: Նրանք Գերմանիայում են մեծանում, հիմնականում գերմաներէն են խօսում (հօր գրկում նստած տասնամեայ տղան, որ ուշադիր լսում է զրոյցը, միջամտում է. «Ես գերմաներէն թուրքերէնից աւելի լաւ գիտեմ»):

*- Կարծում էք երբեւէ կը վերադառնա՞ք Դերսիմ, թէ՞ կը մնաք Գերմանիայում:*
- Մենք, իհարկէ, մտածում ենք վերադառնալ, բայց այնտեղ՝ Գերմանիայում երեխաների համար աւելի լաւ է: Յետոյ էլ կնոջս այստեղ, հենց մեր դռան առաջ սպանեցին: 2001ին պետութեան զինուորներն սպանեցին: Սպանեցին ընկերվարական հայեացքների համար: Այստեղ մեզ համար ապրելը դժուար է: Մենք Հրանդ Դինքի հետ ընկերներ էինք: Մտածում էինք, որ 2004ին պիտի ինչ որ բաներ փոխուած լինէին, բայց մի մասի համար փոխուել է, մի մասի համար՝ չէ:
*- Ձեր պապական, հայկական պապական ազգանունն ի՞նչ էր:*
- Մենք Միրաքներից ենք:
*- Այստեղ բոլորը Միրաքների՞ց են:*
- Ոչ բոլորը: Մենք այստեղ Միրաքներից ինը ընտանիք էինք: Բայց յետոյ շատ են ցրուել մերոնք, Թուրքիայի բոլոր կողմերում մերոնցից մարդ կայ:
*- 1915ին բոլոր Միրաքներն ա՞յս գիւղ եկան:*
- Ոչ, շատերը *մարքեազ*[43], Ստամբուլ են գնացել:
*- Հիմա այդ նախկին Միրաքները միմեանց հետ կապ պահու՞մ են:*
- Ոչ, հիմա բոլորի ազգանունները փոխուել է, նոյնիսկ չգիտենք ովքեր են Միրաքներից: Պատմում են, որ միմեանցից բաժանուելիս յատուկ որոշել են ազգանունները փոխել, որ այլեւս հետապնդումների չենթարկուեն: Հիմա այլեւս իրար գտնել չենք կարող: Միրաքներից նոյնիսկ սուննի դարձածներ կան: Նրանք Էլազիկի կողմերը գնացին:

*Մենք հրաժեշտ ենք տալիս մեր հիւրընկալ տանտէրերին: Գիւղից դուրս գալիս վերջին տներից մէկի պատի շարուածքում տեսանք պարզունակ խաչքար, մեքենան կանգնեցրինք լուսանկարելու համար: Տանտէրերը դուրս եկան, հետաքրքրուեցին, թէ որտեղից ենք: Ասացինք, որ Հայաստանից ենք: «Ինչու՞ էք եկել»,- հետաքրքրուեց տանտիրուհին: Մինչ ես պատասխանում էի, տանտիրուհին նկատեց, որ պատի շարուածքի խաչքարը լուսանկարում ենք: «Մենք չենք այս քարը դրել, տունը*

*սարքողներն են դրել»: «Ե՞րբ է այս տունը սարքուել»,- հարցրինք: Մօտ վաթսունամեայ տանտիրուհին ասաց «Հին տուն է, ես այս տուն հարս եմ եկել՝ այս տանն էին ապրում, մինչեւ հիմա այս տանն ենք»: Տան պատին կար շինարարութեան տարեթիւը՝ 1932: Ուրեմն այդ ժամանակ արդէն եկեղեցու կամ նրա շրջակայքի քարերն օգտագործւում էին տների շինարարութեան համար:*

# ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅԵՐԸ ԱՆԱՏՈԼԻԱՅԻՑ ԵԿԱԾ ՀԱՅԵՐԻ ՀԱՅՈՒԹԻՆԸ՝ ՔԻՉ, ՔՐԴՈՒԹԻՆԸ՝ ՄԵԾ ԵՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ

*2011 Մեպտեմբերի 18ին Ստամբուլի մերձաւորութեամբ գտնուող Բոյաջըղ գիւղի հայկական Երեք Մանկունք Եկեղեցու բակում իսկական երաժշտական տօն էր: Այստեղ հաւաքուել էին Ստամբուլի հայերի «Սայեաթ Նովա» երգչախմբի անդամները, Հայաստանից ժամանած «Վան» համոյթը, թուրք երաժիշտներ: Ամբողջ օրը եկեղեցու բակում երգ ու պար էր, ուրախութիւն, երաժշտական մրցոյթ: Մասնակիցների մէջ էր նաեւ Ադիաման քաղաքից երիտասարդ մի ընտանիք՝ իրենց մանկահասակ տղաների հետ՝ Արազ եւ Արման անուններով: Ամուսինը փաստաբան էր: Ըստ թուրքական աղբիւրների*[44]*՝ Ադիամանում 1600 քրդացած հայերի ընտանիք կայ, եւ ես երիտասարդ փաստաբանի հետ սկսեցի զրուցել իր ընտանիքի անցեալի ու Ադիամանի իսլամացած հայերի մասին:*

- Մենք երբեք իսլամացած չենք եղել: Այո, Ադիամանում շատ *դէօնմէ*ներ կան, այդ թւում՝ մեր ազգականներից: Բայց մեր ընտանիքը միշտ հայ է եղել: Թղթի վրայ մեզ իսլամացած են գրել, բայց դա ոչինչ չէր նշանակում: Մեր պապերը ո՛չ կեղծ, ո՛չ իսկական իսլամութիւն չեն ընդունել, երբեք իսլամական աղօթատեղի չեն գնացել, եւ բոլորը դա գիտէին: Մեզ Ադիամանում միշտ Բաքըրչըլար անունով են ճանաչել: Բաքըրչըլար ասածը մեր ցեղի, երեւի կարելի է այդպէս ասել, մեր ազգականական ընտանիքներին տրուած անունն էր, կարելի է ասել՝ ազգանունն է, ցեղախումբն է: Աշիրէթի նման մի բան է, բայց աշիրէթ չի, աշիրէթ ասելն էլ սխալ է: Բոլորն ազգականներ են, բայց մեծ ընտանիք չի: Իսկ հիմա արդէն ցեղախումբ ասելն էլ դժուար է, որովհետեւ արդէն ցրուած ենք: Բայց Ադիամանում մինչեւ հիմա մեզ ուղղակի Բաքըրչի են ճանաչում:

Մեզ բոլորովին առանձին էին դասում, ո՛չ դէօնմէ էին ասում, ո՛չ հայ էին ասում, բաքըրչը են ասում: Այն փաստը, որ մերոնք երբեք ցուցադրական իսլամութիւն չեն ունեցել, մեր միջավայրում մեր նկատմամբ բացասական վերաբերմունք չի առաջացրել, մեզ մասնաւոր նեղութիւն չեն տուել, եւ նոյնիսկ աւելի շատ էին յարգում, քան դէօնմէներին: Բայց, իհարկէ, անուններս իսլամական անուններ էին, հայկական չէին: Իրականութեան մէջ մեզ ո՛չ քրիստոնեայ են համարել, ո՛չ իսլամ են համարել: Եւ երբեք իսլամական բարքերով չենք ապրել: Բայց քանի որ Բաքըրչըլար ասուած ընտանիքը ժամանակին շատ ուժեղ ընտանիք է եղել, հաւանաբար անցեալի յարգանքի բերումով մեզ շատ չեն անհանգստացրել: Ճիշտ է՝ մեր տղաներին աղջիկ չէին տալիս: Բայց

մեզնից աղջիկներ էին ուզում, հարս էին ուզում տանել: Անշուշտ որ հայերէն խօսել չգիտէինք: Հիմա էլ չգիտենք: Միշտ Ադիամանում ենք ապրել, միայն ուսանելու համար Ստամբուլ եկանք: Ընտանիքի մի մասը վաթսունականներին Ստամբուլ եկաւ, բայց մեծ մասը Ադիամանում մնաց:

Առաջինները, որ եկան 60ականներին, ստամբուլահայերի հետ քիչ յարաբերութիւն ունէին: Իրականում, կարելի է ասել, չունէին: Այն, ինչ որ կայ՝ օրինակ՝ մալաթիացիների հետ կապ կայ, Մալաթիայում ապրող մեր բարեկամները մերոնց հետ էին եկել: Այսինքն մերոնք շփւում էին գաւառից եկած իրենց ծանօթների, ազգականների հետ: Միայն: Բայց ծանօթներ, իհարկէ, ունէին: Այստեղ արդէն սկսեցին եկեղեցի գնալ, պաշտամունքի գնալ: Մալաթիացի բարեկամներ ունէինք, մեր կապերը նրանց միջոցով էր:

Մենք, երիտասարդներս, աւելի առաջ գնացինք: Ես, օրինակ, Հայաստան գնացի, այնտեղ եմ պսակուել քրիստոնէական կանոնով: Երեխաներս էլ արդէն հայի անուններ ունեն՝ Արազ, Արման: Բայց ես դեռ Բաքըրչը եմ: Կրօնական զգացումներս ուժեղ չեն, հաւատացեալ չեմ: Իմ քրիստոնէութիւնն ուղղակի «քրիստոնեայ եմ» ասել, «հայ եմ» ասել կը նշանակի: Այսինքն աւելի ազգութիւն է, քան՝ կրօն:

Անշուշտ Ադիամանում մենք բացառութիւն ենք: Աւելի, անհամեմատ աւելի են դէօնմէները: Մեր ընտանիքի մէկ ճիւղն էլ է իսլամացել: Այդ շառաւիղը Ուրֆայում է ապրում: Նրանք շատ հաւատացեալ իսլամներ են դարձել: Կարծում եմ՝ երբեք չեն վերադառնայ քրիստոնէութեան[45]: Շատ բարդ խնդիր է նրանց զգացմունքների խնդիրը: Միշտ մուսուլմանի պէս են ապրել, մուսուլման են իրապէս: Բայց նոյնիսկ նրանց մէջ շատ անսպասելի դէպքեր են պատահում: Օրինակ՝ լուրջ մուսուլմանի նման ապրող բարեկամներ ունենք, միշտ շատ լրջօրէն են իսլամին հետեւել, մզկիթ գնացել, նամազ բռնել, ծոմ պահել: Իսլամական բոլոր կանոնները: Բայց եկան այստեղ՝ Ստամբուլ, եւ այստեղ՝ եկեղեցում երեխաներին քրիստոնեայ դարձրեցին: Այսինքն ինքը վաղուց է Ստամբուլ տեղափոխուել, տաս տարի էլ այստեղ էր մզկիթ գնում: Ո՞վ կարող է ասել՝ ինչքա՞ն է տանջուել, մտածել այդ մարդը, որ վերջապէս կրօնափոխուել է, որոշել է երեխաներին քրիստոնեայ մկրտել եւ ինքն էլ մկրտուել է: Բայց հանդիպեցինք: Ասում է՝ մուսուլմանի պէս ապրելիս ինձ քրիստոնեայ են ասում, այսպէս՝ քրիստոնեայի պէս ապրելիս էլ՝ մուսուլման են ասում: Դա շատ ծանր, բարդ խնդիր է: Մնում է, որ մարդն ինքն իրեն բնութագրի, իր առանցքը գտնի: Կենցաղ է նոյնպէս: Սերունդներով մահմեդականի նման ապրած մարդը չի կարող միանգամից իր կենցաղը փոխել: Ոմանք կրօնափոխւում են, բայց կենցաղը մնում է: Չէ՞ որ տարբեր մշակոյթ են՝ հագնելը, ուտելը,

ընտանեկան յարաբերութիւնները, մարդկային յարաբերութիւնները, կին-տղամարդ յարաբերութիւնները: Այդ մարդն ինքն իրեն աւելի քրիստոնեայ է զգում, քան մահմեդական, բայց քրիստոնեաները նրան աւելի մահմեդական են ընդունում, քան քրիստոնեայ: Հիմա սա էլ դէօնմէ է, դէօնմէի մի տեսակ է: Չ՞է որ կրկին կրօնափոխուել է: Դէօնմէն միայն իսլամացած քրիստոնեան չէ: Իր հասարակական կեցութեամբ այդ մարդիկ, այսինքն՝ իսլամից քրիստոնեայ վերադարձածներն էլ դէօնմէ են: Ճիշտ է, նրանք այլեւս գաղտնի հայ չեն, բայց կրկին երկու համայնքներում էլ խորթ են: Եւ այդ տեսակ մարդիկ միայնակ են մնում: Ինչպէս իսլամացած դէօնմէները:

*- Դէօնմէները շատ քիչ են…*

- Ո՛չ, ո՛չ, ընդհակառակն, շատ են, գաղտնի են ապրում: Ճիշտ է, այդ բառը հիմա շատ տարածական է օգտագործւում: Երբեմն բոլոր կրօնափոխներին դէօնմէ են ասում: Կարծեմ ճիշտն այն է, որ դէօնմէն առերեւոյթ կրօնափոխուածներն են, ովքեր իրենք իրենց ներսում իրենց միշտ հայ են ճանաչում եւ հայ են համարում: Որովհետեւ շատ են նաեւ իսլամացած եւ իսկապէս հաւատացեալ իսլամ դարձածները, ովքեր այլեւս իրենք իրենց հայ չեն ճանաչում եւ չեն ուզում ճանաչել: Հանգիստ են իսլամի մէջ եւ հաշտ են իրենց ինքնութեան հետ: Նրանք գուցէ աւելի շատ են, չգիտեմ: Բայց իմ իմացածովս շատ են նաեւ գաղտնի ապրող դէօնմէները: Նրանք ժամանակին ոչ մի խմբի հետ մի տեսակ չմիացան, առանձին են ոնց որ թէ: Նրանք ո՛չ մուսուլմաններից, ո՛չ քրիստոնեաներից աղջիկ չեն առնում, ոչ էլ ուզում են, միշտ իրենց մէջ են ամուսնանում[46]: Միմեանց ճանաչողները փնտռողներին ցոյց են տալիս, միջնորդը գաղտնիքը գիտի, այդ պատճառով ոչինչ չես իմանայ: Միմեանց մասին bizimkiler են ասում՝ «մերոնքական», «մերոնքականներ»: Քեմալ Եալչընն[47] անունով գրող կայ, «բիզիմքիլէր»ի մասին գիրք է գրել: Մենք ենք նրան բացատրել այդ կապերը, նրա գրքում շատ լաւ նկարագրուած է: Նրա գրքի հերոսուհին՝ Սարը Գելինը, մեր հօրաքոյրի աղջիկն է: Բաքըրչըլար ընտանիքի պատմութիւնն է: Մի քիչ իրենց ինքնութիւնը քօղարկել են հօրաքոյրերս, բայց վերջ ի վերջոյ գրքի ընտանիքը Բաքըրչըլարներն են: Մեզ ասել են, որ իրենց ինքնութիւնը թաքցրել են: Գրքին մէջը ասում է, որ Բաքրրչիների հետ բարեկամութիւն արեցին եւ այնտեղ էլ հայ յայտնաբերեցին:

*- Դուք ինքներդ այս առերեւոյթ մահմեդական, բայց քրիստոնեայ պահպանուած հայերի մասին ե՞րբ իմացաք: Կստահ եմ, չգիտէիք սկզբից, սրանք նոր թեմաներ են, նոր խօսակցութիւններ են:*

- Շուտ ենք իմացել, բայց այսքան տարածուած լինելու մասին չգիտէինք: Մեր ընտանիքում «դէօնմէ» բառը ասում էին, բայց Ստամբուլում ապրող մի ընտանիքի մասին: Միւս յիշողութիւնս՝ փոքր երեխայ էի, մեր

հարեւանը հարսին «դէօնմէ» էր ասում: Հայ է, բայց գաղտնի էին պահում: Այդպէս մէկ անգամ, երկու անգամ՝ տեսանք, որ բաւական շատ են: Կարելի է ասել՝ լսել էինք, բայց ընդհանուր ծաւալը չգիտէինք: Ընդհանուր տարածուածութիւնը, խնդիրը չգիտէինք:

*- Դուք ինքներդ, որ միշտ հայ էք մնացել, բայց հայկական միջավայրում չէք եղել, ձեզ հայերի հետ ինչքանո՞վ էք կապուած զգում, կամ՝ հայկական միջավայրում հայ լինելու հետ կապուած ի՞նչ զգացմունքներ ունէք:*

- Դա երկար ասելիք է, այսպէս մի խօսքով չեմ կարող ասել: Երկակի խնդիր է:

*- Լաւ, հարցս այսպէս ձեւակերպեմ: Ստամբուլի հայութեան հետ շփումներում դուք որեւէ նեղուածութիւն զգու՞մ էք, թէ՞ նոյնն էք ձեզ զգում: Եւ եթէ զգում էք՝ այդ նեղուածութիւնը հայերի՞ վերաբերմունքից է, թէ՞ հայերի որոշ սովորութիւններից, մշակոյթից, այսինքն՝ կարո՞ղ է ինչ-որ բաներ օտար են ձեզ:*

- Մարդաբա՞ն է հիմա հետս խօսողը, թէ՞ թերթ, լրագրող:

*- Մարդաբան է, բայց բոլոր դէպքերում ստիպուած չէք պատասխանել:*

- Կ'ասէի, որ հայ եմ, բայց սա նոյնը չէ… այսինքն՝ իհարկէ ես հայ եմ, եւ սա միշտ այսպէս է եղել, ամբողջ ժամանակ, բայց… լաւ, հետաքրքիր հարց է, իհարկէ այս խնդիրը կայ… Թերեւս իսկապէս տարբերութիւն կայ: Այնպէս չի, որ ինձ թուայ՝ Ստամբուլի հայերն են աւելի հայ: Ես հայ եմ, եւ դա այդպէս է: Ես հաւատում եմ, որ մերոնց[48] հետ Ստամբուլի հայերի յարաբերութիւններում նեղուածութիւն կայ: Այդ նեղուածութեան աղբիւրը… թերեւս այն է, որ ստամբուլահայութիւնը եւ անատոլահայութիւնը իրար հետ միշտ հարցեր են ունեցել:

(*Խօսակցութեանը միջամտում է մէկ այլ տղամարդ*) - Նեղուածութիւններ չկան, պարզապէս 1915ից յետոյ Անատոլիայի մարդիկ հայերէն չգիտէին: Այսինքն՝ դասակարգի տարբերութիւններ կայ: Մէկը մալաթիացի հայ էր, հայերէն չգիտէր, բայց հայ է, միւսը՝ սեբաստացի… Ասում էք, որ ստամբուլահայերը եւ անատոլահայերը միշտ իրար հետ հարցեր են ունեցել: Բայց մենք արդէն իսկ ստամբուլահայ չենք, ես՝ չեմ: Հայրս մալաթիացի է, մայրս սեբաստացի է, այսինքն՝ ես ստամբուլցի հայ չեմ: Պոլսահայեր համարեա չկան[49]: Ստամբուլի հայերը միշտ գաւառներից եկան վերջին յիսնամեակում, եւ չի կարող մեծ տարբերութիւն լինել անատոլահայութեան հետ:

(*Աղիամանցին*) - Հիմա օրինակ՝ թէ՛ Ս. Երրորդութիւն եկեղեցում, թէ՛ ուրիշ հայկական հիմնադրամներում եղողների համար այս խնդիրը կայ: Ս. Երրորդութիւնում հիմա երկու խումբ կայ, եւ միմեանց հետ վէճի մէջ են: Խմբերից մէկը ստամբուլահայերն են՝ տարիներ ի վեր Երրորդութեան խորհրդում արդէն հաստատուած հայերը, եւ միւսն էլ բիթլիսցի, սասունցի եւն.: Ստամբուլահայերը միւսներին «քրօ» են անուանում:

«Քրօ»ն գիտէ՞ք ինչ է, քուրդ է քրօն: «Սրանք հայ չեն,- ասում են,- հայերէն անգամ չգիտեն»: Բայց հենց իրենք էլ, կամ՝ իրենց ծնողները հայերէն Ստամբուլում սովորեցին: Գաւառում կա՛մ քրդախօս էին, կա՛մ՝ թրքախօս: Հիմա սրանք Անատոլիայից եկածներին քրդահայեր են ընդունում, քուրդ են ընդունում որպէս, հայութիւնը՝ քիչ, քրդութիւնը՝ մեծ են ընդունում, իսկ Անատոլիայից եկածները... Ճիշտ է՝ ուրիշ հարցեր էլ կան, նիւթականի հարցեր կան: Միւսները պնդում են, որ թաղային խորհուրդը հաւաքուած դրամը, ճիշտ կարիքների վրայ չի ծախսում: Քուրդ հայերն այդպէս են մտածում, եւ սա նոյնպէս առիթ է նրանց նկատմամբ մերժողաբար վարուելու:

(*Կողքից մի կին*) - Այնպէս չի, որ Անատոլիայից նոր եկածները՝ բիթլիսցիները, սասունցիները, այսինքն քուրդ կոչուածները միւսներից պակաս են, երբեմն աւելի հարուստ են եւ նիւթականի խնդիր չունեն:

(*Ադիամանցին*) - Նրանք նիւթականի համար չեն վիճում, նրանք արդարութեան համար են վիճում: Շատ հինէն Ստամբուլ գաղթողները[50], ովքեր այժմ Ստամբուլում յայտնի կարողութեան տէր են, իսկապէս էլ տարբեր կերպ են մտածում: Նրանք համակարգի, իշխանութեան հետ աւելի կապուած են, աւելի համերաշխ են պետութեան հետ, աւելի լուռ են, ձայն չեն հանում կարեւոր հարցերի շուրջ, վախենում են, ոստիկանութեանն են շատ սիրում (աւելի՝ ոստիկանութեանը շատ ենթակայ են - Հ.Խ.), իրենց կողքը միշտ մէկերը կան եւն.: Այսինքն նրանք վարժուել են կառավարութեան, պաշտօնեաներին հետ միշտ զիջող դիրքերում լինել: Բայց նոր գաղթողներն աւելի ըմբոստ են:

(*Կողքից միջամտում է նոյն կինը*) - Ըմբոստութիւնը քրդութիւնից է գալիս:

(*Ադիամանցին*) - Ստամբուլահայերը աշխատում են կառավարութեան, պաշտօնեաների հետ իրենց հարցերը համերաշխ ճամփաներով լուծել, պետութեան հետ լեզու գտնել, յաճախ՝ համաձայնելով: Միւսները չեն ուզում այսպէս լեզու գտնելով ապրել, սրանք յաճախ կռուով են ուզում իրենց նպատակին հասնել: Ստամբուլի հայերն էլ սրանից վախենում են, որովհետեւ իրենք արդէն հանգիստ կեանք ունեն եւ սա կը խաթարուի, կը քանդուի, որովհետեւ միւսներն էլ հայ են: Անունով հայ են ի վերջոյ: Չեն ուզում պատասխանատու լինել նրանց համար, եւ կարծեմ սրա ձեւերից մէկն էլ նրանց հայ ընդունելը դժուարացնելն է:

(*Կին*) - Իրականում մեզնից շատերն էլ իրենցից են: Օրինակ իմ ընտանիքս յիսունականներին է գաղթել Ստամբուլ Հայաստանից[51]: Արեւելքից:

(*Մէկ այլ տղամարդ*) - Իմ զգացածովս Ստամբուլի բոլոր հայերն ինձ համար հայեր են:

(*Ադիամանցին*) - Անշուշտ, եւ դա է իրականութիւնը: Ես միայն զգացմունքների մասին եմ պատմում:



# ԹՈՒՆՋԵԼԻԻ ՀԱՅԸ
## (Եթէ գրես՝ կը գրես Էնվէր, փակագծում՝ Ասատուր)

*Թունջելիում հայ հարցնելիս շարունակ լսում էինք Էնվէր Դեւլեթլի անունը: Սովորաբար բոլորն էլ ասում էին, որ Դերսիմում ալեւիների մէջ շատ կան նախկին հայեր («հայ-ալեւի» կամ «ալեւի-հայ» եզրը հազուադէպ է գործածւում, աւելի կիրառական է «նախկին հայեր» եզրը), բայց որպէս առկայ հայ յիշատակում էին Էնվէր Դեւլեթլու անունը: Երբ մեր զրուցակից Իբրահիմ Օզէրին, ում ծնողները 1938ին դեռեւս «հայ էին եղել», հարցրինք, թէ ինչու, օրինակ, իրեն հայ չեն անուանում, իսկ Էնվէր Դեւլեթլիին հայ են անուանում, ասաց, որ նախ՝ նրա ծնողներն աւելի ուշ են ալեւիացել, քան միւս հայերինը, երկրորդ՝ Էնվէրն ինքն իրեն վերջին հինգ-վեց տարիներին հայ է անուանում: Մեր մէկ այլ զրուցակիցը, բուն ալեւի, Դերսիմի ներքին ընկերային բոլոր կապերն ու զարգացումները լաւ իմացող մի երաժիշտ, որոշ թաքնուած զայրոյթով էր խօսում Էնվէր Դեւլեթլու «եւ նրա նմանների մասին», ովքեր, նրա կարծիքով, որոշակի շրջանակներում իրենց հայ լինելը շեշտում են յատուկ նպատակներով. «փորձում են դիւիդենտներ շահել»: Ումի՞ց շահել, ինչպէ՞ս շահել: Ալեւի մտաւորականը գտնում էր, որ իրենց հայկական ինքնութիւնը արթնացնելու երեւոյթները սկսուել են Հայաստանից վերջերս Դերսիմ եւ Ստամբուլ այցելող հայաստանցի հայերի պատճառով, որոնց հետ ինչ որ ակնկալիքներ են կապում հայկական ինքնութեան մասին խօսող նախկին հայ ալեւիները: «Ի՞նչ ակնկալիքներ»: Տարբեր, այդ թւում՝ նիւթական: Իրենց հայ ինքնութեան վերականգնման կամ այդ ինքնութեան մասին խօսելու շնորհիւ նրանք որոշ ընկերային հարթակ են ստեղծում իրենց անհատական խնդիրները լուծելու,- ասում էր ալեւի մտաւորականը: Միւս կողմից Թունջելիում ակնյայտ էր, որ ալեւիացած հայերի հայկական ինքնութեան մասին խօսակցութիւններն շատացել էին, եւ այդ խօսակցութիւններն իսկապէս նեարդայնացնում էին ալեւիների ճակատագրով մտահոգ որոշ մտաւորականների: Թւում էր, որ նրանց մի մասի մօտ չձեւակերպուած տագնապ կար ալեւիացածների չմոռացուած հայկական ինքնութեան*

*վերազարթօնքի հնարաւորութեան շուրջ: Սկզբունքօրէն այդ տագնապները կարող էին սնուել տարբեր կանխատեսումներից..*
*Ա. ալեւիացած հայերը վերահայանալով նոր էթնօ-ընկերային շերտ կը կազմեն եւ կը դադարեն ալեւիական կախուածութիւն զգալուց, ինչն ինքնին առկայ ընկերային հաւասարակշռութեան խախտում է.*
*Բ. ալեւիացած հայերի վերահայացման դէպքում հայերը կը ձեւակերպեն իրենց մասնաւոր պահանջը թուրքական կառավարութիւնից եւ բուն Դերսիմում կը խախտի ալեւիական պահանջատիրութեան միատարրութիւնը, որն այս պահին ուղղուած է ալեւիական մասնաւոր ինքնութեան ճանաչմանը եւ 1938ի Դերսիմի ջարդերի ճանաչմանը.*
*Գ. ալեւիացած հայերի վերահայացման դէպքում հայերը Դերսիմում կը ձեւակերպեն իրենց էթնիկական ինքնութեան դրսեւորման անհրաժեշտութեան խնդիրը, ինչը կարող է նուազեցնել Դերսիմի ալեւիների մասնաւոր ինքնութեան դրսեւորման հնարաւորութիւնները, յատկապէս, որ Դերսիմի տարածքում հայկական եւ ալեւիական մշակութային մեծ տարբերութիւններ չկան: Ինքնութիւնների «առանձնացման» դէպքում հնարաւոր է թւում «մշակութային սեփականութեան» խնդրի առաջացումը, ինչը կարող է խիստ բարդ առճակատումների բերել երկու կողմերին եւն.: Այսպէս թէ այնպէս, Դերսիմում բնակուողների մէջ աւելի ու աւելի յաճախ է հնչում «ես հայ եմ» ձեւակերպումը, եւ այդ ձեւակերպումը ունի թէ՛ կողմնակիցներ, թէ՛ հակառակորդներ:*

*Էնվէր Դեւլեթլին ինքը սիրով արձագանգեց հանդիպելու եւ զրուցելու իմ առաջարկին: Հանդիպեցինք 2011 Յուլիսի վերջերին, Թունջելիում: Քանի որ այդ օրերին Դերսիմում ընթանում էր ամէնամեայ դարձած «Մնձուրի Փառատօն» կրկնուող համերգաշարը, խօսեցինք այն մասին, թէ ինչպէս է Դերսիմում ըմկալւում այդ փառատօնին Հայաստանից եկած խմբերի մասնակցութիւնը: Խօսք գնաց այն մասին, որ Հայաստանում այդպիսի փառատօն չկայ, մինչդեռ Դերսիմի տարածքում իրականացուող ամէնամեայ փառատօնը լրացուցիչ հնարաւորութիւն է հայութիւնը կորցրած մարդկանց հետ շփուելու:*
- Այո,- ասաց,- բայց սա էլ մեր՝ հայերիս հայրենիքն է, մեր էրգիրն է *(Էնվէրն օգտագործեց հենց հայերէն «էրգիր» բառը՝ հայրենիք իմաստով)*: Խօսում էինք թուրքերէն լեզուով:
*- Հիմա ես շատ կ'ուզենայի ձեզ հետ զրուցել: Թունջելիում ինչքան հայ հարցնում ենք՝ ձեր անունն են ասում: Այնպէս է ստացւում, որ այստեղ միայն ձե՛ր հայ լինելն է ճանաչւում: Ինչու՞: Ինչո՞ւ էք դուք տարբեր միւս ալեւիացած հայերից:*

- Իմ անունը Ասատուր է: Մեր ընտանիքում աւանդաբար օգտագործուած անուններից է Ասատուրը: Կային նաեւ Սարգիս, Մանուկ...
*- Հիմա ես կարո՞ղ եմ ձեզ դիմել Ասատուր անունով:*
- Այո, շատ լաւ, շատ գեղեցիկ կը լինի:
*- Ինձ ասել են, որ ձեր անունը Էնվէր Դեւլեթլի Բեդօ է: Բեդօն ո՞րն է, հայրանու՞նը: Ձեր հօր անունը Պետրո՞ս է եղել:*
- Մեզ Բեդոյի զաւակներ են ասել, բայց հօրս անունը Եուսուֆ էր: Բեդօ պէտք չի ասել, հիմա միայն Դեւլեթլի է, Էնվէր Դեւլեթլի: Հայերի համար՝ Ասատուր Դեւլեթլի:
*- Միրելի Ասատուր, հիմա կարո՞ղ էք ասել, թէ ինչու միայն ձեր ընտանիքի մասին են ասում, որ հայ էք:*
- Ես բացէիբաց ասում եմ, որ հայ եմ, եւ հպարտութիւն եմ զգում հայ լինելուս համար: Բոլորն էլ այդ գիտեն: Ես Ստամբուլում եմ ապրում: Այստեղ միայն ամառներն եմ գալիս: Ստամբուլում ինձ հայ չէին համարում, Ստամբուլի հայերն ինձ հայ չէին ընդունում: Այդ մասին շատ է խօսուել: Ժամանակին դեռ Հրանդն էր[52] այդ մասին խօսում: Հայկական համայնքում, պատրիարքարանում ընդհարումներ էին լինում, կարծիքները միմեանց հակառակ էին: Պատրիարքարանում շատ քննարկումներ են եղել: Համայնքը մեզ չէր ընդունում եւ նոյնիսկ իմ զաւակներին հայկական դպրոցում չէին սովորեցնում: Ես Ցեղասպանութեան կենդանի մնացորդ եմ, իսկ եկեղեցին մեզ ասում էր «գնացէք ձեր կրօնը փոխէք, գնացէք ձեր անունը փոխէք, յետոյ եկէք, համարուէք հայ»: Իմ Գէորգ եղբայրը Գերմանիայում է, միւս եղբայրս Սարգիս է, քոյրս՝ Ժանէտ: Բայց Թուրքիայում մեծ ճնշում կար, ոնց որ մահացու մեղքի նման բան է հայ լինելը: Ես Ստամբուլում որպէս հայ չեմ ապրել, բայց էստեղ բոլորը գիտեն, որ ես հայ եմ եւ դա ինձ դուր է գալիս, քանի որ էս առումով ես հանգիստ եմ: Բայց դա հեշտ բան չի: Ես դատարանում ունեցուածքի հետ կապուած գործ ունէի, սովորական գործ էր: Բայց ընդդիմադիր փաստաբաններից մէկը միշտ ինձ նեղում էր, գրում էր, որ ես հայ եմ, եւ դրանով զգուշացնում էր, այդ ձեւով փորձում էր ազդել դատաքննութեանը: Ես էլ դատաւորին ասեցի «պարոն դատաւոր, էն որ իրենք ունեցուածքի համար մեղադրանքներ են ներկայացրել, էդ որ գրել են, որ ես հայ եմ, էդ մի բանը ճիշտ է, մնացածը ինչ որ գրած է եղել, բոլորը սուտ են»:
*- Յետո՞յ, դատը ինչպէ՞ս վերջացաւ:*
- Չի վերջացել: Մենք հող ունենք, դաշտ ունենք, իրենք սխալ են գրանցել: Իրականում [ասենք] մեր հողը հինգ քառակուսի մետր է, կադաստրը վեց է գրել, մէկ քառակուսի մետր աւել է գրել: Հիմա մեզ ասում են «դուք յանցագործութիւն էք արել»: Բայց դա մեր խնդիրը չի, մեր ունեցուածքը սխալ գրանցել են եւ չեն ուզում ուղղել: Դա մեր մեղքը չի, դա կադաստրի

մեղքն է: Խնդրել ենք ուղղել սխալը, ճիշտ գրել, կադաստրն էլ ասում է՝ դիմէք դատարան: Մեր հողը, մեր տարածքը ուզում են մեր ձեռքից առնել: Իրենք սխալ գրել են, մեզ ասում են՝ յանցագործութիւն էք արել: Փոխանակ սխալն ուղղեն՝ մեզ գցել են դատարան: Անկարայում դատի ենք տուել, մենք շահել ենք այդ դատը, յետոյ բողոքարկել են: Ես Ստամբուլից բողոքս վերցրի, որովհետեւ ինձ չպաշտպանեց (նկատի ունի, որ օրէնքներով չշարժուեց դատարանը - Հ.Խ.): Շատ փող եմ ծախսել փաստաբանների եւ դատերի վրայ: Ստամբուլից փաստաթղթերը վերցրել եմ, հիմա Անկարայում է իմ գործը:

*- Քանի՞ տարի է ձեր ընտանիքը Թունջելիում է ապրում:*

- Մենք դերսիմցի ենք: Մենք, հայերս ամենահին դերսիմցիներն ենք: Ես երկու էջանոց քարտէզ ունեմ, բոլոր վանքերի տեղերը, եկեղեցիների տեղերը, Էրզրումի մի մասը, Մալաթիայի մի մասը... Թուրքերը չէին կարողանում Դերսիմը ղեկավարել, միայն սահմաններն էին ղեկավարում: Հայերը՝ Միրաքեանները, Ասոյեանները այստեղ, Դերսիմում շատ հզօր աշիրէթներ էին: Սուլթան Համիդը քրդերից բաղկացած համիդիէներ է կազմել, ասել է «գնացէք նրանց ոչնչացրէք, նրանց ունեցուածքը վերցրէք, բայց նրանց ոչնչացրէք»:

*- Միայն հայերի՞ նկատմամբ: Բայց չէ՞ որ այստեղ կային նաեւ ալեւի զազաներ, զազախսու եւ քրմանջախսու սուննիներ:*

- Սկզբում միայն հայերի նկատմամբ: Ուրիշների նկատմամբ յետոյ է ասել, սկզբում՝ միայն հայերի:

*- Ձեր նախնիներն այդ ժամանակ որտե՞ղ էին:*

- Կըզըլ Քիլիսէի[53] կողմերը Կարիէ գիւղ է եղել: 1985ին մերոնք Արեւելեան Դերսիմից եկել են Արեւմտեան Դերսիմ: 15ին մեր մեծերը, որպէսզի մենք փրկուենք, այնտեղից տեղափոխուել են Մարքէզ գիւղ, որտեղ իրենք իրենց հայի ինքնութիւնը պահել են: Մարքէզ, Մազգիթ, Խոզաթ, Չմշկազագ, Արզինջա, Էլազըկ[54]: Այդքան տեղերից բերել են այստեղ պահպանել են 1915ից: Մինչեւ 30ականները մենք մեր հայի ինքնութիւնը պահել ենք: 37ին ստիպել են եւ ամէն մէկին տարբեր տեղեր են ուղարկել, օրինակ իմ մօր ընտանիքը՝ Քութահիա, հօրս ընտանիքը՝ Անթալիա: Մենք գնում էինք որպէս դերսիմցիներ, ոչ որպէս հայեր: 38ից յետոյ Դերսիմը փոխուեց, քրդացաւ: Հենց մեր ժամանակ քրդացաւ:

*Ասատուր-Էնվէրը լռում է: Յետոյ շարունակում է.*

- Մեր ընտանիքի ազգանունը Դեւլըթլի է եղել: Տաս տարի յետոյ վերադարձել են, եկել են նոյն տեղը: Մերոնք ետ են եկել, որպէսզի կարողանան մեր հոգեւոր կեանքը հոգան, որովհետեւ ճիշտ է, բոլոր եկեղեցիները ոչնչացուել էին, բայց այդ եկեղեցիների քարերը, տեղերը մնացել էին: Եթէ մնացել էին, ուրեմն ամէն մի տուն կարող էր դառնալ եկեղեցի, եթէ քարերի խորհրդանիշը կար:

*- Քանի՞ հոգի այդպէս վերադարձան տաս տարի յետոյ, միայն ձե՞ր ընտանիքը, թէ՞ շատերը:*
- Մեր ազգականները բոլորը եկել են, Ասոյեանները եկան: Բայց մնացածները ոնց որ մնացել են:
*- Որտե՞ղ են ապրում նրանք հիմա:*
- Ստամբուլում են ապրում: Պօղոսի թոռան երկու զաւակներն էլ այստեղ են: Պապիս որդիները՝ Պօղոսն ու Սարգիսը եկան: Իմ պապի անունը Սարգիս էր: Պօղոսի եւ Սարգիսի զաւակներն այստեղ են, Դերսիմում: Իմ հօր գերեզմանը սարքելիս «Սարգիսի որդի Եուսուֆ» գրեցինք գերեզմանի վրայ:
*- Հիմա այդ գերեզմանաքարերը կա՞ն:*
- Կան, բոլորը գնում են, նկարում են: Երկուսն էլ կան: Պապիս որդիները, մէկը Պօղոս, միւսը՝ Սարգիս:
*- Իսկ ուրիշ հայկական անուններով գերզմանաքարեր չկա՞ն:*
- Մամիկ կայ: 80ականներին ասկեարները եկել են այստեղ, բոլոր հետքերը վերացրել են: Դրանից շուտ էլ են եկել, ամէն ինչը քանդել են: Այդ չար բաները յաճախ անում են նաեւ ոսկու համար, որովհետեւ ոսկի են փնտռում: Գերեզմանաքարերը, խաչքարերը շուռ են տալիս, ջարդում են ոսկու համար:
*- Ձեր ընտանիքը ո՞ր աշիրէթից էր:*
- Մայրս Միրաքեաններից էր, հայրս՝ Ասոյեաններից:
*- Այստեղ, Դերսիմում, Միրաքեանների գիւղերը որո՞նք են:*
- Չեմ ասի:
*- Ինչու՞:*
- Քանի որ այս պետութիւնը վախենալու պետութիւն է: 93ին 37 տղամարդ կենդանի-կենդանի վառեցին: Էս պետութիւնը նոյնիսկ երեխաներին է սպանում: Դերսիմում բոլորը հայ են, բայց բոլորը չեն ասում այդ մասին, չեն խոստովանում, միայն ես եմ ասում: Իրենք իրենց ալեւի են անուանում:
*- Ինչպէ՞ս կարող է մարդը ալեւի դառնալ: Օրինակ եթէ ես գամ եւ ասեմ, որ ուզում եմ ալեւի դառնալ, ինչպէ՞ս կարող եմ ալեւի դառնալ, ի՞նչ պիտի անեմ:*
- Ալեւին արգելուած մի հատ հաւատք է: Իրականում դուք Գրիգորեա՞ն էք (նկատի ունի քրիստոնէութեան հայկական ուղղութիւնը - Հ.Խ.), ես էլ եմ Գրիգորեան: Նրանք էլ, նրանք էլ… Մէկն ասում է Մուհամմէդ, միւսը՝ Յիսուս: Սուննիների ու մեր հաւատքները նոյնն են: Ալեւիները փիրեր[55] են լինում, քրմեր են լինում, կաղանդ են անում, այսինքն նոյն Գրիգորեանն են, բոլորը մէկ են՝ հայ - Գրիգորեան, Դերսիմ, ալեւի: Միայն ալեւիները Մուհամմէդի անունն են տալիս, մնացած ամէն ինչ նոյնն է: Բայց ալեւին մարդուն, մարդկութեանն է կարեւորում,

ալեւիականութեան համար ամենակարեւորը մարդն է, ոչ թէ հաւատքը, լեզուն: Պետութիւնը նրանց միշտ հետապնդել է, այդ պատճառով էլ ալեւիները կրօնական, հասարակական կազմակերպութիւններ չունեն, կառուցուածք չունեն: Շատերը չեն էլ գնում այդ աղօթատեղիները, սրբավայրերը: Ուզում եմ ասել կրօնը շատ չի կարեւորւում: Միայն թաղումների ժամանակ է, որ, ասենք, թաղում կայ, միայն այդ ժամանակ են էդ արարողակարգը պահպանում, թէ չէ չեն էլ գնում այդ աղօթատեղիները:

*- Այստեղ ասում են, որ ձեր ընտանիքը հարուստ է եղել: Ձեր ընտանիքը իր հարստութիւնը, իր ունեցուածքը կորցրե՞լ է. 38ի՞ն, աւելի՞ ու՞շ, աւելի՞ շու՞տ:*

- Իմ հօրեղբայրը, հօրիցս մեծ հօրեղբայրս այստեղ շատ յարգուած, համայնքը ղեկավարող, հարցեր լուծող մի մարդ է եղել: Մենք մեր սեփականութեան վկայականները՝ կալուածների[56] վկայականները ունէինք, բայց կորցրել ենք: Գնացէք նայէք, հարցրէք, 20ականներին ո՞վ է թափու (կալուածաթուղթ – Հ.Խ.) ունեցել: Ոչ ոք էլ չունէր, զոռով ձեռքներից վերցրել են: Իմ պապերը հայերէն գիտէին, «Հայր մեր» էին կարդում: Մենք տեղացի ենք, մենք եկած չենք, հենց դերսիմցի ենք:

*- Դուք գիտէ՞ք ձեր պապական ունեցուածքը, հողերը որտեղ են:*

- Ոչ, ես չգիտեմ (*ասում է յապաղելով, կարծես թէ՝ չուզենալով*):

*- Իմ հարցը հետեւեալն է: Յայտնի է, որ 15ին Դերսիմի առանձին գիւղեր ասկեարները չմտան, տեղական քրդերը չմտան եւ հայերին չկոտորեցին: Այդ բանը յայտնի է: Ձեր ընտանիքն այդ ժամանակ որոշապէս ո՞ր գիւղում էր ապրում, ո՞ր տարածքում, որտե՞ղ կոտորեցին, որտե՞ղ չմտան:*

*Ասատուր-Էնվէրը յապաղում է, մտածում է: Լռութիւն:*

*- Լաւ, այս հարցը չեմ տալիս, գանք ժամանակակից կեանքին: Ձեր երեխաներն իրենք իրենց ինչպէ՞ս են անուանում՝ հայ, ալեւի, թուրք, ինչպէ՞ս:*

- Իրենք իրենց հայ լինելը գիտեն: Գիտեն նաեւ, որ ես միշտ հպարտանում եմ հայ լինելուս համար: Բայց այստեղ, Թուրքիայում, շատ դժուար է հայ լինել, հայ ապրել: Այս հասարակութիւնը թալանող հասարակութիւն է: Այստեղ ասում են հայը լաւն է, էս է, էն է, բայց հենց որ մի փոքր առիթ է լինում՝ անմիջապէս գլխիդ բամփում են: Նոյնիսկ այստեղ, Դերսիմում, հայերին գովում են, նրանց մասին լաւ են խօսում, ասում են հայերը այսպէս օգնեցին, այնպէս օգնեցին, բայց յարմար պահին կարող է կատաղեն, յարձակուեն, ճանկռոտեն: Ալեւիները հայերին լաւ են վերաբերում, որովհետեւ աշխատասէր, վարպետ, կօշիկ սարքող ժողովուրդ են հայերը: Քանի որ Դերսիմը պետութեան հետ շատ կապ չի ունեցել, եւ չէին կարող պետութիւնից ապրանքներ ներմուծել, հայերի մնալն այստեղ ձեռնտու էր: Եթէ հայերին սպանէին, կօշիկ կարելը, բանը

ո՞վ էր անելու: Դրա համար էլ պահել են: Ճիշտ է, ասել են «մենք եղբայր ենք», բայց եթէ իրենք խնդիր են ունենում, կարող են ինձ սպանել, հային սպանել, վատութիւն անել:

*- Բայց դա կարող են մէկը միւսին էլ անել, ալեւին՝ ալեւիին:*

- Այստեղ հայը միշտ պէտք է զգուշ լինի: Հայ ես՝ պիտի տաս, պիտի վճարես: Հայը օսմանցիներին միշտ սնուցել է: Ես երեք տղայ ունեմ, երեքն էլ համալսարան են աւարտել: Մէկը համակարգիչների մասնագէտ է, միւսը ճարտարապետ է, երրորդն ուսուցիչ է, աստղագիտութիւն է սովորել: Նրանք սովորաբար ասում են, որ դերսիմցի են: Բայց իրենց հայ լինելը գիտեն: Ոչ մէկը դեռ ամուսնացած չի: Ես միշտ իրենց ասում եմ, որ պէտք է կա՛մ հայի, կա՛մ ալեւիի հետ ամուսնանան (ծիծաղում է)… բայց Ստամբուլում դա դժուար է: Յետոյ էլ իրենց միջավայրը ո՛չ հայկական է, ո՛չ՝ ալեւիական:

*- Հիմա դուք Ստամբուլի հայկական համայնքի հետ չէ՞ք շփւում:*

- Ինչու՞ չէ, շփւում եմ: Բայց նրանք ինձ այդպէս էլ որպէս հայ չընդունեցին: Հրանդը հասկանում էր մեզ, նա էլ մեզնից մէկն էր: Բայց Հրանդին ընդունում էին: Նա հայկական դպրոց էր գնացել, հայերէն խօսում էր: Նա ալեւի չէր, բայց հայկական միջավայրում չէր ծնուել: Նա լաւ էր հասկանում մահմեդականացած հայերի վիճակը, ինքնութիւնը: Շատ էր խօսում այդ մասին: Հրանդին Ստամբուլում յաճախ էին հրաւիրում այնտեղի թրքական ֆաշիստական, ազգայնական խմբերը: Հրաւիրում էին, որպէսզի անուանարկեն: Բայց Հրանդը գնում էր, նրանց հետ երկար խօսում էր, զրուցում էր: Հրանդին կանչում էին անուանարկելու համար, բայց նրա խօսելուց յետոյ նրան դէմ եղողներն էլ ծափահարում էին: Յետոյ այդ նոյն մարդիկ նրա սպանուելուց յետոյ դագաղի ետեւը կանգնած էին: Նա լաւ էր հասկանում բոլորին՝ թուրքերին, ալեւիներին, հայերին, հայից մահմեդականացածներին: Բոլորի հետ կարողանում էր խօսել: Հրանդից յետոյ այլեւս հայկական համայնքում այդ խնդիրները բարձրացնողներ չկան:

*- Ձեր երեխաների անուններն ի՞նչ են:*

- Մէկը Ումուդ է, մէկը՝ Ուֆուգ, երրորդը՝ Ուսկան:

*- Ուսկա՞ն: Հայկական Ոսկանի՞ց է:*

- Ուսկան թուրքերէնով խելացի արեւ է նշանակում:

*- Բայց Ուսկան անունն առհասարակ տարածուա՞ծ անուն է:*

- Չէ, շատ տարածուած չի: Բոլորը Ուսխան են դնում, ես Ուսկան եմ դրել, որպէսզի հայերէնի հետ մօտիկ լինի:

*- Իսկ Ձեր կինը ալեւի՞է, ո՞ր աշիրէթից է:*

- Ալեւի է, Ալան աշիրէթից է: Բոլոր աշիրէթներում հայեր կան:

*- Դերսիմ բառի որեւէ բացատրութիւն լսե՞լ էք:*

- Դերսիմը Դէր-Սիմոնից է գալիս[57]: Բայց մի հատ էլ վարկած կայ, որ իբր 2-3000 տարի առաջ ուրարտական ժամանակաշրջանում այստեղ մի հատ թագաւորի որդի է եղել, որի անունով այս տարածքը Դերսիմ է կոչուել: Հայերի հետքերն այստեղ շատ-շատ են: 40 աստիճանանոց քարից սարքած մի հատ յուշարձան կայ: Այս տարածքը փորելուց անընդհատ հայկական յուշարձաններ, քարեր են գտնում, խաչեր, եկեղեցիների հետքեր: Պետութիւնն այդ բոլորը վերցնում, տանում է:

*- Հայաստանում երբեւէ եղե՞լ էք:*

- Ուզում եմ գնալ, բայց վախ կայ մէջս:

*- Ինչու՞, ինչի՞ց էք վախենում:*

- Աւելի շուտ ամաչում եմ: Անունիս պատճառով: Էնվէր … Էնվէրն[58] ինչպէ՞ս կարող է Հայաստան գնալ,- ասում է ժպտալով:- Բայց մի օր գնալու եմ: Գնալու եմ իմ մեքենայով, Վրաստանով եմ անցնելու: Հարկաւոր է միայն թղթերս կարգի բերել:

*- Միրելի Ասատուր, ես Դերսիմում իմ զրոյցները հրատարակելու եմ: Դուք դէմ չէ՞ք լինի, եթէ ձեզ հետ իմ զրոյցն էլ հրատարակեմ: Հրատարակելիս կարող եմ ձեր անունը փոխել, այլ անուն գրել:*

- Ես դէմ չեմ: Եթէ գրես՝ կը գրես Էնվէր, փակագծում՝ Ասատուր: Այդպէս աւելի լաւ կը լինի:



# «ՍՈՎՈՐԱԲԱՐ ՄԱՐԴՈՒ ԾԱԳՈՒՄԸ, ՈՐՔԱՆ ԷԼ ԹԱՔՑՆԻ, ԻՆՉ ՈՐ ԿԵՐՊ ԻՄԱՑԻՈՒՄ Է:... ԵՐԵԽԱՆԵՐԸ ՍՈՎՈՐԵԼ ԵՆ ՀԱՐՑԵՐ ՉՏԱԼ»

*2011ին Դերսիմի Հազս[59] գիւղից վերադառնում էինք Թունջելի: Հազս գիւղի մասին պատմել էին, որ այնտեղ մինչեւ 1990ականների սկզբները ալեւիների հետ միասին հայեր են ապրելիս եղել, եւ մենք մի փոքր խմբով գնացել էինք տեսնելու «հայկական հետքերը»: Արդէն հեռուից զգացւում էր, որ գիւղն աւերակների է վերածուել: Սակայն տեղ-տեղ երեւում էին չքանդուած տանիքներ, եւ դա յուսադրող էր: Չնայած Յուլիս ամիսն էր, գիւղական աշխատանքի եռուն շրջանը, Հազսում համարեա մարդ չկար: Գիւղի ամայի փողոցներով թափառելով՝ դրանցից մէկի վրայ մի տուն տեսանք, որտեղ երկու տղամարդ էին աշխատում: Տունն էին վերանորոգում: Մօտեցանք, բարեւեցինք, ծանօթացանք: Մէկի անունը Հուսէյին էր, միւսինը՝ Զէյթուն:*

*Հուսէյինն ու Զէյթունը մեզ հրաւիրեցին պատշգամբ: Տանտէրը՝ Հուսէյինը, իմանալով մեր այցելութեան նպատակը, ասաց, որ իր տատն էլ է հայ:*

- Մեր գիւղը խառը գիւղ է եղել: Դժուար էր ասել, ով է հայ, ով՝ ալեւի: Բոլորն էլ խառն ամուսնութիւններով միշտ կապուած են եղել: Ինչ որ հիմա ձեզ պատմում եմ, մեր պապերն են մեզ պատմել, ես չեմ տեսել: Իմ տեսածը միայն 1994ից յետոն է: Բայց այս գիւղը եօթ անգամ աւերուել է, յետոյ նորից մարդիկ ետ են վերադարձել: Դերսիմի վրայ միշտ յարձակումներ եղել են: Իշխանութիւնը միշտ ուզեցել է Դերսիմը դատարկել: Մեր Հաքիս գիւղը եօթ անգամ դատարկել են: Բայց 1915ին հայերի կոտորածներ էին, միայն հայերին էին սպանում: Դրա համար էլ մեր գիւղի հայերին ալեւի են ասել, այսինքն մեր գիւղացիներն ասել են, որ այստեղ հայ չկայ բոլորն էլ ալեւի են: Այդ պատճառով մեր գիւղ չեն մտել: Բայց 1937ին, այսինքն՝ մինչեւ Դերսիմի 1938ի դէպքերը, բոլոր հայերին, ով հայ էր մնացել, խփել են, կրակել են: Բայց մեր գիւղում արդէն հայ չկար, բոլորն էլ ալեւի էին: Մի տարի յետոյ, արդէն 1938ին, բոլորիս ջարդեցին: Մեր ընտանիքից էլ է շատ մարդ զոհուել: Այդ ժամանակ գիւղում ոչ մի տուն չմնաց, բոլորն աւերուեցին: Այս գիւղում հիմա ամէն ինչը մենք նոր ենք սարքել, ամենահին տունը էս շրջանում [19]57-58ին է կառուցուել: Դրանք էլ 1994ին նորից քանդեցին:

Որոշակիօրէն, հենց մեր տանը, այս տանը, որտեղ հիմա նստած ենք, 90ականների էդ ՊԿԿականները[60] որոնելու ժամանակ, զինուորականներ էին մնում: Մեզ տնից հանել էին, մեր տնեցիներին ջարդել էին, եւ այդ գործողութիւնը անելու ժամանակ, պարտիզանների ղեկավարներին որոնելու ժամանակ, մեր տանը զինուորականներ էին ապրում: Մեր ընտանիքը երկար ժամանակ ապրելու տեղ չէր գտնում: Յետոյ Ստամբուլ գնացինք, մեծ քաղաք է, օրավարձով աշխատում էինք, մինչեւ կամաց կամաց տեղաւորուեցինք: Զինուորականների գնալուց յետոյ ես ամառները մէկ-մէկ գալիս եմ, փորձում եմ վերականգնել մեր տունը:

*- Շատե՞ր են վերադարձել:*

- Չէ, շատերը վախենում են ետ գալ: Վախենում են, որովհետեւ էդ 90ականներին էդ պարտիզանական շարժումների պատճառով, կառավարութեան գաղտնի գործակալութիւնը մարդկանց տանում էր, չարչարում էր, հարցաքննութիւններ էր անում, էս էին անում, էն էին անում, եւ մարդիկ աշխատում էին չմնալ այստեղ: Մենք էլ ենք միայն ամռանը գալիս, ընտանիքս հիմա Ստամբուլում է, Ստամբուլում ենք ապրում: Ձմռանն այստեղ ամայի է, երեւի մի չորս-հինգ տան մէջ պառաւներ են մնում:

*- Իսկ այս գիւղի բնակիչները հիմա որտե՞ղ են:*

- Ստամբուլ, ամէն տեղ էլ կան: Էրզնջա: Թունջելի: Տարբեր տեղեր, Գերմանիայում… Կառավարութիւնը մեր գիւղացիներին գիւղից հանելուց յետոյ ասել է «որտեղ ուզում ես, գնա՛ ապրի, միայն թէ այստեղ չապրես»: Ու ոչինչ չի տուել, ոչ մի կոպեկ: Փաստօրէն իրենց տները քանդել է, բայց փոխարէնը ոչինչ չի տուել: Մարդիկ էլ ո՞նց ապրէին, ամէն ինչ կորցրած: Երեխաներ էինք, շատերը երեխաներ էին, մի կերպ ամէն մէկը մի տեղ գլուխը պահել է, մի կտոր հաց է գտել:

*- Այն ժամանակ ձեր գիւղում ինչքա՞ն մարդ կար:*

- 90ականները չեմ կարող ասել, բայց 1950ականներին հաստատ կարող եմ ասել, որ ընտրողների թիւը - որովհետեւ եկել են այստեղ ընտրութիւնների համար ձայն են ուզել, չէ՞ - 1200 ընտրող է ունեցել, էդ հաստատ կարող եմ ասել:

*- Ձեր գիւղի հարեւան գիւղերի բնակիչներն ի՞նչ եղան:*

- Մեր գիւղին ամենամօտը Հոլմէքն[61] է: Նա մեզնից կախուած է եւ նոյն ճակատագիրն է ունեցել: Մալքոջը[62], Քիւզուլը[63]՝ նոյնը: Հիմա եօթ հատ տուն Մալքոջում կայ, 26 հատ էլ Հոլմէքում կայ, նա աւելի մեծ է, աւելի բնակեցուած է այդ գիւղը:

*- Իրենք ո՞ր աշիրէթի մարդիկ էին, էս գիւղի ժողովուրդը:*

- Քիւզուլը՝ Քասան աշիրէթից են, Հոլմէքը՝ Քուդան:

*- Էդ աշիրէթների շէյխերը կամ փիրերը չկարողացա՞ն ձեզ ոչնչով օգնել:*

- 1915ին 29 հատ փիրերից, դեղէներից հաւաքել են եւ Մալաթիայի ձորում քարով խփել են, գլուխները ջարդել են: Փիրերն ու դեղէները[64] վախեցած էին, յետոյ էլ կառավարութեան դէմ նրանք ի՞նչ կարող էին անել:

*- Յիսունականների այդ 1200 ընտրողներից որքա՞նը հայ կը լինէին, որքա՞նը՝ զազա ալեւի:*

- Մենք դա չենք կարող ոչ մի ձեւով ասել, որովհետեւ ոնց էլ բռնես, մենք իրար աղջիկ տալիս-առնում էինք արդէն, թէ հայ ու քուրդ բան չէր, տարբեր չէր, որ կողմից էլ վերցնես, ուզում ես քրդերի կողմից վերցնես, եթէ ուզում ես հայերի կողմից վերցրու, ոնց հաշուենք ինքնութիւնը ալեւիութիւն է, այդպէս եմ հասկանում: Որովհետեւ բռնես դրանց կողմից՝ անպայման այն կողմից հայ կը լինի, այստեղից բռնես՝ քուրդ կը լինի: Իմ հօր անունն էլ Մերգօ էր: Պապական: Դրանով եմ իմացել, որ հայկական ծագում ունի: Ես էդ բաները յայտնաբերեցի, որովհետեւ ես սեփականութեան համար դատի մէջ եմ, այդպիսի հայտ ունեմ, հին թղթերս սկսել եմ վերականգնել սեփականութեան հետ կապուած ու յայտնաբերել եմ, որ պապիս անունն էլ Հնար է: Մենք լսել ենք, որ դեռ տատիկներ կային, որոնք հայերէն էին խօսում, 70ականներին դեռ կային: Էն դիմացի ափում կային այդպիսի տատիկներ, 60ական, 70ականներին, որոնք խօսում էին հայերէն: Նրանք իրենց անունները չէին փոխել: Իմ հօրս տատիկը, Եղօ էր անունը, նոյնպէս հայերէն էր խօսում:

*- Հիմա այս գիւղում որեւէ մէկը հայերէն լեզուից որեւէ բան գիտի՞:*

- Չէ, այստեղ հիմա չեն խօսում հայերէն: Դպրոց գնալիս նոյնիսկ զազայերէնն էր արգելուած, չէին խօսում: Դպրոցի ներսում արգելուած էր զազայերէն խօսել: Հայերն էլ, ճիշտ է, սկզբից կառավարութեան վախից են ընդունել էդ ալեւիութիւնը, բայց հիմա ոչ մի նշանակութիւն չունի, որովհետեւ, ասում եմ, չէ՞, միշտ էլ եղել է, որ մենք աղջիկ տղայ ենք իրար տուել, հայ լինելու ժամանակներից էլ: Բոլորս էլ իրար ազգական ենք դարձել:

*- 15 թուին ուրիշ գիւղից փրկուած փախստական հայեր այս գիւղում կայի՞ն, թէ՞ միայն այս գիւղի բնակիչներն են եղել:*

- Ջահել տասը աղջիկ է եկել էս գիւղի մէջ, անմիջապէս ամուսնացել են ու հենց այդպէս էլ փրկուել են: Մեր պապերն էին պատմում: Ասում էր՝ նրանք փախչում էին, փախուստի ճանապարհներին մերոնք տեսել, վերցրել, բերել են այստեղ, ամուսնացել են ու այդպէս խառնուել են:

*- Միրելի Հուսէյին, դուք եւ Զէյթունը, որ հիմա միասին աշխատում էք այս տան վրայ, եղբայրնե՞ր էք:*

- Չէ, մենք ընկերներ ենք: Հին: Դա էլ պատմութիւն ունի: Պապս պատմում էր, որ մի անգամ, 1915ի ժամանակ, գիւղ գալու ճանապարհին, ձորում գետերի միախառնման մի տեղ կայ, որ գալիս մօտենում է այդ տեղին, տեսնում է, որ մի հատ աղջիկ ուզում է իրեն ջուրը գցի: Պապս ասում է

«սպասի, քեզ ջուրը մի գցի»: Աղջիկն ասում է «ինձ կը սպանեն, իմ էրեխէքին էլ կը սպանեն»: Այնտեղ երեխաներ են լինում. երկու տղայ երեխայ է լինում: Պապս դրան վերցնում է, ասում է «արի մենք քեզ տանենք մեր տուն, կը պահենք, ոչ մի բան չի լինի, մի վախեցի»: Բերում է էս աղջիկը ու մեր գիւղում յետոյ ամուսնանում է: Այդ աղջիկը Զէյթունի տատն է: Իմ պապն է իր տատին փրկել: Ու մենք ընտանիքներով միշտ ընկերներ ենք:

*- Փաստօրէն ձեր երկուսի տատերն էլ հայեր են:*

- Այո: Հաքիսում բոլորի տատերը կամ պապերը հայեր են: Բայց հիմա ես իմացայ, որ իմ հայրն էլ է հայ եղել: Այսինքն կարող է պապս էլ, տատս էլ հայեր են եղել: Բայց իրենք չէին ասում: Մարդիկ իրենց հայ լինելու մասին չէին խօսում: Իմ դէպքում ես դա յետոյ եմ հասկացել: Փատաթղթերից:

*- Ուրեմն կարելի է ասել, որ դու էլ ես հայ:*

- Չգիտեմ, դէ հիմա մենք բոլորս էլ քուրդ ենք, ալեւի ենք: Հնում հայ շատ է եղել: Այս գիւղում եօթ հատ եկեղեցի կար: Մեր գիւղի թաղերից մէկը հենց Քիլիսէ էր կոչւում: Հիմա էլ է Քիլիսէ կոչւում: Իսկապէս էլ այդտեղ եկեղեցի է եղել: Մենք երեխայ ժամանակ խաղում էինք աւերակներում, քարեր էլ կային մնացած: Բայց հիմա ոչինչ չի մնացել: Ոչ մի հետք:

**Քիլիսէ թաղամասից հատուած, 2011**

*- Միրելի Հուսէյին, ձեր տանը դուք զազայերէ՞ն էք խօսում հիմա:*

- Այո, զազայերէն:

*- Ձեր ծնողներն է՞լ էին տանը զազայերէն խօսում:*

- Այո, միշտ զազայերէն ենք խօսել: Միայն դպրոցում էինք թուրքերէն խօսում: Այն ժամանակ դպրոց գնացող երեխաները նոյնիսկ թուրքերէն չգիտէին, դպրոցում էին սովորում: Իսկ հիմա էլ գիւղում մարդ չի մնացել, ցրուել են աշխարհով մէկ: Հիմա մեր երեխաները Ստամբուլում թուրքերէնը միանգամից սովորում են, կարելի է ասել՝ աւելի շատ թուրքերէն են խօսում:

*- Հիմա դուք ձեր մասին խօսելիս ասացիք, որ հիմա բոլորդ էլ քուրդ էք, ալեւի էք: Դա նո՞յն բանն է:*

- Մենք ալեւի ենք: Մեր մասին ասում են քուրդ ալեւի: Քուրդն, իհարկէ, աւելի շատ սուննի քուրդն է: Բայց ալեւիներին էլ են շատերը քուրդ ասում: Ստամբուլում ենք ապրում, եւ սովորել ենք մեզ քուրդ ասել: Չես

կարող անընդհատ հակադրուելով ապրել: Բայց Հաքիսում ապրելու ժամանակ քուրդ չէինք ասում, միայն՝ ալեւի: Կամ՝ կզլբաշ: Ստամբուլում ալեւի կամ կզլբաշ լինելն աւելի դժուար է, քան քուրդ լինելը:
*Հուսէյինի ու Զէյթունի հետ երկար զրուցեցինք, բայց հիմա այդ զրոյցի մանրամասները մի կողմ թողնելով՝ ներկայացնեմ սոյն պատմութեան գլխաւոր հերոսին՝ Ք.ին*[65]*:*
*Երեկոյանում էր, երբ Հազս գիւղից դուրս եկանք Թունջելի վերադառնալու: Ճանապարհի ոլորաններից մէկում մի միայնակ մարդու տեսանք, ով նոյնպէս իջնում էր դէպի Խութի կիրճ, որտեղով մենք պէտք է անցնէինք: Մեր վարորդը կանգնեցրեց մեքենան եւ առաջարկեց նստել: Մարդը լուռ նստեց մեքենան: Մենք մեքենայում շարունակում էինք քննարկել Հազսում մեր տեսածներն ու լսածները: Քանի որ Հազս այցելելու ժամանակ մեզ ուղեկցում էր Դերսիմի մեր այցելութիւններին մեծապէս օգնած Մեթին Կահրամանը, խօսում էինք թուրքերէն: Մեզ միացած մարդն ուշադիր եւ խիստ հետքրքրուած լսում էր: Հասկանալով, որ մենք Հայաստանից ենք, մարդը ինձ կամացուկ, համարեա շշուկով ասաց, որ իր արմատներն էլ են հայկական: Հազս (մարդն ասում էր թուրքական հնչիւնափոխութեամբ՝ «Հաքիս») գիւղի հայերից էր: Մենք արդէն մօտեցել էինք Հարչիկ գետի ափի թէյարաններից մէկին: Առաջարկեցի դադար անել, թէյ խմել եւ զրուցել: Լուռ համաձայնուեց:*

*Ք.ն խօսում էր կամացուկ, երկար դադարներով, մտածելով ամէն պատասխան, մի տեսակ զգուշաւոր: Նրա ծնողներն ալեւիացել են 1915ի հայկական ջարդերից յետոյ, Հազսի հայ բնակչութեան հետ միասին: Նրա հայրական կողմի ընտանիքը որեւէ զոհ չի տուել 1915ին, ինչպէս Հազսի գիւղացիների մեծ մասը, սակայն մայրական պապին* «վերցրել են նրա երեք երեխաների հետ միասին, երեք տղաների, տարել են իբրեւ թէ գաղթի: Դա եղել է արդէն ալեւիացումից յետոյ: Միայն կնոջս պապը չէր, ուրիշ տղամարդիկ էլ կային՝ տղայ երեխաների հետ: Գաղթի ճանապարհին հասկանում են, որ իրենց տանում են սպանելու, արդէն շատերին սպանել էին: Մեծահասակները մտածում են մի ելք գտնել, գոնէ երեխաներին փրկել: Երեխաներին մի կերպ հասկացնում են, ասում են մենք մեծերով ասկեարներին կը շրջապատենք, դուք անմիջապէս փախէք: Բայց, ասում են, տարբեր կողմեր կը փախչէք, ոչ թէ նոյն ուղղութեամբ: Նպատակն այն էր, որ ասկեարները չհասցնեն բոլորի ետեւից վազել բռնել: Մտածում են, որ գոնէ երեխաների մի մասը կը փրկուի: Այդպէս են անում: Այստեղ կիրճեր են, երեխաները փախչում են սարի լանջն ի վեր: Մօրս հայրը շատ հսկայ մէկն է լինում, ածդահայ, գրկում է մի ասկեարի: Այդպէս, մեծերից իւրաքանչիւրը որեւէ կերպ փորձում է ասկեարներին խանգարել՝ վազել երեխաների ետեւից կամ

կրակել: Բայց ասկեարներն, իհարկէ, շուտով ազատւում են նրանց գրկից, կամ կրակում սպանում են իրենց խանգարողներին եւ սկսում են կրակել փախչող երեխաների վրայ: Հիմա թէ ինչքանն է սպանւում, ինչքանն է վիրաւորւում, որքանն են փրկւում՝ չգիտեմ, բայց փրկուողներ լինում են: Մօրս երկու եղբայրներին էլ սպանում են, բայց մէկը փրկւում է: Այդ փրկուած տղային բերում են եուզբաշու մօտ, ու այդ երեխան ասում է «եուզբաշի, ինչու՞ էք մեզ սպանում, չէ՞ որ մենք մուսուլման ենք»: Եուզբաշին զարմանում է երեխայի ասածի վրայ եւ տղային թոյլ է տալիս վերադառնալ: Դա իմ քեռին էր եւ ինքն է մեզ պատմել այդ մասին»: Ք.ն, սակայն, գտնում է, որ անկախ իր քեռու մասնաւոր դէպքից, մահմեդականացած հայերին էլ էին սպանում: Բաւական էր, որ մարդը հայ էր, կրօնը փրկութիւն չէր: Այդ պատճառով էլ Դերսիմի ալեւիացած հայերն իրենց ոչ թէ հայ ալեւի էին անուանում, այլ միայն՝ ալեւի, եւ արգելել էին ընտանիքներում հայերէն խօսել: Բայց ալեւի լինելն էլ չփրկեց: 1938ին կոտորում էին ալեւիներին, եւ առաջին հերթին՝ նորադարձ հայ ալեւիներին:

*Ք.ի պատմելով Հարչիկի ափերի բոլոր գիւղերը նախկինում հայկական գիւղեր էին: Մի մասը գոհ գնաց 1915ին հայկական ջարդերին, փրկուածները փախան կա՛մ Հայաստան, կա՛մ՝ Լիբանան: Իր ազգականներից էլ շատերը Հայաստանում են, բայց հետները երբեւէ կապ չի եղել եւ չգիտի, թէ ովքեր կան կամ որտեղ են ապրում: Մնացողները բոլորը ալեւիացել են: Դա փրկութեան միակ միջոցն էր: Դերսիմում դա հնարաւոր էր, որովհետեւ մինչեւ այդ էլ շատ հայեր էին ալեւիացել, եւ հայի ալեւիացումը առանձնայատուկ մի բան չէր: Յետոյ, աւելի ուշ, 1938ին դերսիմցիների ջարդերից յետոյ մինչեւ յիսունականները, եւ 1994ին գիւղերի աւերումներից յետոյ մինչեւ այսօր Դերսիմից շատերն են արտագաղթել եւ արտագաղթում (Ք.ն ձեռքով ցոյց է տալիս սարերը)՝* «այստեղ, սարերի վրայ, ամէնուր քանդուած տներ են: Այնտեղ առաջ հայեր էին ապրում: Միք[66] գիւղ կար, Հաքիսից աւելի վերեւ, որտեղ 600 տուն հայեր էին: Գիւղի անունը յետոյ փոխեցին, Գէօկչէք դարձրին: Հիմա մարդ չկայ: Վարդենիկ գիւղը նախ կոտորեցին 1938ին, իսկ յետոյ, վերադարձողներին, ջարդելով տեղահանեցին 1994ին: Հիմա մարդ չկայ: Հայերից յետոյ այդ գիւղերում Հանգերուան[67] աշիրէթն էր եկել մտել, բայց նրանց էլ ցրեցին: Այստեղ, որտեղ մենք հիմա նստած ենք, այս Հարչիկի ափերին հայերը թութուն էին աճեցնում, բամբակ էին աճեցնում, մեքենաներ կային, եւ կտորեղէնի արտադրութիւն կար այստեղ: Դրանք բոլորը հայերն էին գործածում: Բայց 15ից յետոյ բոլոր այդ գործարար մարդկանց հաւաքեցին, որովհետեւ գիտէին, որ նրանք հայ են, չնայած ալեւի էին դարձել: Յետոյ, հանրապետական շրջանում, նոյն բանը շարունակւում էր»:

1938ից յետոյ նախ փախչում էին, իսկ յետոյ աւելի դանդաղ՝ տեղափոխւում: Իր ծնողներն էլ Ստամբուլ են գնացել յիսունականների սկզբին: Հաստատուել են Գեդիկ Փաշա թաղամասում: Այստեղից նոյնպէս յետագայում իր ազգականների մի մասը գնացել են Հայաստան: Հագսի իրենց տունը, ճիշտ է՝ աւերուած, մնացել է, եւ ինքը երբեմն ամառները գալիս է Հագս: Այժմ Հագսի անունը փոխել են, Բէյիւք են կոչում: Բայց բոլորը շարունակում են գործածել նախկին անունը: Մարդկանց անունները նոյնպէս, բնականաբար, փոխուել է. *«իմ մամայի անունը Հերմինէ է, հօրս անունը՝ Եուսուֆ, բայց նրա հօր անունը Սարգիս էր: Հիմա այդպիսի անուններ չեն դնում»*:

Իր՝ Ք.ի ընտանիքը հարուստ ընտանիք է եղել, բայց հարստութիւնը կորցրել են 1915ի ջարդերի ժամանակ: Իրենց համագիւղացի ալեւիները, ճիշտ է, չեն մատնել իրենց, չեն ջարդել, բայց իրենց հարստութիւնը փաստացի խլել են: Կա՛մ կեանքը պէտք է տային, կա՛մ՝ հարստութիւնը: Յետագայում ապրելու բարդութիւնները շատ էին: Նախ՝ ջարդերից յետոյ հայերին միշտ փնտռում էին: Հագսն արդէն յայտնի էր որպէս բացառապէս ալեւիական գիւղ: Դա հայկական ծագում ունեցողներին փրկում էր, բայց միաժամանակ կախման մէջ էր գցում համագիւղացի ալեւիներից: Ամենափոքր վիրաւորանքը կարող էր վերաճել մատնութեան: Աւելի ուշ, երեսունութից յետոյ իրենք ալեւիներն էին հետապնդումների թիրախ, իսկ ալեւիացած հայերը կրկնակի թիրախ էին՝ որպէս նախկին հայեր եւ ներկայի ալեւիներ:

*«Սովորաբար մարդու ծագումը, որքան էլ թաքցնի, ինչ որ կերպ իմացւում է*,- ասում է Ք.ն,- *Մարդիկ գերադասում են լռել, թաքցնել իրենց հայկական ծագումը կամ հայկական ակունքները: Դիարբեքիրում աշխատելիս ինձ գեաւուր էին ասում, մինչեւ գործատէրս աշխատակիցներին չսաստեց, թէ՝ ի՞նչ յիմար բաներ էք անում: Քանի աշխատում էի պետական հիմնարկներում, իմ ալեւի լինելը չէի ասում»*:

Չնայած ինքը պետական հիմնարկներում աշխատել է, բայց շատ լաւ իմանալով իր խոցելի ծագումը, երբեք ստուերային գործարքների չի գնացել, ուստի փող ունենալ չէր կարող: Այդ պատճառով երկու տարի աշխատել է Լիբիայում, եւ այնտեղից բերած փողերով Ստամբուլում երկու տուն է գնել: Հագսի իրենց տունը, գիւղի այլ տների հետ, աւերել են իննսունականներին:

Ք.ի կնոջ մայրական կողմը լրիւ հայկական է: Ամուսնութիւնների ժամանակ գերադասում են *«իրենց նմաններին, քանի որ թաքցնելիք ունեն եւ համատեղ թաքցնելիքը տանելի է դարձնում ընտանեկան կեանքը: Մարդ չի կարող կնոջից կամ ամուսնուց, բայց յատկապէս նրանց ազգակցական-ընտանեկան համակարգից իր ով լինելն անընդհատ թաքցնել»*:

Մարդիկ վախենում էին խօսել իրենց ծագման թեմաներով: **Այնուամենայնիւ «մինչեւ եօթանասունականները» վատ չէր, յետոյ հայերին «որսում էին»[68], եւ ով խնամքով չէր թաքցրել անցեալը՝ յաճախ էր հարուածի տակ ընկնում:** Միքանի անգամ եօթանասունականներից յետոյ հայերին խումբ խումբ հաւաքել են: Ք.ի կարծիքով տարել սպանել են: Յամենայն դէպս տարածներից ոչ մէկն այլեւս չի վերադարձել: Մեծահասակները ջանում էին իրենց երեխաներին իրենցից հեռացնել, մեծ քաղաքներում ազգականների տներում հայկական հետքերը «կորցնել»: Իննսունականներին ջարդեցին ալեւիական գիւղերը, ցրեցին: Մինչ այդ, այդ գիւղերում հայկական ծագում ունեցող մարդկանց ցուցակներն էին կազմել եւ, իհարկէ, առաջին հարուածը հայերին էր:

Այն հարցին, թէ ինչու, իր կարծիքով, եղաւ այդ ողբերգութիւնը, Ռասուլն ասաց, որ այս ողբերգութիւնը եղաւ, քանի որ իրենք տարբեր էին ընդհանուրից, յետոյ Բալկաններից իրենց 'թուրքերի' նմաններին բերեցին: *«Պէտք էր ազատուել տարբերուողներից եւ տեղաւորել իրենց նմաններին: Բայց սա ի՛մ դատողութիւնն է: Իմ ծնողները, մեր պապերը վախենում էին այդ մասին խօսել: Առհասարակ մարդիկ վախենում էին մի բան պատմէին, իմացողը մահացաւ, գնաց, դրա համար մենք ի՞նչ ենք իմանում, մեզ ոչ մի բան չեն պատմել: Նոյնը՝ մենք: Ոչինչ չենք պատմում մեր երեխաներին»:*

Ք.ի երեք երեխաներից երկուսն արտասահմանում են, մէկը Կանադա, միւսը՝ Գերմանիա: Իրենց ընտանիքում միշտ խուսափել են խօսել անցեալից եւ ծագումից, երեխաները սովորել են հարցեր չտալ: Իրենց հայկական արմատների մասին նրանք խօսել խուսափում են եւ չեն հետաքրքրւում: Մի տեսակ լուռ շրջանցում են այդ թեման, եւ իրենց հերթին խուսափում են իրենց շրջապատում խօսել իրենց նախ հայկական, ապա, եթէ հնարաւոր է՝ նաեւ ալեւիական կապերի-ծագման մասին: Խիստ անհրաժեշտութեան դէպքում ամենաշատը, որ կարող են ասել՝ «Մենք Թունջելիից ենք», «Ես Թունջելիից եմ»: Այդպէս են պահում իրենց նաեւ Գերմանիայում եւ Կանադայում, շարունակում եմ խուսափել ծագումնաբանական հարցերից: Յամենայն դէպս այդպէս է կարծում Ք.ն: Նրանք գիտեն իրենց գիւղի, իրենց հայ եւ ալեւի շրջապատի հետ տեղի ունեցածը, բայց գիտեն ոչ թէ իրենց ընտանիքի միջոցով, այլ մանկութեան շրջանից պատառիկներով իրենց շրջապատում լսած կիսատ-պռատ խօսակցութիւններից, ակնարկներից, մեծահասակների մտահոգութիւններից:

Ք.ն շատ է շրջել, սովոր է լուռ աշխատանքի: Առհասարակ սովորել է լռել: Աւելի շատ լսում է: Լռում էին իր ծնողները, լռում են իրենք, լռում են նաեւ իր զաւակները: Դեռ քանի՞ սերունդ պիտի լռեն: Խօսում է թուրքերէն եւ զազայերէն, ընտանիքից յիշողութիւն մնացած մի քանի հայերէն բառ գիտի: Դրանք արտասանում է նեղուելով, իր ընտանիքում, իր

երեխաներին երբեք չի ասել այդ բառերը եւ նրանք հազիւ թէ գիտեն իրենց հօր այդ փոքրիկ իմացութիւնների մասին:
Հայերի եւ հայութեան մասին Ք.ի պատկերացումները դրական են,- հայերը հարուստ էին, ստեղծագործող, աշխատող... Թունջելի-Դերսիմում հայերը շատ բան են ստեղծել:

# ԵՍ ՀԱՅ ՉԵՄ, ԱՆՇՈՒՇՏ. ՉՆԱՅԱԾ ԻՄ ԲՈԼՈՐ ԱԶԳԱԿԱՆՆԵՐՆ, ԻՍԿԱՊԷՍ, ԿԱՐԾԵՍ ԹԷ ՀԱՅԵՐ ԵՆ

*Ներգիսը մտաւորական կին է, Ստամբուլի կարեւոր համալսարաններից մէկի դասախօս: Անտարբեր է կրօնի նկատմամբ: Նախնիների մէջ կան թուրքեր, քրդեր, հայեր: Ամէնից աւելի կապուած է հայ ազգականների հետ: Նրա հետ ծանօթացել եմ Ստամբուլում, իր հայ ազգականներից մէկի տանը եւ խնդրել եմ պատմել իր «հայկական զծի» մասին: Ներգիսը ծնուել է 1954ին:*

Մայրիկս՝ Ռեմզիէն իսլամ դարձած հայ մօրից է ծնուել: Այսինքն՝ տատս հայ էր, ջարդերի զոհերից մէկը: Շուտ մահացաւ մայրիկս, արդէն երեսուն տարի կայ, բայց շատ զգայուն կին էր: Հայրս ինքն իրեն թուրք էր համարում մինչեւ մահանալը: 2000ին մահացաւ, Եուսուֆ էր անունը: Շատ լաւ, մեղմ, փափուկ մարդ էր: Եթէ հաւատամ մեր ընտանեկան պատմութեանը, իրականութեան մէջ հայրիկս էլ գուցէ հայից թրքացած լինի: Որովհետեւ մեր ընտանեկան աւանդութեան համաձայն մեծ հայրս Մալաթիայում ապրող հայ է եղել, քուրդ աղջիկ է փախցրել եւ փախել Գէօքսիւն, Մարաշի մի նահանգը: Բնականաբար թաքնուել է, քանի որ հայ մէկը քուրդ աղջիկ փախցնելու դէպքում պիտի սպանուէր: Ուրեմն նաեւ անձնագիրը «կորցրել է», եւ նոր անձնագրով «թուրք» է դարձել: Նրա զաւակները, այդ թւում հայրիկս երբեք չիմացան՝ իրենց հայրիկը քուրդ էր, թուրք էր, հայ էր: Միայն ազգականներիցս մէկը մահանալիս հայրիկիս վստահեցրել է, որ մեծ հայրիկս քուրդ է եղել: Այդպիսով հայրս կարծես թէ քուրդ պիտի լինէր: Յամենայն դէպս մահանալիս ինքն իրեն քուրդ էր համարում: Սակայն վերջերս մօրաքոյրերիցս մէկը պատմեց, որ մեծ հայրիկս կարծես թէ երիտասարդ ժամանակ այնուամենայնիւ հայ է եղել: Հնարաւոր է միանգամայն, որովհետեւ մեծ հայրիկիս մասին նաեւ «թուրք» էին ասում, եւ եթէ մեծ հայրիկս իր ինքնութիւնը հայից պիտի փոխէր չսպանուելու համար, առաւել ապահովը «թուրք» դառնալն էր:
Հայրս գիւղատնտես էր, պետական պաշտօնեայ: Մայրիկս Մարաշից էր եւ, ինչպէս ասացի, իսլամ դարձած հայ մայրիկ է ունեցել ու քուրդ հայր: Արդիւնքում կարող է այնպէս է, որ հայրական պապս է հայ, մայրական տատս: Բայց հայրս մահանալիս ինքն իրեն քուրդ էր համարում:
Մայրական տատս նախ Աղաւնի էր անունը, քրիստոնեայ ժամանակ: Մահմեդական դառնալուց յետոյ Նազիրէ եղաւ: Աղաւնին շատ ողբերգական օրեր է ունեցել, եւ մայրս միշտ շատ էր տառապում նրա համար: Ցեղասպանութեան ժամանակ, կամ ինչպէս մեզ մօտ են ասում,

տեղահանութեան, աքսորի ժամանակ մեծ մայրիկս տասնհինգ-տասնվեց տարեկան աղջիկ էր եւ իրենց ընտանիքի ամենափոքրն էր: Կիւրինում[69] էին ապրում: Սեբաստիայում է: Տեղահանութեան օրերին իր հօրը սպանում են, իսկ իրենց ոտքով, կարաւանի հետ ճամփայ են գցում:
Ճանապարհին, երբ Էլբիստան[70] են հասնում, կարաւանով գնացողներին պէտք է գցէին Բոստանլը գետը: Աւշըն կոչուող վայր կայ, գիւղաքաղաք կարելի է ասել, Աւշինում ինչ որ մի առիթով այնպէս է ստացւում, որ Աղաւնին իր ընկերուհու հետ մտնում է փոստի բաժանմունք: Այստեղ նրան տեսնում է մեծ հայրիկիս եղբայրը, որ փոստատան տնօրէնն էր: Մուրադը: Շատ է հաւանում եւ յանձնարարում է Աղաւնիին տանել իր ընկերոջ տուն: Անմիջապէս իր տուն չի ուղարկում, որովհետեւ տանն արդէն մի քանի կին ունէր: Մեծ հայրիկս՝ Օքէշը նոյնպէս եղբօր հետ էր աշխատում: Օքէշը նոյնպէս տեսնում է Աղաւնիին եւ իր եղբօր նման շատ հաւանում է նրան: Գնում է Մուրադի ընկերոջ տուն, ասում է, որ Մուրադն է իրեն ուղարկել Աղաւնիին տանելու, առնում է Աղաւնիին եւ անմիջապէս իր տուն է տանում: Օքէշի առաջին կինը մահացել էր, իսկ երկրորդ կինը տանն էր: Աղաւնիին տանում է իրեն որպէս երկրորդ կին: Եղբայրը՝ Մուրադը գալիս է, եղբայրների մէջ մեծ կռիւ է լինում, նոյնիսկ միմեանց վրայ կրակում են: Վերջապէս Աղաւնիին են թողնում ընտրութիւնը: Աղաւնին Օքէշին է ընտրում: Մուրադը՝ Շուքրան էֆենդին, յետոյ Դէր Զօրից մէկ այլ հայ աղջիկ բերեց, իրեն կին արեց: Խարփուրցի[71] էր, Հուրիան, նախկին՝ հայկական անունը Ֆլորիսա էր: Ֆլորիսային եւ իր մօրը Դէր Զօրից բերեց: Եղբայրները որոշ ժամանակ թշնամացած էին միմեանց դէմ:
Այնուհետեւ Աղաւնին արդէն Նազիրէ էր եւ մահմեդական էր համարւում: Մէկ տարի անց աղջիկ զաւակ է ունենում: Ապագայ մօրաքոյրս էր: Այդ ժամանակ Աղաւնիի եղբայրը, Սարգիս անունով, զինուորութիւնից վերադառնում է: Սարգիսը գնացել է Կիւրին, իմացել է, որ ամբողջ ընտանիքը կոտորուել է կամ գաղթի ճանապարհին մահացել, բայց իմանում է նաեւ, որ քոյրը կայ, եւ գալիս է քրոջ մօտ: Քրոջ ամուսինը՝ Օքէշը ընդունում է Սարգսին, իր տուն է տանում: Բայց ժամանակը շատ վտանգաւոր էր, տանը հայ պահել արգելուած էր եւ առհասարակ Սարգսի համար միշտ շատ վտանգաւոր վիճակ էր: Այդ ժամանակ Կեսարիայի մօտ գտնուող Քըրքըսրաք Գիւղում ապրող Օքէշի ազգականներից մէկը, որ Քըրքըսրաք գիւղի մուխթարն էր (գիւղապետը), հիւր է գալիս: Նրա կինը եւ Օքէշի կինը մօրաքրոջ աղջիկներ էին: Տեսնում է Սարգսին, ասում է՝ սա այստեղ ի՞նչ գործ ունի, կը սպանեն այստեղ, եւ առաջարկում է Սարգսին տանել Քըրքըսրաք, որ լեռների մէջ մի գիւղ է: Ասում է՝ այն գիւղում ուրիշ հայեր կան թաքնուած, աւելի ապահով կը լինի Սարգիսի համար նրանց միանալ: Դա 1918-19 թուերն էին: Սարգիսը

շէկ էր, եւ այդ պատճառով իրեն Բոզօ էին ասում: Այսպիսով Բոզոյին տանում են Քըրքըսրաք եւ այնուհետեւ նա այնտեղ է ապրում: Ալեւի քրդերի գիւղ էր Քըրքըսրաքը, եւ այդ գիւղապետը շատ հայերի է փրկել: Որոշ ժամանակ անց մի անգամ գալիս է քրոջ մօտ, ասում է, որ ինքն արդէն հիմնաւորուել է եւ առաջարկում է նրան իր հետ գնալ: Այդ միջոցին Բոզօն իր միւս քրոջն էլ գտած է լինում, եւ նա էլ շատ ողբերգական պատմութիւն է ունեցած լինում: Բոզօն ամէն կերպ փորձում էր քոյրերին օգտակար լինել: Քրոջը համոզելով իր հետ գնալ, Բոզօն, սակայն, երեխային չի ուզում տանել: Նազիրէն ասում է, որ ինքը մայր չունի, որբ է եւ չի կարող իր երեխային էլ առանց մայր թողնել: Բացի այդ, ինքը վախենում է իր աղջկան թողնել Օքէշի առաջին կնոջը: Իր հետ նա էլ էր երեխայ ունեցել, եւ նրա երեխան տղայ էր: Իր զաւակին կրծքով կերակրելուց առաջ տատս պարտաւոր էր նրա տղային կերակրել: Եւ յաճախ այդ ընթացքում իր զաւակը լացում էր, եւ ինքը շաքար էր դնում նրա բերանում: Երբեմն էլ աւագ կինը Նազիրէի մասին բողոքում էր ամուսնուն, եւ ամուսինը ծեծում էր նրան: Իսկ ինքը դեռ շատ երիտասարդ էր, եւ շատ էր ազդւում այդ բոլորից: Իր մխիթարութիւնը Օքէշի հայրիկն էր՝ Մուստաֆան, որ ինչպէս մեր ընտանիքում պատմում են, շատ էր սիրում Նազիրէին եւ միշտ պաշտպանում էր նրան: Մուստաֆան եուզբաշի (հարիւրապետ) էր եղել բանակում: Վերջապէս Բոզօն համոզում է քրոջը Քըրքըսրաք գնալ: Օքէշը սկսում է յոխորտալ Բոզոյի վրայ՝ նրան մեղադրելով քրոջն իր դէմ տրամադրելու մէջ: Վերջապէս Մուստաֆան՝ Օքէշի հայրը համոզում է իր որդուն, որ ինքն է սխալը, պէտք է ներողութիւն խնդրի Բոզոյից կոշտ վարուելու համար: Արդիւնքում տղամարդիկ հաշտւում են, եւ Աղաւնին մնում է ամուսնու հետ՝ աւելի փափուկ յարաբերութիւնների յոյսով: Վերջապէս յարաբերութիւնները նորմալանում են նաեւ քրիստոնեայ Սարգիս-Բոզոյի ու մահմեդական Օքէշի ընտանիքների միջեւ:

Բոզօն ի վերջոյ ամուսնանում է Քըրքըսրաքում, այնտեղ թաքնուող մի հայ աղջկայ հետ: Նրա առաջին զաւակը՝ Յակոբը եւ Նազիրէի երկրորդ երեխան՝ իմ մայրը նոյն տարին են ծնուել: Սարգիսի (Բոզոյի) տղայ Յակոբը եւ Աղաւնիի աղջիկը Ռեմիզէն՝ իմ մայրս մի տարիքի են: Քանի որ Քըրքըսրաքում դպրոց չկար, Յակոբը դպրոցում սովորելու համար գալիս է Աւշին, իմ պապի՝ Օքէշի տուն: Նազիրէն՝ տատս յետոյ երկու տղայ երեխայ եւ հինգերորդ երեխան՝ կրկին մի աղջիկ էլ ունեցաւ: Ռեմիզէին դպրոց չեն ուղարկում: Այն տարիներին աղջիկների կրթութիւնը շատ չէր կարեւորւում: Բայց Յակոբը եւ Աղաւնիի աղջիկները շատ լաւ ընկերներ են մեծանում: Յետագայում Յակոբը ինձ համար իսկական քեռի է եղել: Սարգիս-Բոզոյի բոլոր երեխաներն իմ շատ մերձաւոր ազգականներն են եղել: Աւելի ուշ, երբ Բոզոյի ընտանիքը Ստամբուլ տեղափոխուեց, եւ ես էլ

մեծացել էի ու եկայ Ստամբուլում սովորելու, Յակոբ դայիս ասաց՝ ես թոյլ չեմ տայ, որ Օքէշի թոռը ուրիշ մի տեղ ապրի: Թոյլ չտուեց նաեւ հանրակացարան գնամ: Փաստօրէն ես իրենց տանը մնացի համալսարանական տարիներին: Այնպէս էր ստացուել, որ ինչպէս իմ մայրն ու Յակոբն էին տարեկիցներ, այնպէս էլ Յակոբի տղան ու ես էինք տարեկիցներ: Յակոբի տղան նոյնպէս Սարգիս է՝ իր պապ Բոզոյի անունով: Սարգիսն իրականում ինձ եղբայր է եւ իմ զաւակների քեռին է: Ես էլ իր զաւակների հօրաքոյրն եմ: Կապ չունի, որ մենք փաստացի ազգակցութեամբ կարծէք թէ երրորդ սերունդն ենք: Եւ իրենց բոլոր ընտանիքը, ոչ միայն Յակոբի, այլեւ Յակոբի քոյր եղբայրների բոլորի ընտանիքների անդամներն իմ հարազատներն են, կարելի է ասել՝ իմ ընտանիքի անդամներն են: Իմ ամուսինը քուրդ էր, եւ աղջիկներս, երկու աղջիկ ունեմ, հաւանաբար պէտք է որ իրենց քուրդ համարեն: Նրանք էլ գիտեն մեր ընտանիքի այս ամբողջ պատմութիւնները եւ շատ ջերմ կապուածութիւն ունեն իմ հայ ազգականների հետ, որ նաեւ իրենց ազգականներն են: Հակառակ որ իրենց քրդական կողմի հետ մտերիմ կապեր չունեն: Մանաւանդ՝ ես ամուսնալուծուեցի, եւ իմ զաւակների ազգակցական շփումներն իմ հայ ազգականների հետ էին եւ են: Ազգականներից զատ էլ շատ հայ ընկերներ ունեմ:

Իմ ընտանիքում միշտ պատմուել են իմ Նազիրէ տատի եւ Բոզօ քեռուս ընտանեկան ողբերգութեան պատմութիւնները: Մենք բոլորս շատ լաւ տեղեակ էինք, թէ ինչպէս են Քըրքըսրաքում տարիներով թաքնուած ապրել իմ տատեղբայր Բոզօն եւ ուրիշ հայեր, ինչպէս է Բոզօն բեկոր-բեկոր վերահաւաքել իր ընտանիքի անդամներից նրանց, ում կենդանի է գտել: Իսկ գտել է իր երկու քոյրերին: Ինչպէս է փորձել վերկակառուցել գերդաստանը: Եւ գիտենք ոչ միայն պատմութիւններով, այլեւ՝ շփումներով: Իմ մայրիկս, օրինակ, երբեք օտար չի եղել քրիստոնէական աւանդոյթներին: Արդէն ասացի, որ հայրս կրօնի հանդէպ անտարբեր էր, եւ մայրս էր, որ կրօնական ծէսերին հետեւում էր: Նշում էր թէ՛ մահմեդական տօները, թէ՛ քրիստոնէական: Իսլամների հետ նաեւ քրիստոնէական Զատիկ ենք նշել, անպայման հաւկիթ էր ներկում մայրիկս, դա մեր կենցաղի մաս էր, եւ միշտ միմեանց հիւր էինք գնում: Նազիրէ տատիկս կապում էր բոլորին՝ թէ՛ իսլամ, թէ՛ քրիստոնեայ ազգականներին: Ռեմիզէ խալա՝ հօրաքոյր էին ասում իրեն բոլորը՝ Բոզոյի բոլոր թոռները: Բոլորը խոստովանում են նաեւ, որ մայրիկս յատուկ հոգատարութիւն ունէր, յատուկ սէր ունէր մեր հայ ազգականների նկատմամբ: Ճիշտն ասած՝ արդէն ուրիշ ազգականներ չունէինք էլ: Քանի որ հայրական կողմից պապս փաստօրէն փախստական էր եւ իր ինքնութիւնը փոխել էր, նրա ազգականներին մենք չենք ճանաչել: Հայրս էլ պետական պաշտօնեայ էր, անընդհատ

տեղից տեղ էր տեղափոխւում, եւ հայրական կողմի ազգականներիս հետ էլ մենք կապեր չենք ունեցել: Այսինքն որոշապէս իմ ազգակցութիւնն ամբողջովին մայրիկիցս էր գալիս: Իհարկէ ունեմ նաեւ մօրաքոյրեր, քեռիներ եւ նրանց զաւակները: Մօրաքոյրերս ճիշտ նոյն կերպ կապուած են Բոզօ քեռու ընտանիքին եւ, կարելի է ասել, մեր զգացողութիւնը նոյնն է: Ես պարզապէս աւելի կապուած եմ, միասին ենք մեծացել, տեւական ժամանակ նոյն տանն ենք ապրել, եւ հենց հիմա էլ Ստամբուլում իմ ամենամտերիմ ընտանիքը Յակոբ դայուս Սարգիս որդու ընտանիքն է:

- *Դուք, սակայն, հայկական ինքնութիւն չունէք, ես ձեզ ճի՞շտ եմ հասկանում:*

- Ես հայ չեմ, անշուշտ: Չնայած իմ բոլոր ազգականներն, իսկապէս, կարծես թէ հայեր են:

- *Քու՞րդ էք ձեզ զգում:*

- Եթէ ստիպուած լինեմ այդ հարցին շատ որոշակի պատասխանել՝ երեւի այո: Քուրդ չեմ զգում ինքս ինձ, բայց հաւանաբար քուրդ եմ: Սակայն քրդերէն չգիտեմ, եւ հայրս էլ միշտ զգուշացնում էր հեռու մնալ քրդերից: Արդէն քուրդ ազգականներիս հետ կապեր չունէինք նաեւ հայրիկիս պնդումով: Բայց աւելի ճիշտ պատասխանն այն կը լինի, որ երկուութիւն ունեմ: Մասամբ նաեւ հայ եմ զգում ինքս ինձ:

- *Դժուար չէ՞ այդ երկուութեամբ ապրելը:*

- Հաւանաբար այո, եթէ ինքդ քեզ անընդհատ հարցեր տաս: Սակայն միւս կողմից լաւ բան էլ կայ՝ ազատութիւն է տալիս: Պարտաւորութիւններիդ բեռը նուազում է, աւելի ազատ ես մտածում, կարծում եմ՝ նաեւ աւելի անաչառ:

# ԻՍՐԱՅԷԼՑԻՆԵՐԻ, ՅՈՅՆԵՐԻ, ՎՐԱՑԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՏԵԼՈՒԹԻՒՆ ՉԿԱՅ. ՄԵԾ ԱՏԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ Է

*2011 Սեպտեմբերի 23ին Ստամբուլի Շիշլի թաղամասում Արսէն Կարակոչը պատմեց իր ընտանիքի պատմութիւնը եւ քրիստոնէութեանը վերադառնալու իր ջանքերի մասին: Զրոյցը տեղի է ունեցել թրքերէնով, աղագրել եւ թարգմանել է Մեդա Գրիգորեանը:*

*Արսէնին խնդրում եմ պատմել իր ընտանիքի պատմութիւնը, սկսած այն պապից, որի մասին ընտանեկան յիշողութիւններ կան պահպանուած: Արսէնը հպարտութեամբ ասում է, որ ինքը ծագումով Փալուից[72] է, իսկ Փալուն շատ հռչակաւոր է, այնտեղ Բինգէօլը[73] կայ, ընդամէնը երեսունհինգ կմ. հեռաւորութեամբ, մէկուկէս ժամուայ ճանապարհ:*

- Իմ պապերը բոլորը Փալուից են եղել, Էրզրումից: Պապերս տաս սերունդ, քսան սերունդ՝ բոլորը Փալուից են եղել: Մերոնք երբեք գաղթական չեն եղել, միշտ այնտեղ են ապրել: Մենք Փալուի ամենամեծ աշիրէթն[74] ենք եղել: Ընդհանրապէս դա Օլոսեան աշիրէթն էր, բայց հիմա Ուլուսեան են գրում: Ինքնութեան թղթերում այժմ Ուլուսեան կայ: Արդէն շատ բան չգիտեմ անցեալի մեր կեանքի մասին, քանի որ մեր ընտանիքի կեանքն ընդհատուել է: Արդէն շատ փաստաթղթեր էլ չունենք: Ինչ որ գիտենք՝ միայն 1915ի վերաբերեալ պատմածները գիտենք: Զարդի ժամանակ մեր աշիրէթից ութսուն հոգի սպանեցին (Soyıkırımda ailemizde seksen kişi resmi olarak öldürüldü): Արդէն իսկ մեծ ընտանիք էինք, երեք գիւղ մենք էինք: Խոշմաթ[75], Հաւբաբ[76], Սեքրաթ[77]: Այս երեք գիւղերի անունները դեռ նոյն ձեւով արտասանւում են, չեն փոխուած… Հարաւում քրդական անունները փոխուեցին, բայց այս երեքը փոխուած չեն: Հին հայ գիւղերի անունները չեն կարող փոխել, Հոշմաթը չեն կարող փոխել: Օրինակ՝ Սասունում, Եոզգաթում, այդ տեղերում անունները փոխուեցին, բայց մեզ մօտ հին անունները, որ հայկական են եղել, մնացել են: Բալուում քրդերի գիւղերը լեռներում էին, հայերի գիւղերը միշտ ձորերում էին, քաղաքներին աւելի մօտ էին, քաղաքներում էլ հայեր էին ապրում: Ցեղասպանութեան ժամանակ մեծ հայրիկիս աքսորեցին Սուրիա: 1922-23ին վերադարձաւ: Երբ որ վերադարձաւ, այս անգամ իր գիւղը չգնաց, Քարաքոչան[78] գիւղը գնաց: Հայրս, հօրաքոյրս, բոլորն էլ այնտեղ՝ Քարաքոչանում են ծնուել: Իր գիւղը չի գնում մեծ հայրիկս, քանի որ այն ժամանակ կառավարութիւնը այդ կողմի բոլոր գիւղերը տուել էր բալկաններից եկած թուրքերին: Քանի որ այնտեղ քրդերը շատ էին, քրդերը մնացել էին իրենց տեղերում, հայերի ջարդերից ու աքսորից յետոյ

բալկաններից թուրքեր բերեցին նստեցրին, որպէսզի քրդերին նուազեցնէին: Իսկ Քարաքոչան հայրս գնաց, քանի որ այնտեղ ծանօթ կար, կապ կար: Քարաքոչանի հայերին էլ էին աքսորել, բայց այնտեղ բալկաններից եկած միայն մէկ թուրք ընտանիք էր նստել: Միայն մէկ ընտանիք: Մինչեւ հիմա նրանցից Քարաքոչանում երկու ծեր մարդ են ապրում: Միայն նրանք են մնացել: Փալուն Միջին Արեւելքի առեւտրական կենտրոնն էր: Պապերս Թուրքիայի այդ շրջաններում թերեւս չորրորդ-հինգերորդ հարուստներից էին: Էլազիկից, Քեբանից անմիջապէս յետոյ նրանց հողերն էին սկսւում: Այդտեղի բոլոր հողերն իրենցն էին: Իմ մեծ հօրս պատմածների համաձայն շատ հարուստ ընտանիք էր: Միշտ Ամերիկայի հետ կապեր են ունեցել, գնացել եկել են: Տղամարդիկ՝ քառասուն հոգի չորս տարով գնում էին այնտեղ աշխատում, փողը բերում էին: Կանայք միշտ տանն էին: Չորս տարին մէկ վերադառնում էին, հողեր էին գնում, կալուածքներ… Եւ նրանցից միայն մէկ մեծ հայրս ողջ մնաց, եւ իր երկու հօրեղբայրները: Մէկը Խորենն է, անունը Խորեն է: Ամերիկա գնաց: Միւսի անունը Պօղոս էր: Նա էլ Ֆրանսիա գնաց: Բայց մեծ հայրս նրանց մինչեւ իր մահը երբեք չտեսաւ: Հօրս երկու քոյրերը... տասնհինգ-տասնվեց տարեկան աղջիկներ, տարան ասկեարները, եւ այդպէս էլ չիմացան՝ ի՞նչ արեցին, ի՞նչ եղաւ իրենց ճակատագրերը… չգիտեն՝ մեռա՞ն, ամուսնացա՞ն, ի՞նչ եղան: Գուցէ գերի տարան, չգիտեն ոչինչ:

Պապս 15 թուին քսանմէկ տարեկան էր, ամուսնացած չէր դեռ: Նրանց բոլորին Սիրիա քշեցին, բայց քչերը հասան, եւ միմեանցից բաժանուած էին ճանապարհին: Պապս, Խորենը եւ Պօղոսը այլեւս միմեանց չտեսան: Մեծ հօրս երկու հօրեղբայրները, մօր հօրեղբայրներն էլ գնացին, բայց երբեք իրար չտեսան: Մեծ հայրս Պաղտատ երկաթուղու վրայ էր աշխատում: Ես վստահ եմ, որ Ցեղասպանութեան բոլոր հարցը այս երկաթուղուն վրայ է: Օսմանցիների՝ Աբդուլ Համիդի եւ Գերմանիայի միջեւ համաձայնագրութիւն կար այդ երկաթուղու համար[79]: Քանի՞ կիլոմետր է: Եւ այդ երկաթուղու վրայ աշխատող բոլոր ճարտարապետերը, աշխատողները, վարպետները հայ էին: Մեծ դրամ կար: Այդ ժամանակ իթթիհատականներն էլ ուզում էին քրիստոնեայ համայնքը ջնջել… սա էր, բայց...Մի կողմից հայերին դրամը չտանք՝ մեզ կը մնայ մտածեցին, միւս կողմից՝ հայերը կ'ոչնչացնենք՝ իթթիհատականների ծրագիրը կը լրանայ: Ես երկար տարիներ Գերմանիա ապրեցի: Գերմանական բանկն էլ հայերին պարտք ունէր, հարիւր միլիոն դոլար: Հայերին ջարդելով բոլորը շահում էին: Գերմանացիներն էլ մատ ունեն Ցեղասպանութեան մէջ, վերջում արդէն վճարեցին: Ամբողջը՝ ինչ եղաւ, գերմանական սպաների ներկայութեամբ եւ նրանց հսկողութեամբ եղաւ: Նրանք պատրուակներ բռնեցին՝ իբր

հայերը ռուսներին մօտեցան: Մնացած ամէն ինչից զատ նաեւ այլ տնտեսական պատճառներ կային: Այդ ժամանակ Օսմանեան ամենահարուստ ազգը, ժողովուրդը հայերն էին: Հայերի ունեցուածքը հանգիստ չէր տալիս, տնտեսական պատճառներ էին: Յետոյ էլ՝ նոր ազգ էին հիմնում՝ թուրքական ազգը, նոր պետութիւն: Հայերի ունեցուածքն էլ իրենց մնաց, այս նորերին: Տնտեսական պատճառներ էին: Մուսուլմանների մէջ քարոզչութիւն արեցին, բորբոքեցին, բողոքեցին՝ իբրեւ թէ քրիստոնեաները ձեզ կոտորելու են: Դրանից բացի սուննի քրդերին ու ալեւիներին իրար դէմ հանեցին, սրանք էլ իրար կոտորեցին:

*- Արսէն, բայց եթէ վերադառնանք յիշողութիւններին, ձեր գերդաստանից ութսուն հոգի սպանեցին, քանի՞սը կենդանի մնացին:*

- Մեծ մօրս քոյրը ապրում է: Այստեղ՝ Ստամբուլում է, Քաղքէօյում, ես իրեն տեսել եմ: Մեծ հօրս կողմից միայն Խորենը, Պօղոսն ու Թորգոմը կենդանի մնացին, մէկ էլ իմ պապս: Հինգ մարդ: Դրանցից միայն պապս վերադարձաւ:

*- Իսկ ուրիշ գերդաստաններից հայեր վերադարձա՞ն, կամ՝ կենդանի մնացի՞ն:*

- Երբեք չիմացայ:

*- Քարաքոչանում ձեր պապից բացի ուրիշ հայեր չկայի՞ն արդէն:*

- Ոչ, Քարաքոչանից միայն մէկ ընտանիք է վերադարձել, Թօփալեան ընտանիքը: Սիրիայից վերադարձան, բայց տեսան, որ պայմանները խաղաղ չեն, գնացին Սիրիա եւ այնտեղից՝ Երեւան: Իմ ծնած գիւղս Օխու[80] է անունը, հին հայկական անունն է, Քարաքոչանի մօտ: Քրդերը հայերից յետոյ անունը փոխեցին, Yeğ/Եղ/Եխ կոչեցին, յետոյ թուրքերը փոխեցին, Բուլգուրջուք կոչեցին: Բուլգուրը ձաւարն է: Մեր գիւղում երկու ընտանիք կար: Երբ որ պապս Քարաքոչանի մէջ հաստատուեց, Օխու երկու ընտանիք կար, երկու աշիրէթ: Աշիրէթ չէ, երկու ընտանիք: Մէկը Ազնաւուր, մինչեւ հիմա իսկ Քարաքոչանի ամենամեծ ընտանիքն է: Իսկապէս զօրաւոր աշիրէթներ էին: Նոյնիսկ Ցեղասպանութեան ժամանակ այդ մարդիկ չլքեցին, չգնացին: Նրանք իրենց ընտանիքներն առան, կողքի գիւղերը գնացին, թաքնուեցին, որոշ ժամանակ տարբեր տեղեր մնացին, երեք-չորս կիլոմետր հեռաւորութեամբ, վերջը վերադարձան Քարաքոչան: Մէկը Ազնաւուր ընտանիքն էր, միւսը՝ Թօփալեան ընտանիքը: Ետ են վերադարձել, իրենց գիւղին մօտ շատ պզտիկ երկու երեք կիլոմետր հեռաւորութեան պզտիկ գիւղում տեղաւորուել են: Բայց այնտեղ մի աղա կար, պետութեան պաշտօնեայ էր, պետութեան համար էր աշխատում, ուզում է նրանց փողերը իւրացնել: Լուր է տալիս մահմեդական քրդերին, գալիս են կոտորում: Ազնաւուրեան ընտանիքից մէկը չմնաց: Ազնաւուրներին բայց պետութիւնը չէ, մահմեդական քրդերը սպանեցին: Այդ սպանող քրդերն էլ

իրենց մօտ աշխատողներից էին: Յետոյ նրանց փոխարէն մահմեդական քրդեր բնակուեցին: Իսկ Թօփալեանների ազգն էլ, ինչպէս ասացի, ետ վերադարձաւ Սիրիա[81]:

Մեծ հայրս Քարաքոչան վերադարձի ժամանակ այնտեղ մի աղա կար: Քուրդ աղա էր, որտեղից լինելը յայտնի չէր, բայց պետութեան դէմ մարդ էր: Նա մեծ հայրիկիս պաշտպանում է: Մեծ հայրս նրա մօտ էր աշխատում, եւ այդ աղան տուն է տալիս նրան: Երբ երեսուն տարեկանը լրանում է, ասում է՝ քեզ պիտի ամուսնացնեմ: Մեծ հայրս ասում է՝ ինձ չես կարող այստեղ ամուսնացնել: Չէ,- ասում է,- ես քեզ հայի հետ պիտի ամուսնացնեմ: Մէկը կայ Փալու, զազա քրդեր են, 15 թուին նրանց երեք-չորս տարեկան մի աղջիկ երեխայ են պահ տուել: Ողջ է մնացել, հիմա մեծացել է:- Այդպէս աղան հօրս ամուսնացնում է հայ աղջկայ հետ, տուն են շինում, եւ այդտեղ ապրում են: Արդէն ամէն բան վերջացել էր, եւ իր բնական կեանքն է սկսում: Քարաքոչանում են ապրում: Քարաքոչանը չէ՞ որ դատարակուել էր հայերից, եւ տարբեր կողմերից այդտեղ մարդիկ են գալիս ապրելու: Մահմեդական քրդեր: Յետոյ, սակայն, կը պարզուի, որ դրանք հայեր են, բոլորից թաքնուում են: Բայց Պաղտատի երկաթուղու աշխատանքները դեռ չէին աւարտուել, եւ մեծ հայրս ամուսնանալուց յետոյ գնում է այնտեղ աշխատելու: Երկաթուղու շինարարութիւնից յետոյ է հիմնական վերադառնում, բայց այդ ընթացքում երեխաներ են ծնուում՝ երեք տղայ, երեք աղջիկ: Աղջիկներից մէկը տասնեօթ տարեկանում մահանում է: Մեծ հօրս տղաները մեծանում են, պիտի կարգուեն, եւ աղջկայ հարցը շատ բարդ էր: Հայ աղջիկ չկայ: Պիտի գտնեն, մէկը պիտի տեղն ասի: Եթէ հայեր կան էլ՝ թաքնուած են, յայտնի չեն անում իրենց հայ լինելը: Ինչպէս մեր մօտ՝ Քարաքոչանում: Վերջը յայտնի եղաւ, որ այդ քուրդերի մէջ հայեր էին: Քուրդ լինելը գիտէինք, բայց չգիտէինք, որ հայ են: Շատ ուշ, շատ ուշ իմացանք: Իրենք իրենց մէջ գիտէին հայ լինելը, միայն մենք չգիտէինք: Յայտնի էր միայն մեծ հայրիկիս հայ լինելը: Այդպիսով նրանք գիտէին մեր հայ լինելը, բայց մենք չգիտէինք իրենցը, որովհետեւ անունը Մուստաֆա էր, չգիտեմ ինչ էր… շատ, շատ ուշ իմացանք նրանց հայ լինելը: Նրանք իմ մեծ հայրիկից շատ ուշ էին եկել, որպէս քուրդ էին եկել, մենք էլ որպէս քուրդ գիտէինք իրենց: Ես պզտիկ էի, ջուր էի տանում այդ Մուստաֆային: Գիւղում մի լաւ, պաղ աղբիւր կար, ահագին մարդ գնում էր այդ աղբիւրը, բայց նրանց իր դռյլը չէր տալիս, միայն ինձ էր տալիս եւ խնդրում՝ իր համար ջուր բերեմ: Մի օր հարցրի մեծ հօրս, թէ ինչու՞ միշտ միայն ինձ է խնդրում ջուր բերեմ իր համար, ինչու՞ ուրիշ երեխաների չի ասում: Մեծ հայրս ասաց՝ «տե՛ս, տղաս, նա քեզ շատ է սիրում, որովհետեւ դու հայ ես, այդ պատճառով է միշտ քեզ խնդրում: Նա էլ հայ է»: Ես շուարած էի մնացել՝ ինչպէ՞ս կարող է հայ լինել, եթէ մզկիթ է գնում, նամազ է բռնում, ինչպէ՞ս հայ է: Պապս

ասաց՝ «վախից է այդպէս անում»: Երկար գաղտնի էին մնում: Բայց վերջը բոլորին յայտնի էր, բոլորը գիտէին: Այդ ընտանիքի մի մասը դեռ այնտեղ է: Որպէս մահմեդական են յայտնի: Բայց վերջը իրենցից էլ գնացին: Իրենց հայութիւնը յայտնի եղաւ, այլեւս մնալ չէին կարող: Տասնհինգ տարի առաջ Գերմանիա գնացին: Նախ Էլազիգ[82] գնացին, յետոյ՝ Գերմանիա: Այդ Մուստաֆան տասնվեց հատ զաւակ ունէր, տասնմէկ տղայ, հինգ աղջիկ, բոլորը՝ մէկ կնոջից: Ես Գերմանիա Համբուրգում էի, իրենք էլ Համբուրգ եկան, այնտեղ մկրտուեցին: Գերմանական եկեղեցու մէջ:

*- Ես ուզում եմ հասկանալ՝ ինչու՞ մէկը յայտնի արեց իր հայ լինելը, միւսները՝ չէ: Եթէ վտանգ կար՝ բոլորի համար կար:*

- Վտանգը տարբեր էր: Իմ մեծ հայրիկիս հայ լինելը արդէն սկզբից յայտնի էր: Այդ աղան, որի ընտանիքը մինչեւ այսօր այնտեղ է ապրում, իր զաւակները, իր թոռները դեռ այնտեղ են ապրում, մեզ պաշտպանում էին, մեզ ոչ մէկը չէր կարող բան ասել: Հայրս հիմա հիւանդ է, նրանք ամէն օր հեռաձայնում են հարցնելու, թէ ինչպէ՛ս է: Արդէն սկզբից գիտէին մեր հայ լինելը: Իսկ ուշ եկածները, որ յայտնի չէին արել իրենց հայ լինելը, որեւէ մէկից պաշտպանուել չէին կարող: Իրականում մեր թղթերում, մեր վկայականներում էլ իսլամ էր գրուած: Այսինքն՝ մենք հայ էինք, մեզ հայ գիտէինք, ուրիշներն էլ մեզ հայ գիտէին, բայց թղթերով մահմեդական էինք: Թղթերով մահմեդական էինք, բայց մզկիթ չէինք գնում, նամազ չէինք բռնում: Դա բոլորին հասկանալի էր: Իսկ իրենք բոլորի համար մահմեդական էին, թղթերով մահմեդական էին, բայց միայն իրենք իրենց մէջ հայ էին, իրենք իրենց համար հայ էին: Հենց որ դա յայտնի եղաւ, հենց որ այդ մասին խօսակցութիւններ եղան, արդէն վտանգաւոր էր: Նրանք շատ էին բազմացել, պատկերացրէք՝ ութսուն ընտանիք, ամէն ընտանիքում միջինը տաս մարդ կայ: Բայց սրանք յայտնիներն են: Իրականում աւելի շատ են: Ոմանց թուրք գիտեն, ոմանց քուրդ գիտեն, բայց հայ են իրականում: Մահմեդական ձեւացնող, բայց հայ եղող:

*- Գուցէ դրանք միայն ենթադրութիւننե՞ր են: Գուցէ միայն դու՞ք էք այդպէս կարծում: Ձեր ծանօթների օրինակով էք դատում, բայց գուցէ ուրիշները չկա՞ն: Չէ՞ որ վստահ չգիտէք, այդ մուսուլմանները նախկինում հայ էի՞ն, թէ՞ ոչ:*

- Մեծ հայրս բոլորը գիտէր: Բոլորին ճանաչում էր: Յետոյ շատ բան իմացուեց: Երկու քոյրիկ ունեմ այնտեղ ապրող: Մէկը հիմա Գերմանիա է, իսկ միւս քոյրս դեռ այնտեղ է: Նրանք շատ լաւ տեղեակ են:

*- Տեսէք, իրենց գիւղում ապրող այդ մարդկանց մասին մեծ հայրդ շատ ուշ իմացաւ, որ հայ են: Ուրիշ տեղեր ապրողների մասին ինչպէ՞ս կարող էր իմանալ:*

- Մեծ հայրս ամէնը գիտէր: Փալուի մէջ աշխատողները բոլորն էլ երկաթուղու վրայ էին աշխատել, մեծ հայրս բոլորին էլ ճանաչում էր: Մեծ հայրս ասում էր, որ դրանք շատ են: Այն, որ ինքը ստոյգ գիտի, ութսուն տուն, ամէն տան մէջ տասը հոգի կան: Բայց դրանից զատ էլ հիմա շատերն ասում են իրենց հայ լինելու մասին: Հիմա առաջուայ պէս չէ: Իմ քեռայրս, մայրը հայ է, ասում էր՝ հօրս չեմ սիրում: Իր տղան, Ահմէթ էր անունը, գնաց դատարան տուեց Գերմանիայի մէջ եւ Արմէն արեց իր անունը: Մեծ տատը հայ էր՝ հայկական կողմը սիրեցին: Քրդական կողմը չէին սիրում: Օրինակ, նրա Մելիքէ քոյրը, հինգ-վեց տարի տարբերութիւն ունենք իրար միջեւ, մի փոքր խենթ է, ամէն ինչը բարձրաձայն ասում է, վախ չունի: Նա մեզ ընդունեց, բայց իր հայրական՝ քրդական կողմը չի ընդունում: Այդ ընտանիքի մէջ այդպիսի ընտրութիւն կայ: Եւ արդէն շատերը կան, որ տատի կամ պապի պատճառով իրենց հայկական կողմի ազգականներին են ընտրում:

*- Բալկաններից բերուած եւ հայերի գիւղերում բնակեցուած մահմեդականների մէջ վստահ, որ հայեր չկան: Բալուի գիւղերը, որտեղից հայերին քշեցին, սերբեր, ալբաններ, Բալկաններից մարդկանց բերեցին…*

- Քարաքոչում բալկաններից բերուածները լրիւ Ռումինիայից են, Հարաւսլաւիայից բոսնիացիներ, առնաուտներ… կառավարութիւնը նրանց հայերի տները տուեց: Բայց նրանք այնտեղ երկար չկարողացան ապրել: Ինչու՞: Որովհետեւ քիւրդերը հանգիստ չթողեցին: Շատերը միայն երկու-երեք տարի մնացին: Քիւրդերը ամէնին էլ վռնդեցին եւ իրենք տեղաւորուեցին: Քիւրդերը շատ դժգոհ էին նրանց գալու պատճառով: Արդէն կադաստրի մասին երբ որ խօսում ենք, արդէն յայտնի է, որ կառավարութիւնը այս նոր կալուածաթղթերը հենց քրդերին է տալիս: Այսինքն հայերի նախկին ունեցուածքը հենց հիմա օրէնքով քիւրդերին է տալիս: Բայց մեր կալուածաթղթերը կան: Մենք շատ կալուածաթղթեր ունենք օսմանական: Արաբերէնով է գրած: Բոլորը պահել ենք: Մեր տներում են: Հօրեղբայրներս էլ ունեն: Սակայն կառավարութիւնը նոր կանոնադրութիւն արեց, որպէսզի քանի դեռ այդ բալկանցիների կալուածները չկարգաւորուեն, որեւէ իրաւունք չտրուի հին կալուածաթղթերի նկատմամբ: Բայց ահագին մարդկանց կալուածաթղթերն էլ այրեցին, ոչնչացրին: Անցեալ տարի գնացի, հօրս ընտանիքի անձնագրի պատճէնը հանեցի: Ինձ այդ թուղթը պէտք էր, որովհետեւ Հոլանդիայում Յովհաննէս անունով մի եղբայր ունեմ, ուզում էր մկրտուել, եւ այնտեղ իր ծնուած երկրի փաստաթղթերում արձանագրուած անունների հիմքերի կարիքը կար: Այսինքն՝ որ պապերը հայ են եղել: Պատրիարքութեանը խնդրեցինք, թուղթ չտուեցին: Ասել էին՝ դուք հայ չէք: Ինչպէ՞ս հայ չենք, եթէ իր անձնագրում Օհանէս Քարաքաշ է

գրուած: Գնացի Փալու կենտրոն: Ինձ ասացին, որ ձեր ընտանիքի անձնագրի գրութիւնները Քովանջըլար[83] գիւղում պէտք է լինի: Մեր անձնագրի գրութիւնները բոլորն էլ Քովանջըլար է: Գնացի Քովանջըլար, այնտեղի պաշտօնեան նայում է թղթին ու կոպիտ ասում է՝ դու ինչպիսի՞ թղթի համար ես եկել: Շատ կոշտ է խօսում: Ես էլ բարկանում եմ, բռնում մարդու երեսին բռունցքով խփում եմ: Պարզ է՝ տանում են ոստիկանութիւն, բացատրութիւններ, կարող էր դատի հարց դառնալ: Յետոյ փորձում եմ գնալ Քարաքոչան եւ այդ թուղթն այնտեղից վերցնել: Այնտեղի պաշտօնեան էլ տիգրանակերտցի[84] մի երիտասարդ է: Նրան ասում եմ՝ ես հայ եմ, անձնագիրս այստեղ է, ես ուզում եմ իմ ընտանիքի անձնագրի հիմք հանդիսացող փաստաթղթերը վերցնել: Ասում է՝ Քովանջըլարում է, ինչու՞ այնտեղ չես գնում: Բոլորը պատմում եմ: Պաշտօնեան էլ ասում է՝ ես քեզ մի թուղթ կը տամ, այդ թուղթն ա՛ռ, գնա՛, իմ անունս էլ տուր: Եթէ չտան, ես քո ողջ գերդաստանի թուղթը կը հանեմ: Գնում եմ Քովանջըլար՝ կրկին չեն տալիս: Այդ ժամանակ մտածում եմ մօրեղբօրս դիմել: Մօրեղբայրս էլ այդտեղի ամենավտանգաւոր աշիրէթներից մէկից է: Մայրը հայ է, հայրը քուրդ: Զանգում եմ մօրեղբօրս: Մօրեղբայրս հեռախօսով խօսում է Քովանջըլարի պաշտօնեայի հետ, վերջը՝ «շատ հազար ներողութիւն, սխալութիւն է եղել, շատ ներողութիւն, ես չգիտէի, որ դուք Ռամազանի քրոջ տղան էք»: Է, քրոջ տղան եմ, քրոջ տղան չեմ՝ ի՞նչ տարբերութիւն: Իրականում տարբերութիւնն այն է, որ հայ եմ: Համակարգիչը բերեց, ստուգեց՝ Ուլուսեան ընտանիքը յետոյ Քարաքաշ է դարձել, այո….Պապն ո՞վ է, տատն ո՞վ է, երեխաներն ովքե՞ր են: Բոլորը հայեր են: Ես այդ թղթերը բոլորը հանեցի, որպէսզի եղբայրս Հոլանդիայում մկրտուի: Որովհետեւ չտուեցին մեզ պատրիարքութիւնից հայ լինելու մասին տեղեկանք, իսկ մենք պէտք ունէինք բացատրելու, ցոյց տալու՝ ով էինք: Իսկապէս հայեր էինք:

Այնտեղ՝ բողոքական եկեղեցու մէջ դա ստացուեց, եղբայրս մկրտուեց: Բայց այստեղ՝ Ստամբուլի պատրիարքարանում չի ստացւում: Դուք հայեր չէք,- ասում են: Ես էլ գնացի Հայաստանում մկրտուեցի: 1995ին: Սիմոն պզտիկ եղբայրս էլ այնտեղ մկրտուեց, նրա զաւակներն էլ: Սիմոն եղբայրս Գերմանիայում էր ամուսնացած, Գերմանիայից գնաց Երեւանում մկրտուեց:

*- Ձեր ընտանիքը Բալուից ինչու՞ գնաց Գերմանիա, առիթը հայ լինե՞լն էր, թէ՞ կապ չունէր հայ լինելը:*

- Անպատճառ: 1990ականներին շատ մարդիկ գնացին: Քիւրդերը շատ գնացին: Ադ շրջաններում շատ ճնշում կար յատկապէս քիւրդերի նկատմամբ, փողոցում էլ մարդիկ էին մահանում: Շատ անմեղ մարդիկ մեռան: Մենք՝ հայերս էլ մտածեցինք, որ մի օր մեր վրայ է շուռ գալու:

Իրականութեան մէջ մենք ընտանիքով էինք ուզում գնալ, բայց մայրս եւ հայրս չուզեցին գալ: Հիմա բոլորս արդէն Ստաբուլում ենք: Փալուում հիմա երեք քոյր ունեմ, մի քոյրս էլ Գերմանիա գնաց: Այնտեղ դեռ հօրեղբօրս ութ աղջիկները կան: Գիւղում մենք նոր տուն ենք շինում: Մեր գիւղը մենք ամբողջովին չենք լքել:

*- Բայց գիւղում մկրտուած հայ կա՞յ:*

- Այո, չորս-հինգ հոգի կայ, լաւ գիտեմ: Բայց նրանք էլ Գերմանիա գնացին: Որովհետեւ իրենց անձնագրի մէջ իսլամ են գրում: Մարդն ասում է՝ ես չեմ ուզում իսլամ գրուի, սա պետութեան բռնի պարտադրած բան է եղել, որովհետեւ ես իսլամ չեմ ու երբեք չեմ եղել: Դատի են տալիս, դատաւորն ընդունում է, բայց դատախազն առարկում է, եւ չի ստացւում: Եթէ դու Պոլիս ես ծնուել՝ աւելի հեշտ է, բայց Անատոլիայում կրօնը փոխելը դժուար բան է: Վերջին տարիներին որոշ բաներ փոխուած են, յատկապէս Տիգրանակերտում աւելի լաւ է, որովհետեւ քաղաքապետը քիւրդ է եւ այնտեղի քաղաքապետութիւնը ընդառաջում է: Բայց յատկապէս վաթսունական թուականները շատ դժուար տարիներ էին, եւ եօթանասունականներին՝ յատկապէս:

*- Իսկ կա՞ն արդեօք քրդեր, որոնց մայրը, տատը հայ են, եւ իրենք հիմա քրիստոնեայ են դառնում:*

- Կան, շատ կան: Եւ աւելի շատ քիւրդերն են խօսում այն մասին, թէ իբր ես քիւրդ եմ, բայց գերդաստանիս մէջ հայեր կան: Հպարտանում են: Քրիստոնեայ դարձողներին էլ գէշ չեն նայում: Եթէ գէշ կը նայեն ասեմ՝ սխալ կը լինի: Հայերն աւելի շատ վախեր ունեն:

*- Հիմա, որ դուք մկրտուել էք, եւ առհասարակ Ստամբուլում գտնուող Բալուի հայերը Ստամբուլի հայերի հետ ի՞նչ շփում, ի՞նչ յարաբերութիւն ունեն:*

- Յարաբերութիւններ ունենք, բայց դժբախտաբար սա է, որ ինձ շատ վրդովեցնում է: Ես ուրիշների մասին չեմ կարող ասել, ես իմ գլխի եկածը կ'ասեմ, որպէսզի աւելի լաւ հասկացուի: Երկու տարի առաջ Գերմանիայից վերադարձայ եւ այստեղ հաստատուեցի: Գնում-գալիս եմ, բայց այստեղ եմ ապրում: Իմ տանս մօտ հայկական վարժարան կայ, եւ երկու հատ էլ եկեղեցի կայ: Գնացի այդ եկեղեցիներից մէկը: Իմ հօրեղբօրս զաւակները բոլորն էլ այդ եկեղեցու թաղային խորհրդի վարչութեան մէջ են: Բայց ես եկեղեցի եմ գնում՝ ինձ գէշ աչքով են նայում: Մի շաբաթ, երկու շաբաթ, երրորդ շաբաթը չդիմացայ եւ Տէր Հօր մօտ գնացի,- ես Գերմանիայից եմ վերադարձել, ես հայ եմ, ի՞նչու են ինձ գէշ նայում: Ի՞նչու համայնքի մէջ մեր մասին ասում են՝ «սրանք քրդեր են, ի՞նչու են մեր եկեղեցին գալիս»: Ձեր եկեղեցու վարչութեան մէջ Մուրատ Քարաքաշ կայ, նա իմ հարազատ հօրեղբօր զաւակն է, եթէ նա հայ է, ե՞ս ինչ եմ: Նոյն շաբաթն ենք ծնուել, նոյն տարիքի ենք: Ի՞նչպէս ես քիւրդ կը

լինեմ, նրանք լաւ հայեր կը լինեն, ես սա չեմ հասկանում: Այդպէս էլ ասացի: Եթէ դուք այսպէս շարունակէք, եթէ դուք այսպէս ճանաչէք, մի օր կ'ոչնչանան մեր արմատները: Հիմա եկեղեցի չեմ գնում: Պատրիարքարան գնում եմ մէկումէջ՝ ծանօթանում, զրուցում: Հիմա ես այլեւս եկեղեցի չեմ գնում, բայց Բայաջըղ գիւղի եկեղեցին ինձ ընդունում է, այնտեղ գնում եմ, մարդկանց հետ հանդիպում եմ, զրուցում եմ: Բայց մինչեւ Բայաջըղ գիւղը հասնեմ՝ տաս հատ եկեղեցի եմ անցնում: Ի՞նչու: Ես հիմա գիտեմ, որ ինձ նման շատ հայեր կան Աթաշեհիր[85]: Ես գիտեմ, որ հարիւր ընտանիք կայ այնտեղ հայ դերսիմցի: Ամէն ընտանիքում եթէ միայն երկու մարդ հաշուես՝ երկու հարիւր մարդ է արդէն, հայեր են: Բայց չեն ընդունում փաստօրէն: Այստեղ ասում են՝ մենք համայնք ենք (Թուրքիայում համայնքը կրօնական հիմքով միաւորն է ընկալւում - Հ.Խ.): Ո՛չ: Իրաւունք չունենք: Մենք համայնք չենք, մենք ազգ ենք:

*- Ի՞նչու ձեր կարծիքով ձեր հօրեղբօրորդի Մուրադին ընդունեցին, ձեզ, ձեր կարծիքով, չեն ընդունում:*

Կարծում եմ չեն ուզում օտար մէկին ներս առնել, եւ ինձ ու իմ նմաններին օտար են դիտում: Ես դրամի պէտք չունեմ, դրամ ունեմ, կարող եմ նոյնիսկ օգնել: Օգնութեան համար չէ, որ ուզում եմ շփուել: Տե՛ս՝ օրինակ ասեմ: Սկիւտարում (թաղամաս Ստամբուլում - Հ.Խ.) Միհրան Փրկիչը[86] կայ, Դերսիմից է, Դերսիմահայերի Միութիւն է ստեղծել: Նրանք ուզում են դերսիմահայերի ինքնութիւնը վերադարձնել: Մենք էլ Միհրանին ասացինք՝ արի մի ճաշկերոյթ կազմակերպենք, ում որ ճանաչում ենք՝ հրաւիրենք, թող գան, շփուեն, միմեանց ճանաչեն: Միհրանը գնացել է եկեղեցի, խնդրել է եկեղեցու սրահը տրամադրեն հիւրասիրութեան համար: Չտուեցին: Բոլորին տալիս են, Միհրանին չտուեցին: Դրամ պիտի տաք,- ասացին:- Ի՞նչու: Հօրեղբայրս, իր որդին, իր աղջիկը, ամուսինը այդ եկեղեցու վարչութեան մէջ են: Ես գնացի, ասացի,- տես, Կարօ, յիշու՞մ ես դու այս նոյն եկեղեցու մէջ զաւակ մկրտեցիր եւ այդ առիթով խնջոյք տուեցիր, ես ու քոյրս էլ Գերմանիայից եկանք այդ մկրտութեան առիթով...: Հիմա դու Միհրանից դրա՞մ ես ուզում, այն դէպքում, երբ ես ու Միհրանը մեր գրպանից ծախս պիտի անենք, մարդկանց հաւաքենք՝ միմեանց հետ շփուեն, ծանօթանան: Այս նպատակի համար Միհրանից դրա՞մ էք ուզում: Այսպէս է, որ ասում եմ՝ մեզ չեն ընդունում:

*- Այդ ճաշկերոյթը կարո՞ղ էք Բոյաջիղի եկեղեցում անել:*

- Եթէ իրենց խնդրէի՝ չէին մերժի, բայց հեռու է: Մեր նպատակը սա է. Ստամբուլի ասիական ափին ահագին քիւրդեր կան[87], ալեւի հայեր կան: Նրանք մեզ նման չեն: Մենք ծնուելու պահից իսկ գիտէինք հայ լինելնիս, բայց իրենք նոր սովորեցին, նոր իմացան: Նրանց պէտք է քաջալերենք, իրենց ձեռքը բռնենք, ուշադրութիւն դարձնենք: Նրանց լիակատար

քրդանալը շատ հեշտ է, հայ վերադառնալն է դժուար: Դժուար է նրանց ասել՝ եկէք Բոյաջիղ ճաշկերոյթի, բայց այստեղ՝ կենտրոնում, հեշտ կը գան, ամէն մարդ կարող է: Վերջապէս մենք կարող էինք ճաշկերոյթ կազմակերպել որեւէ ճաշարանում: Բայց հայկական եկեղեցու սրահը հայութիւն է նշանակում, այնտեղ հայութիւն է հաւաքւում: Դա պարզ ճաշկերոյթ չէ, դա խորհրդանշական տարածք է: Եւ հիմա այնպէս է ստացուել՝ մենք ու իրենք տարբեր ենք: Տարբեր հայեր ենք: Իրենց պատճառով է, որ մենք հիմա Հայաստանից մեծ խումբ ենք հրաւիրել, բոլորը՝ մեր ծախսերով, եւ Դեկտեմբերին մեծ համերգ ենք ունենալու: Մենք՝ Անատոլիայի հայերս առանձին ենք, իրենք՝ ստամբուլահայերը՝ առանձին: Չգիտեմ, որքան են իրենք սա ընկալում, բայց սա մեզ՝ բոլոր հայերիս կտոր-կտոր անել է նշանակում: Ժամանակը փոխուել է, բայց կարծես սա չենք հասկանում:

*- Թերեւս տագնապներ ունեն կառավարութիւնից: Ինչ որ հաստատուած յարաբերութիւններ կան, իւրաքանչիւր փոփոխութիւն կարող է կասկածներ առաջացնել: Միւս կողմից այսօրուայ ստամբուլահայերի մեծ մասն իրենք դեռ քառասուն-յիսուն տարի առաջ գաւառներից եկան, իրենք իրենց դժուարութիւններն ունեցան, իրենք իրենց տեղը նուաճեցին: Հիմա եթէ դուք՝ Անատոլիայից եկածներդ իրենց դէմ հակադրուելով էք ուզում այդ տեղերում հաստատուել, նոյնպէս նպաստում էք կտոր-կտոր լինելուն: Թերեւս այս էլ մտածենք: Հիմա քանի որ դուք ձեր ծրագիրը ունէք, օրինակ եթէ փորձէք Բոյաջրղ գիւղում հաւաքուել, ձեր հաւաքին հրաւիրէք նաեւ ուրիշ թաղերի հայերին, հին ստամբուլահայերի: Մի փորձ, երկու փորձ, երեք փորձ... ուզում եմ ասել այդպէս շատ դժգոհութեամբ չլինէր, այլ կամաց-կամաց աստիճանական լինէր: Չի՞ կարելի այդպէս անել: Հիմա ոնց որ մրցութիւն լինի, Անատոլիայից եկած նոր հայերը, որոնց քուրդ են ասում, մրցելու են Ստամբուլի միւս հայերի հետ, թէ ով աւելի կարեւոր բան կ'անի:*

- Չեմ կածում, թէ հարցն այդպէս է: Իմ մօտեցումն այն է, որ ստամբուլահայերը մեր մէջ հայ չեն տեսնում եւ չեն ուզում տեսնել: Քիւրդեր են,- ասում են:- Է, քիւրդերն էլ ուրախ են, որ մենք քիւրդեր լինենք: Գիւղերից եկած մարդիկ են, հայերէն չգիտեն, չեն էլ կարողանում հայերի հետ շփուել: Մի մասը նոյնիսկ թուրքերէն չգիտի, կամ այնպիսի թուրքերէնով է խօսում, որ աւելի լաւ է Ստամբուլում այդպիսի թուրքերէնով չխօսի: Թէ՛ թուրքերն են արհամարհում, թէ՛ հայերը: Հիմա իրենց վերջնական քրդանալն աւելի հեշտ է, քան իրենց գիւղերում կարող էր լինել: Այնտեղ բոլորը գիտեն, որ հայկական ծագում ունես, եւ դա քեզ պարտադրում է հայկականութեան, ուզես թէ չուզես: Այստեղ ոչ ոք ոչինչ չգիտի, եւ շատ հեշտ քուրդ ես: Իրենց զաւակներին հայկական դպրոցները չեն ընդունում: Պէտք է հայութիւնը փաստող վկայականներ

ունենան: Չունեն այդ մարդիկ այդպիսի վկայականներ, չունեն: Եւ շատ դժուար է դրանք ձեռք բերել: Գիւղացի մարդ են, պաշտօնեայից տագնապ ունեն, վախ ունեն, գնում թուղթ են ուզում՝ իրեց հետ կոշտ են վարւում: Այս ամէնից աւելի հեշտը ոչինչ չանելն է: Բայց մե՛նք ենք շահագրգիռ կողմը, մե՛նք պիտի նրանց օգնենք: Սրանք հարցեր են, որ ստամբուլահայ ղեկավարները պէտք է բարձրացնեն, պահանջեն: Կա՛մ գաւառներում փաստաթղթի պահանջ ունեցող մարդկանց հարցերը հեշտացնեն, կա՛մ՝ այստեղի դպրոցներում հայութիւնը վկայող փաստաթուղթ չպահանջեն: Բայց նրանց ասածն ի՞նչ է՝ հայերը Թուրքիոյ կառավարութեան հետ պարտք ու պահանջ չունեն, ամէն ինչ հարթ է: Ինչպէ՞ս հարթ է ամէն ինչ, եթէ սրանք բոլորը երեսի վրայ թողած են, սրանք բոլորը հարցեր են: Չասե՞նք այս մասին: Չասե՞նք, որ հայկական դպրոցներն աւարտում են հայերէն չսովորած[88]: Չասե՞նք, որ այս մեր դպրոցներում հայերէնը թրքերէն թարգմանուած եւ յետոյ թրքերէնից կրկին հայերէն թարգմանուած լեզու է: Այս մասին խօսեցի՝ ասացին դու խառնակիչ ես: Պէտք է խօսենք: Ես կարծում եմ, որ Անատոլիայից եկած հայը կարող է այս ամէնի մասին խօսել, եւ նաեւ օգնել: Քաջ մարդիկ են վերջապէս: Պոլսում մարդիկ սովորում են փափկասուն դառնալ, շուտ են հաշտւում իրավիճակի հետ: Այստեղինները միայն քեմալիստ են դարձել, աթաթիւրքչի են դարձել, իրենց ուղեղները այդպէս է մշակուել, եւ իրենք բաց չեն: Երբ ես այս բաների մասին խօսում եմ, իմ հօրեղբօրորդի Մուրատն ինձ ասում է՝ դու շատ արմատական ես, ցեղապաշտ ես: Ոչ, ես ցեղապաշտ չեմ, բայց գիտեմ, որ այդպէս դանդաղելով ու հաշտուելով խնդիրները չեն լուծւում, խնդիրներն աւելանում են: Եւ յետոյ մենք ուզում ենք նաեւ նրանցից բան սովորել: Բայց չեն ուզում, մեզ չեն ուզում: Ես կարծում եմ, որ շատ մեծ տնտեսական կարողութիւն ունեն այստեղ, բայց չեն կարողանում, գուցէ չեն ուզում գործածել: Սիրում են իրենք իրենց համայնք անուանել, բայց ներողութիւն, այդ ժամանակը վաղուց անցել է: Գնա՛ որեւէ դերսիմցու հարցրու՝ մենք համա՞յնք ենք, թէ՞ ազգ ենք: Միայն մէկ պատասխան ունեն՝ ազգ ենք: Եւ սա՝ հաստատուն: Այստեղ՝ Ստամբուլում, այս խօսքերից վախենում են, այսինքն՝ վախենում են «մենք ազգ ենք» ասել: Կարծում եմ հարցերի հարցը հենց սա է: Եթէ մենք համայնք չենք, ազգ ենք՝ աւելի շատ իրաւունքներ կարող ենք ունենալ: Բայց Ստամբուլի հայերը վախենում են իրաւունքից խօսել, եւ հաշտ են «մենք համայնք ենք»ի հետ:

*- Արսէն, ինձ թւում է՝ դուք այդպէս քաջ էք խօսում, որովհետեւ Գերմանիայում երկար ապրեցիք եւ սովորեցիք մարդու իրաւունքների ուրիշ իրավիճակի: Մոռացե՞լ էք, որ սա Թուրքիա է:*

- Չեմ մոռացել եւ միանգամայն լուծելի խնդիրների մասին եմ խօսում: Այս երկիրը լաւ եմ ճանաչում, գիտեմ, որ այսչափ, որչափ ասում եմ՝ լուծելիք

խնդիրներ են: Հիմա օրինակ, մենք անունների, անձնանունների խնդիր ունենք: Միշտ ենք ունեցել: Այս երկրում սահմանադրութիւնը թոյլ է տալիս անունները փոխել, թոյլ է տալիս ասել՝ սա ծնողներիս դրած անունն է, բայց ես չեմ ուզում այս անունը, ուզում եմ փոխել: Երեսուն տարեկան ես, կարող ես գնալ դատարան եւ անունդ փոխել: Ընդ որում անձնագրի մէջ այդ փոփոխութիւնն անում են: Ճիշտ է, կրօնն էլ են գրում անձնագրում: Քանի որ կրօն փոխելը աւելի դժուար է, քան անուն փոխելը, ես առաջարկում եմ բոլոր քրդա-թուրքական անունները փոխել հայկականի: Մուստաֆաները, Սուլէյմանները, Ալիները, Իբրահիմները… Ով կ'ուզի, անշուշտ: Ոչինչ, որ անձնագրում կը շարունակեն իսլամ գրել, բայց անունն արդէն ցոյց է տալիս ազգութիւնդ: Չ՞է որ ես համայնքի մասին չեմ խօսում, այսինքն՝ կրօնի մասին չեմ խօսում, ես ազգութեան մասին եմ խօսում: Մուստաֆա ասելով չես հասկանայ հայ լինելը, Տիգրան, Սարգիս, Արսէն, Յովհաննէս ասելով՝ անմիջապէս կը հասկանաս[89]: Բայց ո՞վ այստեղ փոխուած անունովս իմ հայ լինելը պիտի ընդունի: Ես անունս էլ եմ փոխել՝ Արսէն եմ դարձել, մկրտուել էլ եմ, բայց նոյնն է դրութիւնը՝ հայերէն չեմ խօսում, Անատոլիայից եմ…

*- Դերսիմի, Բալուի հայերից Ստամբուլում քանիսի՞ երեխաներն են հայկական դպրոց գնում: Եւ երկրորդ հարցը՝ չէ՞ք կարծում, որ հայկական վարժարան կարող է լինել նաեւ, օրինակ, Բալուում:*

- Այնտեղի մարդիկ դեռ փակ են, շատ չեն բացւում: Դեռ վախենում են: Խառն է այնտեղ, մարդ չգիտի՝ ինքը քիւրդ է, հայ է, ալեւի է: Այնտեղ դեռ շատ դժուար է յայտարարել հայ ազգութիւնը, այնտեղ հասարակութիւնն արդէն պարտադրում է այն, ինչին վարժուել է՝ դու քիւրդ ես, դու՝ ալեւի: Առաւել՝ եթէ արդէն թուրք ես յայտարարուել: Այդպէս է, եթէ նոյնիսկ գիտեն հայ լինելդ: Այսինքն՝ եթէ ինքդ յայտարարես հայ լինելդ՝ չեն դատապարտի, բայց շուրջդ շատ բան կը փոխուի: Չէ՞ որ ոմանք, օրինակ, ամուսնացել են քիւրդի հետ, յետոյ պարզւում է՝ նա հայ է: Ազգականներ, խնամիներ, բացատրութիւններ… Կամ՝ մէկը ինչ որ ձեւով դարձել է պաշտօնեայ, կամ աշխատում է որեւէ հիմնարկում: Նրա ազգականները հաստա՛տ չեն բարձրաձայնի: Այսինքն՝ մէկի որոշումը շատերի ճակատագրերին կ'ազդի: Ոչ, Անատոլիայում հայկական վարժարանն այսօր չի կարողանայ աշխատել: Այստեղ՝ Ստամբուլում այլ հարց է: Այստեղ մարդը որոշում է, որ իր քիւրդութեանը կամ ալեւիութեանը պիտի առաւելութիւն տայ եւ շարունակի ապրել այդ ընտրութեամբ: Եւ իր զաւակներին դաստիարակի այդպէս: Աստուած իր հետ: Բայց իմ խօսքն այն մարդկանց մասին է, ովքեր կա՛մ միշտ ընտրած են եղել հայ մնալը, կա՛մ հիմա որոշում են հայութեանը վերադառնալ: Եւ ոմանք, կամ իմ կարծիքով շատերը, Անատոլիայից հենց այդ պատճառով են Ստամբուլ գալիս՝ վերջապէս հայ լինելու, հայ մնալու եւ/կամ հայ վերադառնալու:

Աստուած սրանց հետ էլ. բայց կարծում եմ՝ մենք նոյնպէս պէտք է սրանց հետ լինենք: Բայց հենց սրա՛նց զաւակներին է, որ հայկական վարժարանները չեն ընդունում, հազար հատ թուղթ են ուզում՝ կրօնի մասին, անձնագիր, մկրտութեան թուղթ: Առանց այս թղթերի չեն ընդունում[90]: Իսկ նրանցից շատերը եկել են նաեւ այն պատճառով, որ գոնէ երեխաները հայերէն խօսել սովորեն: Եւ չեն սովորում, չեն կարող սովորել:

*- Բայց խնդիրը վարժարանները չեն, պետութիւ՛ն է այդ թղթերը ուզում: Ստուգում են ամէն տարի: Իսլա՞մ ես՝ ի՞նչ գործ ունես հայկական դպրոցում: Եւ դպրոցի վարչութիւնն է, որ պարտաւոր է չընդունել:*

- Կարող եմ դպրոցի տեսակէտը հասկանալ, բայց չեմ ընդունում: Պետութիւնն ասում է՝ ազգութեամբ հայերին ընդունէք: Է, ազգութիւնս հայ է, թէկուզ կրօնս իսլամ է: Ես յայտարարում եմ, որ ազգութիւնս հայ է: Ստորագրում եմ բոլոր թղթերը, որ դպրոցը կարող է պահանջել ծնողից՝ ազգութիւնս հայ լինելու մասին: Հենց այս որոշումն է, որի համար պիտի պայքարեն հայկական վարչութեան անդամները: Ազգի՛ն պիտի նայեն, ո՛չ թէ կրօնին: Եւ այդ խնդրից են վախենում հայ երեւելիները Ստամբուլում: Չգիտեմ միայն՝ կառավարութիւնի՞ց են վախենում, թէ՞ չեն ուզում գլխացաւանքի մէջ ընկնել: Բայց պիտի՛ ընկնեն գլխացաւանքի մէջ, որպէսզի հարց լուծուի: Գլխացաւանքի մէջ չընկնելու դէպքում պետութիւնը լաւ է, պետութեան հետ խնդիրներ չկան: Պետութեանն ասում են՝ ահ, դուք լաւն էք: Այն ճանապարհով, որով ես եմ գնում, ոչ ոք չի միանում: Սրանք՝ գնում են հեռուստատեսութիւն եւ ասում են հայերի կոտորած չի եղել: Չի՞ եղել: Ինչպէ՞ս թէ չի եղել: Դպրոցի խնդիրն էլ շատ մեծ խնդիր է, քոյր իմ, բայց նրանք չեն խօսում այդ հարցերի մասին: Այսինքն՝ մեծ խնդիրները սրանք են: Շատ լաւ մարդիկ ոչինչ չգիտեն, ընդհանրապէս ոչինչ, տեղեկութիւն չունեն: Չգիտեն, որ դպրոցում հայերէն չեն սովորում:

Այստեղից ես գնացի Հայաստան, դերսիմցի հայերը՝ [ասացին] օհ, Արսէ՛ն, ես էլ կը գնամ Հայաստան, մէկ ուրիշը՝ ես էլ: Կը գնաք, բայց շատ թանկ է: Ասում եմ, տե՛ս, երկկողմանի տոմսը չորս հարիւր, հինգ հարիւր եւրո է: Օհ, սա ի՞նչ է: Դէպի Գերմանիա երկկողմանի տոմսը հարիւր եւրո է: Ինչու՞:

Ներսդ ընդհանրապէս չի՞ այրւում: Դժբախտութիւն է եղել, նստենք, հաշտուենք, բայց ո՛չ, կոտորած չի եղել: Ես իրենց կարիքը չունեմ: Ես փող ունեմ, տուն ունեմ, խանութներ ունեմ, աշխատավայր ունեմ: Մենք տասնմէկ եղբայր ենք, մենք խնդիր չունենք, որեւէ մէկից կախուած չենք: Բայց մենք՝ Բալուի, Մուշի, Սասունի, Դերսիմի, Բիթլիսի հայերս դէմ ենք, որ այստեղ հինգ մարդ ասեն՝ խնդիր չկայ, կոտորած չի եղել: Իսկ այդ մարդիկ ասում են՝ այստեղի հայերը սփիւռքի *պրոպագանդան* են անում,

ես լաւ հայ եմ, նրանք բոլորը, այսինքն՝ ընդդիմացողները քիւրդ-հայերն են: Այսինքն՝ վատ հայերն են: Պետութիւնն էլ ասում է՝ պրա՛ւо, հոյակապ է: Թուրքական պետութիւնը հայերի ընկերը չէ, ոչ մի անգամ էլ չի եղել: Թէ հայերի ընկերն է՝ ինչպէ՞ս է, որ Անատոլիայի հայերի անձնագրերի, ինքնութիւնների տեղեկանքները չի տալիս, օսմանեան ժամանակներից նրանց սեփականութեան կալուածաթուղթերը չի թողնում օգտագործեն: Ատում են հայերին իրականում: Տե՛ս, Հայաստանի հայերի հետ խնդիր չկայ, մարդկանց մէջ խնդիրներ չկան, բայց հայերին ատում են: Իսրայէլցիներից, յոյներից միշտ մարդիկ են մահանում, պատերազմում են, բայց իսրայէլցիների, յոյների, վրացիների նկատմամբ ատելութիւն չկայ: Բոլորն էլ մեծ թշնամիներ են, բայց մեծ ատելութիւնը հայերի նկատմամբ է: Ի՞նչու: Որովհետեւ այս հողերը, Անատոլիան Հայաստանն է, հայկական հողեր են, այդ պատճառով էլ շատ լաւ թշնամիներ են, ատում են, բայց այստեղ հինգ մարդ հայերի անունից ասում է՝ խնդիր չկայ, խնդիր չկայ: Խնդիր չկայ, բայց հայերին հայկական վարժարաններում չեն ընդունում սովորելու: Մինչեւ այդ հարցը չլուծուի, մինչեւ վարժարանը ազգութեամբ չընդունի երեխաներին՝ Անատոլիայի հայերի դարձի մասին մոռանանք: Ես ինձ համար չեմ ասում, ես ինքս արդէն մկրտուած քրիստոնեայ եմ:

*- Իսկ դուք ինքներդ ե՞րբ լուծեցիք մկրտութեան խնդիրը:*

- Ես Հայաստանում եմ մկրտուել: Գերմանիայում ապրող Սիմոն եղբայրս ընտանիքով եկաւ Երեւան, ես էլ Ստամբուլից գնացի Երեւան:

*- Գնացիք մահմեդական, վերադարձաք քրիստոնեայ:*

- Այո: Այդպէս կնքուեցի, ոչինչ չասացին: Միայն անունիս ասացին՝ շատ հետաքրքիր անուն է, գեղեցիկ անուն է: Արսէն: Այո՛, գեղեցիկ անուն է: Ի՞նչ անուն է: Հայկական անուն է, ի՞նչ անուն է: Ո՛չ, խնդիր չեղաւ: Անունս բայց Գերմանիայում էի փոխել: Մեհմէթ էր: Գերմանական դատարան գնացի, փոխեցի, թուրքական հիւպատոսութեան դիմեցի, անձնագիրս վերցրեցի: Չառարկեցին: Այն ժամանակ միայն անուան փոփոխութիւն էր:

*- Երբ Բալու էք գնում, ձեզ որպէս Մեհմէ՞թ են ճանաչում:*

- Արսէն գիտեն: Արդէն Արսէն գիտեն: Մեհմէթը չկայ: Մեհմէթը վերջացել է, Մեհմէթը վաղուց վերջացել է: Քսան տարի եղաւ: Բոլորը սովորել են, խնդիր չկայ:

*- Արսէ՛ն, դուք երբուանի՞ց գիտէք, որ Անատոլիան Հայաստանն է եղել:*

- Փոքրուց, երեխայ ժամանակից: Շատերը, օրինակ՝ Միհրանը նոր սովորեց, մի երկու տարի է, բայց ես փոքրուց միշտ իմացել եմ:

*- Ձեր պապե՞ն էլ գիտէին:*

- Պապս էլ, հայրս էլ: Պապս պատմում էր: Երեկոները պապս ու տատս քով քովի հայերէն էին զրուցում: Ընթրիք պատրաստելու ժամանակ հայերէն էին խօսում: Մենք ասում էինք՝ ի՞նչ լեզուով էք խօսում, պապս

ասաց՝ մենք զազայերէն ենք խօսում: Պապի՛կ, ասում եմ, ես զազայերէն գիտեմ, սա զազայերէն չէ, ի՞նչ լեզու է: Ո՛չ, ո՛չ, ասում է, հեռու՛ գնա, հեռու... բայց հայերէն էին խօսում, շատ գեղեցիկ հայերէն էին խօսում, շատ գեղեցիկ: Եկեղեցում էլ էին հայերէն խօսում շատ գեղեցիկ:

*- Այնտեղ եկեղեցի կա՞յ, Դիարբեքիրի՞ եկեղեցին:*

- Ո՛չ, մեր գիւղում էլ կայ: Մեր գիւղում մինչեւ հիմա եկեղեցի կայ: Քարաքոչանում կայ, գիւղերում էլ կայ: Մեր գիւղում եկեղեցի կայ, անունը ի՞նչ էր՝ չեմ յիշում: Հիմա էլ կանգուն է: Գնում էին եկեղեցի, նստում էին ու հայերէն էին խօսում: Քահանայ չկայ, ոչինչ չկայ, մաքրում էին, փոշիներն էին վերցնում: Պապս վարպետ էր, ամրացնում էր: Այդ եկեղեցին պատմութիւն ունի: Գրքերում կայ այդ մասին: Բայց ես չեմ կարդում, հայերէն չեմ կարդում: Ամէն տարի Հայաստան եմ գնում, ընկերներ ունեմ, կը սովորեմ հայերէն: Մենք բարեկամներ ունենք այնտեղ, բայց ես ու իմ եղբայր Սիմոնը տուն ենք գնել Էջմիածնի ճանապարհին: Հենց մտնում ես Էջմիածին՝ աջ կողմում է:

Մինչեւ հիմա ամուրի եմ: Անատոլիայում դժուար է, շատ դժուար է հայ տղամարդու համար հայ աղջիկ գտնելը. շատ չկան, մարդ չկայ: Իմ ընտանիքում էլ լիքը տղայ են, եղբայրները շատ են, աղջիկ չկայ: Տե՛ս, Սիմոնը Հայաստանում է ամուսնացել, Յովհաննէսն ամուրի է, Պօղոսն ամուրի է, ես ամուրի եմ, Բենիկն ամուրի է: Որովհետեւ մենք մեզ համապատասխան հայ աղջիկ չենք կարողացել գտնել, ամէն մէկն աղջիկ չի կարողացել գտնել... Մենք ներընտանեկան ամուսնութիւններ չենք անում: Օրինակ՝ ես շատ գեղեցիկ հօրեղբօր աղջիկներ ունեմ՝ իմ տարիքին, ինձնից փոքր, մէկ ամիս, մէկ տարի մեծ, բայց չենք կարող ամուսնանալ, նոյն ընտանիքից ենք: Տաճի՞կ, դրա հետ ընդհանրապէս չեմ ամուսնանայ: Եթէ նոյնիսկ իմանամ մեռնելու եմ, էլի տաճիկի հետ չեմ ամուսնանայ: Միշտ էլ կրօնական վէճեր են առաջանում, ինչպէ՞ս կարող է դա ընտանիք դառնալ: Յետոյ էլ մեր ընտանիքում արդէն Բալուից շատ խառն ամուսնութիւններ կային: Ասացի, որ փեսաս Գերմանիայում է, Ահմէթ Արմանօղլուն: Մեզ մօտ էր մնում, մզկիթ չէր գնում: Բայց նրա մայրը հայ է եղել, հօրը չի ընդունում: Ես հայ եմ, ասում է, մինչեւ հիմա ասում է՝ ես հայ եմ: Գերմանիայում անունը փոխեց, անձնագրի անունը Գերմանիայում փոխեց: Նրա քոյրը՝ նոյնը, հայրական քիւրդական կողմը չի ընդունում: Այդպէս. շատ բարդ է, ազգակցութիւնը, ընտանիք չի մնում:

# ԻՐԵՆՑ ՀԱՅ ԼԻՆԵԼԸ ՉԵՆ ԺԽՏՈՒՄ, ԲԱՅՑ ՇԱՏ ԵՆ ՁՈՒԼՈՒԵԼ, ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ԵՆ ԴԱՐՁԵԼ

*Աքթան եղբայրները Սասունում մահմեդականացած բազմանդամ հայերի ընտանիքից են: Իրենց ընտանիքի պատմութիւնից դրուագներ պատմեցին Ստամբուլում,* Ակօս *թերթի խմբագրատանը, 2013 Նոյեմբերի 6ին: Եղբայրներից մէկը մահմեդական է, միւսը՝ Թեքին Աքթանը վերջերս վերադարձել է քրիստոնէութեանը:*

*Եղբայրների հետ պայմանաւորուել էինք հանդիպել Ակօս թերթի խմբագրատանը Ստամբուլի Բոդազիչի Համալսարանում 2013ի Հոկտեմբեր **11-13ը** տեղի ունեցած «Կոնֆերանս Իսլամացուած Հայերի Մասին» գիտաժողովի ժամանակ, որին որպէս ունկնդիր գալիս էին մասնակցելու բազմաթիւ-բազմաթիւ մահմեդական հայեր:*

- Մենք Սասունից ենք, Գոմք[91] գիւղից, այնտեղ, որտեղ եկեղեցի կայ: Դա շատ յայտնի գիւղ է, գտնւում է Մարաթուկ Սարի ճիշտ դիմացը: Մինչեւ 1915ի Ցեղասպանութիւն մեր պապերն այնտեղ են եղել: Շատ մեծ ընտանիք է եղել, բայց կոտորել են[92]: 15ից յետոյ մեր պապերի եղբայրներից՝ հօրեղբօր տղաներ եւն., ով փրկուել է՝ միքանիսը Հալէպ են գնացել: Յետոյ, շատ յետոյ իմացել ենք, որ մեր գիւղացիներից ոմանք կարողացել են Կովկաս անցնել եւ հիմա Հայաստանում են ապրում: Բայց իմ պապը մնացել է: Մնացել են պապս, իր եղբայրներից մէկը ու մի քեռու աղջիկ: Մեր գիւղից՝ նաեւ ուրիշ երեխաներ, բայց մեր ընտանիքից՝ միայն այդ երեքը: Շատերը վեց-եօթ տարեկան են եղել, երեխաները: Որբացած երեխաները մնացել են հարեւանների յոյսին: Հարեւաններն էլ արաբ էին: Շեկօ աշիրէթի արաբներ: Նրանք իրենց տուն են տարել այդ երեխաներին: Միայն իմ պապը չէր, ուրիշ ընտանիքներից էլ են երեխաներ փրկուել: Չգիտեմ՝ արդեօ՞ք բոլորին են օգնել, բայց մեր գիւղում յետոյ մահմեդականացած շատ հայեր կային, ինչպէս իմ պապը: Բոլոր դէպքերում պապիս, իր եղբօրն ու քեռու աղջկան պահել են: Անունները փոխել են, իսլամ են դարձրել եւ պահել են: Իրենց պահողը Խալիլ աղայի ընտանիքն է եղել: Այդ ընտանիքը մերոնց է օգնել, այլ ընտանիք՝ ուրիշների է օգնել: Ճիշտ է՝ իմ պապը համեմատաբար մեծ է եղել: 1915ին իմ պապը 15 տարեկան է եղել, բայց իր եղբայրն աւելի փոքր է եղել: Պապս փախած է եղել կոտորածի օրը, յետոյ փոքր եղբօր համար է վերադարձել: Իմացել է, որ փոքր եղբայրը փրկուել է, մի արաբի ընտանիքում է, վերադարձել է եւ այլ երեխաների միջոցով լուր է տուել փոքր եղբօրը: Ինքը մի շաբաթ դաշտերում էր մնում: Մեր ընտանիքում

պատմում են, որ պապիս եղբայրն ամէն անգամ հաց ուտելիս իր բաժին հացը ծոցում պահում էր: Այդ տան կինը նկատել է ու հասկացել է, որ ինչ որ մէկի համար է հացը պահում: Համոզել է երեխային խոստովանել, ասել է՝ մենք ոչ մէկին չենք նեղացնի, եթէ պէտք է՝ մե՛նք կ'օգնենք: Մի խօսքով պստիկը խոստովանում է, որ աւագ եղբայրը մի շաբաթ է՝ դաշտում է, հացը նրա համար է պահում: Գնում բերում են նաեւ աւագ եղբօրը, եւ երկուսն էլ այդ տանն են ապրում: Այդպէս երեխաներ շատ կային, եւ բոլորն իրար ճանաչում էին: Գիտէին իրենց հայ լինելը, բայց բոլորը մահմեդական էին: Շատ շուտ մոռացան հայերէնը: Համարեա բոլորն այնտեղ ամուսնացել են տեղի արաբ աղջիկների կամ տղաների հետ[93]: Արդէն ամուսնանում էին իրենց աղաների ընտրութեամբ: Հաւանական է, որ աղան գուցէ երբեմն ընտրել է նաեւ հայ աղջիկ: Բայց մեծ մասամբ հենց իրենց տղաների կամ աղջիկների հետ էին ամուսնացնում: Բայց իմ տատը հայ էր: Պապս էլ, տատս էլ հայեր էին: Փրկուած հայ աղջիկ էր: Ես պապիս չեմ տեսել, բայց տատիս շատ լաւ եմ յիշում: Երբ որ շատ էի ջղայնանում ու տատիս հակաճառում էի, տատս ինձ ասում էր՝ դու ինձ մի՛ կոպտի, ես մի ծաղիկ եմ: Յետոյ եմ հասկացել ինչ է ուզում ասել՝ այսինքն ես մի փրկուած հայ եմ, միայնակ եմ:

*- Հայերէն գիտէ՞ր տատդ:*

- Այո: Նաեւ պապս: Չէ՞ որ պապս մի քիչ մեծ էր միւսներից, չէր մոռացել հայերէնը: Բայց այն ժամանակ վտանգաւոր էր հայերէն խօսելը, սովորաբար չէին խօսում: Ես սա պատմածով եմ ասում, ինքս չեմ տեսել: Բայց տատս ծեր էր եւ դեռ հայերէն գիտէր: Երբ որ իրեն ջղայնացնում էինք, փոքր էրեխէք էինք, հայերէն հայհոյում էր, թէ անիծում էր՝ չգիտեմ, բայց հայերէն բաներ էր ասում: 90-91 տարեկանում է մահացել, այդ տարիքին բնականաբար շատերը չեն հասել: Այն ժամանակ, երբ ես կարող էի տեսնել, արդէն մարդ չկար հայերէն խօսող: Բայց ո՛չ, Մարիամը կար մեր գիւղում, տատս Մարիամի հետ երբեմն հայերէն խօսում էր:

*- Իսկ հայրդ, մայրդ:*

- Հայրս ի՞նչ, նա արդէն հայերէն բոլորովին չգիտէր: Թէպէտ հայրն էլ, մայրն էլ հայ էին, բայց այն ժամանակ նրանք հայերէն չէին կարող խօսել, չէին համարձակուի: Իսկ մայրս արաբ է: Հայրս ու մայրս արաբերէն են խօսում:

*- Տատդ իրեն իսլա՞մ էր համարում, թէ՞ քրիստոնեայ:*

- Նամազ անում էր, բայց դէ ի՞նչ ասեմ, գուցէ ինքն իր ներսում քրիստոնեայ էր: Հաւանաբար ինքն էլ չգիտէր: Բայց բոլորի համար ինքը մահմեդական էր: Գիւղում ընդհանրապէս այդ հարցերը չեն խօսուել, չեն քննարկուել: Յետագայում, արդէն երկրորդ սերնդում, տարբերութիւն չկար: Գիւղում բոլորը նոյնն էին, թէ՛ ամուսնութեան հարցերում, թէ՛

յարաբերութիւններում: Ես արդէն փաստացի երրորդ սերունդն եմ: Հայրս է ծնուել, մայրս է ծնուել, մեծացել են, յետոյ մենք ենք ծնուել: Բայց նոյնիսկ մենք բոլորս միմեանց ճանաչում ենք՝ ովքեր են հայերը: Համարեա ամբողջ Սասունում ենք ճանաչում: Մէկը քրդական ընտանիքում է մեծացել, մէկը՝ արաբական, բոլորը՝ մահմեդական, եւ միշտ միմեանց ասում էին՝ ով է հայկական ծագումով: Հայրս, որ հիմա 80 տարեկան է, բոլորին ճանաչում է:

*- Իսկ որեւէ քրիստոնեայ կա՞ր Գոմքում:*

- Գուցէ տարեցների մէջ եղել է, բայց չեն ասել: Կարելի է ասել, որ ո՛չ, Գոմքում քրիստոնեայ չկար: Բայց եկեղեցի կար: Ընդհանրապէս մինչեւ յիսունականները կարծեմ չէին խօսում իրենց հայ լինելու մասին: Բայց 1950ին իմ հայրը գնում է Հալէպ եւ հանդիպում է իր քեռի Խաչատուրին: Խաչատուր քեռին 1950ից արդէն գնալ-գալ է ունեցել մեր գիւղ, կապն արդէն վերականգնել է: Նա բոլորին շատ լաւ գիտէր, 80, 90% ճշտութեամբ ասում էր՝ ովքեր են հայ, ովքեր՝ չէ, ինքը բոլորին գիտէր:

*- Հայերին գիւղի արաբները հա՞յ էին համարում:*

- Երեւի, որովհետեւ *ֆըլլա* էին ասում: Այսինքն՝ քրիստոնեայ: Բոլոր քրիստոնեաներին էին *ֆըլլա* ասում՝ լինի հայ, ասորի, յոյն: Եթէ ինչ որ կռիւ էր լինում, վէճ էր լինում՝ անմիջապէս ասում էր՝ էս *ֆըլա* է: Բայց սովորաբար եթէ լուրջ բաների համար էր վէճը լինում, օրինակ՝ երկու ընտանիքների միջեւ, միւսները չէին խառնւում: Այսինքն ընդհանրապէս բախումնային չէին յարաբերութիւնները:

*- Գոմք գիւղից բացի ուրիշ ո՞ր գիւղերում են հայեր մնացել ձեր իմացածով: Երեխաներ, մեծեր…*

- (*Ջանում է յիշելով թուարկել գիւղերի անունները*) - Քարթի[94], Մըշկնի[95], Ջամալա[96], Կոնգ[97], Նշտլիխ[98], Չխթնիխ[99], Տատանգ[100], Բընուինգ[101], Սարթինգ[102], Արփի[103], Շնուղ[104], Պուգնոտ[105], Փշուտ[106]… Էլի կան, շատ կան:

*- Գիւղերից իւրաքանչիւրում ինչքա՞ն կը լինէին հայեր,- կէ՞սը, աւելի քի՞չ, աւելի շա՞տ…*

- Տարբեր են, բայց կէսը՝ չեմ կարծում: Աւելի քիչ: Շատերն արդէն Ստամբուլ տեղափոխուեցին: Տարբեր թաղամասերում են՝ Գում Կափը, Եդի Գուլա, Շիշլի, Քուրթուլուշ… Մեր գիւղում հիմա հազիւ հինգ-վեց ընտանիք կայ: 90%ը հիմնականում մուսուլման էին, մեր ընտանիքն էլ էր այդպիսին: Իրենց հայ լինելը չեն ժխտում, բայց շատ են ձուլուել, մուսուլման են դարձել: Ճիշտ է, նամազ չենք անում մեր ընտանիքում, մզկիթ էլ չենք գնում, բայց ոչ էլ եկեղեցի ենք գնում: Բայց երիտասարդութեան շրջանում կրօնին վերադարձ կայ: Կրօնը սկսել է կարեւոր նկատուել: Շատերը մոլեռանդ մահմեդական են դառնում, ոմանք էլ քրիստոնեայ են դառնում, ինչպէս ես:

*- Ձեր պապը կամ հայրը ե՞րբ են ինքնութեան վկայական ստացել: Դուք, հաւանաբար, չէք յիշի, բայց գուցէ իրենից լսած լինէք: Եւ ի՞նչ է այնտեղ գրուել՝ ինքն ու՞մ զաւակն է, ովքե՞ր են իր հայրը, մայրը:*

- Սասունում յատուկ գնացել եմ, որ նայեմ, արխիւները նայել եմ՝ ոչ մի թուղթ չկայ: Մտածում եմ, որ Անկարայում կը լինի: [19]24 թուականին որ լատինատառ է դարձել լեզուն, եթէ անգամ լինէր՝արաբական է լինելու, օսմաներէն: Անկարայում կայ, բնականաբար, ցոյց չեն տալիս, բայց անպայման կայ, որովհետեւ միշտ կարողանում են բացայայտել նախնիների արմատները: Հենց որ մի բան է լինում՝ պետութիւնը երեսով է տալիս՝ հայ ես, չես կարող: Օրինակ՝ ոստիկան լինել չես կարող: Ասում են դու հայ ես, չես կարող: Եթէ արխիւը չկայ՝ ինչպէ՞ս են իմանում: Մեր պետութիւնը անունները փոխած, մուսուլման դարձած հայերին անպայման գիտի, գիտի նաեւ Սասունի բոլոր հայկական գիւղերի հին անունները: Ճիշտ է, անունները հիմա փոխուած են, բոլորը թուրքական են դարձուած, բայց բոլորը շարունակում են հին անուններով խօսել: Այնտեղի տեղանունները, հիմա ճիշտ է՝ փոխուել է, Մուշում կամ Սասունում տեղանունները թուրքական են դարձել, բայց մէկ է՝ հին անունները օգտագործում ենք. Մունգուկ[107] ենք ասում, իսկ նոր անունը Սոյջա է, Գոմք ենք ասում, իսկ նոր անունը Մեշելի է:

*- Հարցս այլ կերպ ձեւակերպեմ: Ձեր պապի ինքնութեան թուղթը, վկայականը տեսե՞լ էք: Այնտեղ ի՞նչ է գրուած, ինքը ու՞մ որդին է: Կարո՞ղ է, օրինակ, Խալիլ աղայի անունը լինի գրած:*

- Ոչ, ոչ, իրենց հայրերի անուններն էին գրել: 1923ին, երբ որ թուրքական պետականութիւնը ձեւաւորուել է, Թուրքական Հանրապետութիւն է ստեղծուել, հին անունները փոխել են իրենք: Հօրս անունը բոլորը գիտէին Ադամ էր, բայց իրականում Արամ էր: Ադամը Գենջոյի որդին էր: Գենջօն հօրս հայրն էր: Այդպէս էլ գրուած էր՝ Գենջոյի որդի, իսկ Գենջոյի մասին գրուած էր՝ Էրմանի, հայ:

*- Ձեր ընտանիքում որեւէ հայկական սովորոյթ, որեւէ հայկական աւանդական ուտելիք, որեւէ հայկական տօն նշուե՞լ է, կամ՝ ձեր գիւղի հայերի մէջ սովորութիւն կա՞ր որեւէ մասնաւոր հայկական հաւաք ունենալ:*

- Դժուարանում եմ ասել: Իմ տարեկիցների մէջ հաւանաբար՝ ոչ: Բայց ոչ, կար: Մենք Նոր Տարին նշում էինք, բայց այն ժամանակ չգիտէինք, որ Նոր Տարի ենք նշում: Դա հիմա եմ հասկանում: Հիմնականում հայերով էին հաւաքւում: Իրենց կանանց հետ, իհարկէ, արաբ կանանց: Յետոյ եթէ ինչ որ մէկը մահանում էր, կամ հարսանիքի ժամանակ, հայերով հաւաքւում էինք, ոնց որ կանչած լինենք հայերին: Չգիտեմ դա սովորո՞յթ էր, թէ՞ բնական ստեղծուած մի վիճակ է, միմեանց օգնելու անհրաժեշտութիւն: Միշտ փորձում էինք ձեռքներիցս եկածն անենք միմեանց համար, եւ դա

մինչեւ հիմա պահպանուել է: Բայց իմ ընտանիքը Գոմքից տեղափոխուել է իմ ծնուելուց անմիջապէս յետոյ, Մուշ է տեղափոխուել: Ես Մուշում եմ մեծացել, գուցէ շատ լաւ չգիտեմ գիւղի սովորութիւնները: Դա 42 տարի առաջ է եղել, ես ընդամէնը մի շաբաթական եմ եղել:

*- Քանի՞ երեխայ էիք այն ժամանակ:*

- Ինձնից յետոյ եօթը կայ, բայց ինձնից մեծն էլ կայ: Մենք տաս եղբայր ենք, եւ մի քոյր ունեմ: Մէկն այստեղ՝ Ստամբուլում է ամուսնացած, մէկը Ադանայում է ամուսնացած, քոյրս Սասունում է ամուսնացած, մնացածը բոլորը Մուշում են:

*- Մուշ տեղափոխուել էք փաստօրէն 70ականներին: Ինչու՞ էք տեղափոխուել:*

- Հողային վէճի պատճառով: Նոյն Շեկօ աշիրէթում երկու խմբեր կային: Այդ խմբերից մէկը եկել է հայրիկիս ասել է՝ այս հողը մեզ պիտի տաք: Դրանք մեր պապական հողերն են եղել, բոլորն էլ այդ մասին գիտէին: Այն ժամանակ թափուներ (կալուածաթղթեր - Հ.Խ.) չկային, բայց հիմա էլ կալուածաթղթեր չկան այնտեղ: Հայրս ասել է՝ ես փող կը տամ, բայց հողը չեմ տայ, սա իմ պապական հողն է: Չէ,- ասել են,- փողը չենք ուզում, հողը պիտի տաս: Հայրս չէր կարող իրենց դէմ կռուել: Կառավարութիւնը միշտ իրենց կողմն է լինում: Ճիշտ է, հայրս էլ մուսուլման էր համարւում, բայց բոլորը գիտէին, որ հայ է: Արդէն հայկական ծագումը բաւական էր, որ իր դէմ լինէին: Հայրս էլ ասել է՝ հարամ լինի ձեզ ու թողել է դուրս է եկել: Գոմքի ներքեւի մասը մերն է, երեք ընտանիք կար այդտեղ, ներքեւի մասը բոլորը մերն է: Հիմա էլ որ գնաք հարցնէք, գիւղում բոլորը գիտեն, որ դրանք մեր հողերն են: Ջեւիզի, ջեւիզը հայկական ծառերի տեսակ է, ջեւիզի ծառ է՝ ընկոյզի, մենք բոլորս գիտէինք, որ դրանք մեր ծառերն են: Նոյնիսկ շատ յետոյ, իննսունականներին, Հայաստանի մեր բարեկամները հենց այդ ծառերով են մեզ գտել: Իրենք էլ էին յիշում, որ իրենց պապի տան կողքը ընկոյզի ծառ կար՝ անունը մինոլախ: Եւ հենց այդպէս էլ Գոմք են եկել, հարցուփորձ են արել, գտել են նոյն գերդաստանի ազգականներին, այսինքն՝ մեզ:

*- Քանի՞ մարդ այդ տարիներին գնաց Մուշ: Գոմքից քանի՞սը գնացին:*

- Մօտաւորապէս տաս ընտանիք: Բայց ընտանիքը 200-300 մարդ հաշուի: Սուտ չի լինի, եթէ ասեմ մեր ազգութիւնը հազար մարդ է:

*- Ձեր բոլոր ազգականներն այն ժամանակ Գոմքից գնացի՞ն:*

- Ոչ, հօրաքոյրերս չեն գնացել: Ամուսնացած կանայք մնացել են, բայց հիմնականում բոլորը դուրս են եկել: Դէ ծուռ ենք, չէ՞ որ կռիւ անող ենք, ծուռ սասունցի են մեզ ասում, մենք եոլա գնացող չենք: Մեր կողքը հայհոյել, բան չկայ, կռիւ կը լինի:

*- Ինչու՞ Մուշը ընտրուեց: Այսինքն՝ աւելի՞ հեշտ էր, ծանօթ մէկը կա՞ր, փողի՞ խնդիր կար, ինչու՞ հենց Մուշ գնացին ապրելու:*

- Քեռիս արդէն Մուշ էր տեղափոխուել, այնտեղ էր ապրում: Քեռուս առաջին կինը հայ է եղել, մահացաւ: Երկրորդ կինը արաբ է եղել: Նրանք ուրիշ աշիրէթից էին: Բայց բացի քեռուցս, իրականում շատ բան չգիտէին ծնողներս: Ոչ հայրս, ոչ մայրս դպրոց են գնացել. կրթութիւն չեն ստացել, ինչ որ գիտէին՝ Սասունն էր ու Մուշը: Ջահիլ էր հայրս: Հա, մէկ էլ Բիթլիս գիտէին: Հայաստանի մասին առհասարակ չգիտէին: Երբ որ արդէն Մուշում էինք ապրում, հայրս ռադիոյով քրդական երգեր էր լսում Հայաստանից: Զարմանում էին, ասում էին՝ Էրմանիստան: Այն տարիներին Սասունից դուրս եկողները Բիթլիս ու Մուշ են գնացել: Յետոյ, շատ յետոյ նաեւ Ստամբուլ ու Եւրոպա են գնացել:

*- Հայրս ջահիլ էր՝ այսինքն ուզում էք ասել երիտասարդ էր:*

- Ոչ, ուզում եմ ասել՝ անգրագէտ, հասարակ, դպրոց չգնացած, կրթութիւն չստացած: Բայց այդքանի հետ՝ ամենաշատ իմացողն իմ հայրն էր: Մի բան որ լինէր՝ իրեն էին հարցնում, իրեն բոլորը յարգում էին, իրեն աղա էին ասում ու այնտեղի հայ ժողովրդին ինքն էր նայում: Շատերին ինքն է փրկել, միշտ պաշտպանում էր հայերին:

*- Ինչի՞ց է փրկել, ինչի՞ց կամ ումի՞ց է պաշտպանել, ի՞նչ վտանգ կար:*

- Հագուստ էր տալիս, իրենց ունեցուածքը պահում էր: Հայերին չէին թողնում կարգին հագուստ հագնել, ասում էին՝ հայերն ի՞նչ են, որ այդպէս հագնուեն: Այն ժամանակ, երբ որ Սիրիան Ֆրանսիայի ազդեցութեան տակ էր, հայրս գնում էր Սիրիա, գեղեցիկ հագուստ էր բերում հայերի համար: Նրանք, որ չունէին այդ հագուստը, ջղայնանում էին, նախանձում էին, ու չէին թողնում, որ հայերը հագնեն: Հայը ո՞վ է, որ այսպիսի շորեր հագնի: Թուրքիան այն ժամանակ շատ աղքատ է եղել, նոյնիսկ միս չի եղել, շաքար չի եղել: Մուսուլմանները, բոլորն էլ աղքատ էին այն ժամանակ, ոչ մի բան չկար: Հայրս որ Սիրիայից գալիս էր՝ այդ ամէնը բերում էր: Հայրս շատ աշխատասէր էր, աչքի էր ընկնում, նրանք էլ ջղայնանում էին, նախանձում էին: Բայց միաժամանակ մեզ՝ հայերիս աւելի շատ էին վստահում: Նոյնիսկ աղջկան որ փախցնում էին, մինչեւ հարսանիք անելը տանում էին մի հատ հայի տունը յանձնում էին, ասում էին էս հայի տանը թող մնայ մեր հարսը: Իրենց եղբօր տուն չէին տանում, բայց հայի տուն տանում էին, ասում էին հայը կը պահի:

*- Լաւ, գնացին Մուշ: Իսկ Մուշում ի՞նչ միջավայր էր:*

- Օ, այն տարիներին այսպիսի հարցերի մասին չէին խօսում: Մեզ, իհարկէ, համարում էին Շեկօ աշիրէթի մարդիկ: Բայց եթէ մէկը յատուկ հարցնէր՝ կ'ասէինք, որ հայ ենք: Այդ տարիներին Մուշ շատերն էին տեղափոխւում՝ արաբ, քուրդ: Արաբերէն, քրդերէն էին խօսում: Յետոյ իմացւում էր, որ հայեր են: Ոչ բոլորն, իհարկէ, բայց շատերի մասին ենք իմացել:

*- Վտանգաւոր չէ՞ր հայ լինելու մասին իմանալը:*

- Նախ՝ մենք նախկին հայեր էինք: Յետոյ՝ մեր սերնդի համար արդէն այդքան վտանգաւոր չէր, մեր հայրերի սերնդի համար էր վտանգը: Նրանք վախենում էին: Եւ յետոյ՝ մեզ երբեք չէին հարցնում, բայց բոլորն էլ գիտէին: Մէկ է՝ չես կարող այդ լուրը թաքցնել: Մուշում կը լինի, Սասունում կը լինի՝ որտեղ էլ լինի, միշտ իմանում էին, որ այդ երեխային վերցրել պահել են, որ դա հայի երեխայ է եղել: Չնայած այդ երեխաներն ամբողջովին ընդունում էին իրենց պահած ընտանիքների բարքերը, կենցաղը, լեզուն, եւ այլ կերպ չէր էլ կարող լինել: Բայց հայ լինելը բոլորը գիտէին եւ գիտեն: Թաքցնել չեն կարող եւ անիմաստ էլ է:

*- Գոմքը Մարաթուկի ճիշտ դիմացն է, եւ Մարաթուկը ամէնամեայ ուխտի օր ունի: Ձեր գիւղացիները, ձեր ծնողներն այդ ուխտին գնու՞մ էին:*

- Այո, գնացել են, մատաղ են արել: Մենք շատ վստահ չենք, որովհետեւ մենք գիւղում չենք ապրել, բայց կարծեմ գնում էին: Մի բան, որ հաստատ է, այն է, որ Փոշուտ[108] գիւղում դեռ քրիստոնեայ հայեր կային մնացած, նրանք գալիս էին մեր գիւղի՝ Գոմքի եկեղեցին: Մեր գիւղի եկեղեցին սուրբ էր, բոլոր քրիստոնեաներն էին գալիս: Մինչեւ հիմա էլ գիտեն, որ ինքը սուրբ է: Դերագոմք են ասում այդ եկեղեցուն, որը նշանակում է Գոմքի եկեղեցի: Հայերին ում էլ ասում ես Դերագոմք՝ գիտի որ այդ եկեղեցին է: Սասունի բոլոր գիւղերից հայերը գալիս էին, մատաղ էին անում այդտեղ:

*- Դուք չէ՞ք յիշում, ե՞րբ էին գնում Մարաթուկ ուխտի:*

- Ես յիշում եմ, որ հայրիկիս քեռին Սիրիայից յատուկ գալիս էր Մարաթուկ գնալու համար: Ինքը չէ՞ որ շարունակել էր քրիստոնեայ մնալ: Բայց ես չեմ գնացել, չեմ յիշում: Հիմա կը զանգեմ հայրիկիս կը հարցնեմ: (*Զանգում է Մուշում գտնուող հօրը, հարցնում՝ ե՞րբ է Մարաթուկի տօնը, ե՞րբ էին գնում մատաղներ անելու: Ինձ հաղորդում է հօր պատասխանը՝ Յուլիսի 15ին: Ես խնդրում եմ հարցնել՝ արդեօ՞ք դա Վարդավառի տօնին էր, կամ՝ հայրը լսե՞լ է արդեօք Վարդավառ բառը եւ եթէ լսել է՝ ի՞նչ է այն նշանակում[109]: Հարցնում է եւ ինձ հաղորդում պատասխանը՝ «հայրս ասում է՝ Վարդավառը մի սուրբ նահատակի անուն է: Ասում է՝ մեզ բացատրել են, որ Վարդավառը սուրբ նահատակի անուն է[110]»*):

*- Լաւ, ասացիք, որ Թեքինը վերջերս վերադարձել է քրիստոնէութեան: Ինչու՞:*

(*Թեքին*) – Մերոնք հո կամաւոր չեն մուսուլման դարձել, մեզ ստիպել են: Մեր ընտանիքում միշտ խօսուել է այդ մասին, եւ ես միշտ երազել եմ քրիստոնեայ դառնալ: Միշտ սպասել եմ յարմար պահի:

*- Երբուանի՞ց այդ միտքը յայտնուեց, քանի՞ տարեկանից սկսեցիք մտածել քրիստոնեայ դառնալու մասին:*

- Գերմանիայում էր, որ սկսեցի մտածել: Առհասարակ կարծում եմ իմ ողջ ընտանիքը պէտք է վերադառնայ քրիստոնէութեանը: Բայց մերոնք չեն համարձակւում: Ես մտածեցի, որ եթէ ես առաջին քայլն անեմ, մերոնց համարձակութիւնը կը մեծանայ: Ես ուզում եմ, որ բոլոր իսլամացածները վերադառնան իրենց կրօնին:

*- Ձեր հայրը, մայրը, եղբայրները չե՞ն առարկել:*

- Այո, շատ: Նրանք բոլորն էլ դէմ են: Հիմա մեր ողջ ազգութիւնն է իմ դէմ դուրս եկել: Ասում են՝ դու մեզ հարուածի տակ ես դրել, մեզ կարող են նոյնիսկ սպանել: Վախենում են: Շուրջն իսկապէս էլ սպառնալիքներ կան: Որոշակիօրէն մեր ընտանիքի մասին չեմ ասում, առհասարակ եմ ասում: Հիմա քրիստոնէութեանը վերադառնալու խօսակցութիւնները շատացել են, ուրեմն սպառնալիքներն էլ են շատացել: Ես դժուարութեամբ մկրտուեցի, այստեղ՝ Ստամբուլում, պատրիարքն էլ չէր թողնում: Արամ Աթէշեանը[111] կտրուկ հրաժարուեց մկրտելուց, ասաց իրաւունք չունենք, պետականօրէն մեզ թոյլ չեն տալիս: Այդ օրը, որ եկեղեցի էինք գնացել, համարեա 200 մարդ կային այնտեղ: Եկել էին սասունցիներ, Մուշից, ուրիշ գիւղերից, բոլորն ուզում էին մկրտուել: Պատրիարքն ասում է գնացէք ինքնութեան վկայական բերէք արխիւներից: Բայց արխիւ չկայ, վառուած են այդ արխիւները, արխիւ չկայ: Պատրիարքարանից վերջնական մերժեցին, ես էլ գնացի բողոքական քահանայի մօտ՝ Գրիգորի[112]: Նա էլ էր ձգձգում, բայց ես շատ յամառօրէն պնդում էի: Նա ինձ մկրտեց: Հիմա ես ամէն Կիրակի գնում եմ պատարագի: Մինչեւ մկրտութիւնս գնացել էի Հայաստան, Ծիծեռնակաբերդ, Էջմիածին, այնտեղ աղօթել էի: Հայաստանում շատ պտտուեցի: Ամէնուր հայերէն էին խօսում: Ես էլ շատ էի նախանձում: Ուրախանում էի ու նաեւ նախանձում: Ես արաբերէն գիտեմ, քրդերէն, թուրքերէն. հայերէն չգիտեմ: Բայց հայ եմ:

*- Իսկ Ստամբուլի հայկական համայնքը ձեզ ինչպէ՞ս է ընդունում:*

- Մեզ ճանաչում են: Կամաց-կամաց կ'ընդունեն: Հիմա արդէն եղբայրս էլ է ուզում քրիստոնեայ դառնալ: Պատրաստւում է:

*- Բայց հարազատները դէմ են:*

- Վախենում են:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Խմբ. Այս հատորով կը շարունակենք* Հայկազեան Հայագիտական Հանդէս*ի Լ.Գ. Հատորին մէջ այս նիւթով հրապարակումներու ծրագրեալ շարքը, խոստանալով որ Լ.Ե. Հատորին մէջ եւս լոյս կ'ընծայենք նման բնոյթի նիւթեր, հուսկ՝ զանոնք առանձին հատորով հրատարակելու մտասեւեռումով:*

[2] Ահմէթ Ինսէլ, Միշէլ Մարեան, *Երկխօսութիւն Հայկական Տաբուի Շուրջ*, Երեւան, 2010, էջ 70:

[3] http://www.armtimes.com/hy/read/24567

[4] Թուրքական քաղաքական հռետորաբանութեամբ «թաքուն հայեր» արտայայտութիւնը կարող է վերաբերել բոլոր իսլամացած հայերին, այդ թւում՝ վերջնականապէս եւ անվերադարձ, նոյնիսկ մոլեռանդ իսլամացածներին:

[5] Յապաւում՝ Զանգուածային Լրատուական Միջոցներ բառակապակցութեան:

[6] Անդրանիկ, *Տէրսիմ: Ճանապարհորդութիւն Եւ Տեղագրութիւն*, Թիֆլիս, Տպ. Մնացական Մարտիրոսեանի, 1900, էջ 64, 161-162. նաեւ՝ Գէորգ Հալաջեան, «Դերսիմի Հայերի Ազգագրութիւնը», հրատարակութեան պատրաստել եւ խմբագրել է Դ. Վարդումեանը, *Հայ Ազգագրութիւն Եւ Բանահիւսութիւն*, *Հտր. 5*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1975, էջ 33, 84, 249, 256 եւն. նաեւ՝ Գէորգ Ա. Երեւանեան, *Պատմութիւն Չարսանճագի Հայոց*, Պէյրութ, Տպ. Տօնիկեան, 1956, էջ 133:

[7] Անդրանիկ, էջ 161-162:

[8] Ալեւիերէն ասելով նկատի ունի զազայերէն կամ զազակի լեզուն, որն իրանական լեզուներից մէկն է եւ որով խօսում է Դերսիմի ու շրջակաների ալեւիների զգալի մասը:

[9] Հալաջեան, էջ 257:

[10] Տուեալ դէպքում՝ կրօնապետ: Տե՛ս՝ ծնթ. 55:

[11] Հալաջեան, էջ 254:

[12] Հալաջեան, էջ 33:

[13] Անդրանիկ, էջ 161-162:

[14] Հ. Խառատեան, «Հայ-Ալեւիական Սոցիալ-Կրօնական Սինթէզը Դերսիմի Ալեւիների Աւանդազրոյցներում», *Հանդէս Ամսօրեայ*, 2014, էջ 135-233:

[15] Ղզլբաշ, ղզլբաշներ, կըզըլբաշ - թուրքերէնով բառացի՝ «կարմրագլուխ»: ԺԵ.-ԺԶ.դդ. «կըզըլբաշ» անուանւում էր ակ-կոյունլուների պետութեան՝ ներկայիս Թուրքիայի եւ Պարսկաստանի յարակից տարածքներում քոչուոր, անասնապահութեամբ զբաղուող թրքալեզու ռազմական ցեղերի միաւորումը, ովքեր շիիզմի հետեւորդ էին եւ 12 իմամների պատուին 12 շերտ ունեցող կարմրագոյն չալմա էին կրում: 1502ի Սեֆեան Իսմայիլ Ա.ը ակ-կոյունլուների պետութիւնը նուաճեց եւ ինքն իրեն Պարսկաստանի շահ հռչակեց կըզըլբաշների օգնութեամբ, եւ իսլամի շիա ուղղութիւնը պետական կրօն յայտարարելով՝ յենւում էր գլխաւորապէս կըզըլբաշների վրայ: ԺԶ. դարից սկսած, յատկապէս պարսկական տիրոյթում, շիաներին յաճախ անուանել են նաեւ «կըզըլբաշ»: Նախապէս էթնօ-լեզուական միաւորի հաւաքական անուն լինելով, «կըզըլբաշ» բառն աստիճանաբար ձեռք է բերել կրօնական խմբի՝ շիիզմի հետեւորդների բնութագիր: Դրան զուգահեռ պարսկական տիրոյթի մաս կազմող Կովկասում, օրինակ, «կըզըլբաշ» էին անուանում Սեֆեան Պարսկաստանի իշխանութիւնն իրացնող ռազմա-ցեղային կազմաւորումներին՝ առանց կրօնական բնութագրի: Յետագայում «կըզըլբաշ» բառը տարբեր տարածքներում ստացել է տարբեր ընկալումներ: Դերսիմում «կըզըլբաշ» են անուանում Դերսիմի եւ յարակից տարածքի զազախսօ եւ քրմանջախսօ ալեւիներին: Սակայն Դերսիմի ալեւիների մօտ, օրինակ, յայտնի չէ «կըզըլբաշ» բառի ո՛չ նախնական թրքական էթնօ-լեզուական միաւորի

բնութագիր լինելու հանգամանքը, ո՛չ՝ շիիզմի հետեւորդների բնութագիր լինելու հանգամանքը: Նրանք «կըզըլբաշ» բառի կրօնական ընկալումը չունեն եւ այն գործածում են բացառապէս իրենց էթնիկ միաւորի հաւաքականութեան իմաստով: Աւելորդ չէ շեշտել, որ նրանք «կըզըլբաշ» չեն անուանում ո՛չ շիաներին, ո՛չ Թուրքիայի թրքախօս, արաբախօս ալեւիներին: Թուրքիայի հանրային կարծիքում «կըզըլբաշները» չափազանց բացասական ընկալում ունեն, եւ դա տեւականօրէն խրախուսուել, նոյնիսկ նեդրուել է իշխող շրջանակների կողմից:

1930ականների սկզբներին ըստ Դերսիմի վերաբերեալ Թուրքիայի կառավարութեան համար ոստիկանութեան պատրաստած զեկոյցին. *«Ալեւիականութեան ամենավատ եւ բացատրութեան կարիք ունեցող ճակատը թրքութեան եւ իր միջեւ առկայ անդունդն է: Այս անդունդը ղզըլբաշ հաւատքն է: Ղզըլբաշը չի սիրում սունի մուսուլմանին, ատելութիւն է տածում, սունի իսլամի յաւիտենական թշնամին է: Սուննիներին յիշատակում են որպէս ռումի (հռոմէացի - Հ.Խ.): Ղզլբաշները հաւատում են, որ կրում են աստուածային ուժը, իմամները մահացել են սուննիների կոտանքներից: Դրա համար սուննիներին թշնամի են համարում: Սա այնքան է առաջ գնացել, որ ղզլբաշը թուրք եւ սունի, քուրդ եւ ղզլբաշ բառերը նոյնացնում է»* (http://www.taraf.com.tr/ayse-hur/makale-dersim-alevistan-zazaistan.htm):

[16] Անդրանիկ, էջ 97:

[17] Անդրանիկ, էջ 153:

[18] Անդրանիկ, էջ 100:

[19] Երեւանեան, էջ 65:

[20] Hasan R. Tankut, "Zazalar Hakkinda Sosyolojik Tetkiler", M. Bayrak, *Açik-Gizli/Resmi-Gayriresmi Kürdoloji Belgeleri*, Ankara: Özge, 1994 (1935), էջ 470-3. նաեւ՝ Cf. George E.White, "Some Non-Conforming Turks", *Moslem World*, 1918, էջ 246:

[21] Այս մասին Դերսիմի զազախօս ալեւիները շարունակում էին պնդել նոյնիսկ 2011ին:

[22] Hranush Kharatyan, "Developments of the "Law of Identity" in the Republic of Turkey", http://repairfuture.net/index.php/en/identity-standpoint-of-armenia/the-search-for-identity-in-dersim-part-1-identities-in-dersim-armenian

[23] Ըստ դերսիմցի Հալաջեանի, Մեծկերտի շրջանի՝ Խութաց Զորի կիրճի ելքին շատ մօտիկ գտնուող այս գիւղը քսաներորդ դարասկզբին կոչւում էր Տանապերան եւ ունէր 25 տուն (200 հոգի) հայ, 30 տուն (150 հոգի) քուրդ բնակչութիւն (Հալաջեան, էջ 95, ծանթ.2):

[24] Հալաջեանը գիւղի անուան հետ կապուած յիշատակում է մի աւանդութիւն՝ իբրեւ թէ Դերսիմում շատ տարածուած էին Անահիտ աստուածուհու տաճարին նուիրաբերուող մատաղացու հորթերի գոմերը: Դրանցից մէկն էլ գտնուելիս է եղել ներկայ գիւղի ստորոտում, ծաղիկներով եւ կանաչներով ծածկուած գեղատեսիլ արօտավայրերում: Գիւղի Տանապերան անունը նա կապում է հորթերի մակաղատեղի իմաստի հետ (Հալաջեան, էջ 98): Ինչպէս տեսնում ենք, այսօր էլ մնում է գիւղի անուան՝ սպանուող հորթերի հետ կապի բացատրութիւնը:

[25] Ջունգուշ՝ գիւղ Դիարբեքիրի կողմերից:

[26] ՊԿԿ- Քրդական Աշխատաւորական Կուսակցութիւն, երեսուն տարուց աւելի է պայքարում է Թուրքիայում քրդերի ազգային իրաւունքների համար:

[27] Փերթէկ, Բերդակ - քաղաք եւ վարչական կենտրոն Թուրքիայի Հանրապետութեան Թունջելիի Նահանգում, հարաւային մասում, ներկայիս Թունջելի-Խարբերդ ճանապարհին: Դեռեւս ուրարտական շրջանից յայտնի բնակավայր է: Ընկնում է Չորրորդ Հայքի Շահունեաց Ծոփք Գաւառի տարածքում: 1915ի ցեղասպանութեան տարիներին Բերդակից 6537 հայ է տեղահանուել: Բերդակ նախկին քաղաքն ամբողջովին, մի շարք եկեղեցիների հետ միասին, ընկել է 1960ականներին թուրքական իշխանութիւնների ծրագրով կառուցուած Քեբան ջրամբարի տակ:

[28] Նազիմիէն (Կըզըլ Քիլիսէ), Օւաճիկը, Խոզաթը, Փուլումերին նախկին Դերսիմի՝ ներկայիս Թունջելի Գաւառի գաւառակներն են:

[29] Մազգիրտ – Մեծկերտ, ԺԹ. դարում օգտագործուել է նաեւ Գարաչոր, Կարաչոր անունը՝ վարչական կենտրոնի անունից: Վարչական միաւոր՝ գաւառ Թուրքիայի Հանրապետութեան Թունջելիի Նահանգի հարաւ-արեւելեան մասում: ԺԹ. դարի երկրորդ կէսից մտնում էր Խարբերդի Նահանգի Դերսիմի Գաւառի մէջ՝ որպէս Մազկերտի Գաւառակ: Օսմանեան Կայսրութեան շրջանում Չարսանջակի Գաւառակի կազմում Խարբերդի Նահանգի մէջ էր: Համապատասխանում է պատմական Ծոփքի՝ Չորրորդ Հայքի Պաղնատուն Գաւառին, հարաւից սահմանակցում է Ծոփքի Բալահովիտ (ներկայիս Բալու) Գաւառին:

[30] Շորդա-Շորտան: Մեծկերտի գիւղերից, ըստ Հալաջեանի Ի. դարասկզբին գիւղում կար Թագուոր անունով եկեղեցի, երկու այլ եկեղեցիների աւերակներ, մէկը՝ Ս. Փրկիչ: Շորդանում ապրում էին 240 հայ, 75 քուրդ (ալեւի - Հ.Խ.) բնակիչ (Հալաջեան, էջ 98):

[31] Միրաքներ, Միրաքեան/Միրագեան - հայկական տոհմ Դերսիմում: Ըստ ԺԹ. դարի վերջ-Ի. դարի սկզբի հայ հեղինակների, Դերսիմում միակ հայկական տոհմը, որ ապրում էր աշիրէթային կապերով, հողատէր էր, տոհմի անդամները զէնք էին կրում: Տոհմը, երբեմն մասնակցում էր բնական հարստութեան վերաբաշխման ներ-դերսիմեան կռիւներին, եւ դերսիմցիների հետ միասին պայքարում էր Դերսիմի անկախութեան եւ ինքնիշխանութեան համար: Հալաջեանը Միրագեանների բնակութեան վայրերը գիւղ առ գիւղ յիշելուց յետոյ, աւելացնում է. *«ամէն ոք, քուրդ թէ հայ, վկայում են, որ Միրագեանները շատ հին են, այնքան հին, որքան Դերսիմն ու դերսիմցին: …Միրագը Միրագ էր, քանի դեռ հայ էր, հենց որ նա հրաժարւում էր հայութիւնից, իրաւունք չունէր Միրագ կոչուելու»* (Հալաջեան, էջ 252-254), եւ հենց ինքն էլ ալեւիացած Միրաքներին թուարկում է ալեւիական աշիրէթների ցանկում՝ *«Խութաց Զորից մինչեւ Տուժիկ Պապայի փէշերը ապրում էին աւելի քան 120 հազար բնիկներ՝ հայտարանցի, խռանցի, ճիպրանցի, ալանցի, միրագցի, ապասանցի եւ այլ աշիրէթների անուան տակ, բոլորն էլ ալեւիներ»* (նոյն, էջ 263): Մէկ այլ հայ հեղինակ, Անդրանիկը, իր աշխատանքում յատուկ բաժին ունի՝ «Տէրսիմցի Հայերը Կամ Միրագեանները»: Նա մասնաւորապէս գրում է. *«Տերսիմի, մանաւանդ Տուժիքի կողմերը կան բաւական թուով հայեր՝*

*բոլորովին անկախ եւ հարկատուութիւնից ազատ, որոնք յայտնի են Միրագեանք, Միրագցիք կամ Միրագեաններ անունով: Սոցա մարդահամարը կը հասնի 7000 մարդու, որոնք պատերազմի ժամանակ եւ առհասարակ ունեն պատրաստ 3000 մարտիկ… Միրագեանների գլխաւոր բնակատեղիներն են Տէր-Ովան, Չոխուր, Էքրգ, Հալուորու, Թորուտ կամ Հալուորու Ս. Կարապետ վանքը, եւ զանազան մեծ ու փոքր գիւղերու մէջ կ'ապրին քրդերու հետ խառն եւ անխառն:…Միրագեաններն անվեհեր են, ազատօրէն են շրջում, միշտ զինուած են… նոյնիսկ թուրք կառավարութիւնը չի համարձակւում այս ցեղից որեւէ մէկին ձերբակալել, որովհետեւ մէկին տաս-քսան են պատասխանում: …Միրագեանները քրդերից առաւել են անվեհերութեամբ, քաջութեամբ, հարստութեամբ, արհեստաւորութեամբ, առեւտրականութեամբ, բարոյականութեամբ, ընկերասիրութեամբ…»* (Անդրանիկ, էջ 176-177):

[32] Դեռեւս հարիւր տարի առաջ գիւղը կոչւում էր Խոզագիւղ: Հաւանաբար «գիւղ» բառը թուրքերէն «քէօյ»ի փոխուել է Դերսիմի վերջնական նուաճումից (1938) յետոյ: Հալաջեանի հաղորդմամբ՝ անունը տեղացիները կապում էին Հայաստանում քրիստոնէութեան տարածմանը դիմադրող Տրդատ թագաւորի խոզ դառնալու աւանդազրոյցի հետ *(«Սրանք հաւատում էին Գրիգոր Լուսաւորչին չարչարելու հետեւանքով Տրդատ թագաւորի կերպարանափոխման առասպելին եւ ասում, թէ գիւղի անունը ոչ թէ Խոզընգեղ է, այլ Խոզնտեղ: Իբր թէ Տրդատը խոզի կերպարանափոխուելուց յետոյ, ապրել է դիմացի Խաչկետուկի քարայրում, որի ստորոտում գտնւում էին 'եկեղեցու փլատակներ'»* (Հալաջեան, էջ 73): Պէտք է աւելացնել, որ Դերսիմում մինչեւ հիմա համոզուած են, որ Տրդատի խոզակերպման պատմութիւնը տեղի է ունեցել հենց Դերսիմում եւ այդ կապակցութեամբ ալեւի դեղէները ցայսօր աւանդազրոյցներ են պատմում (Խառատեան, «Հայ-Ալեւիական»):

[33] ԺԹ. դարավերջին Անդրանիկ հեղինակը եղել էր Խոզընգէոյ Գիւղում եւ մասնաւորապէս գրում է. *«Խոզընգեղ հայաբնակ գիւղը բաղկացած էր 55-60 տներից, որոնց բնակիչներն առհասարակ Միրագեան ցեղին կը պատկանին»* (Անդրանիկ, էջ 64): Խոզընգեղում Անդրանիկին պատմել են, որ իրենց գիւղից հիւսիս-արեւելեք երեք-չորս ժամուայ ճանապարհի վրայ գտնուող Տէր-Ովան դաշտագետինը իրենց սեփականութիւնն է, Միրագեանների բուն հայրենիքն է, որ ոմն Տէր-Ովանէսի անունով անուանուած է Տէր-Ովան: Տէր Ովանէսը Միրագեանների նախահայր-նահապետն է, իսկ Միրագ անունը Տէր Ովանէի ազգանունն էր, եւ որն, *«ըստ Միրագեաններու, Մամիկոնեաններէն սերած ու առաջացած է»*: Ժամանակով Միրագեանները բոլորն էլ միասին Տէր Ովանում էին ապրում, բայց շատանալով ցրուել են Դերսիմի զանազան կողմերում, մի մասն էլ Մեծկերտ է եկել՝ Տէր Ովանում մնացողներից ստորագրութիւն առնելով, որ իրենք էլ այնտեղ սեփականութիւն ունեն: Տէր Ովանում մնացողների մեծ մասը, սակայն, ժամանակի ընթացքում քրդացել են, որպէս հայ-Միրագ մնացել է միայն փոքր մասը: Յետագայում, երբ որոշ Միարագեաններ ցանկացան վերադառնալ Տէր Ովան, այստեղի քրդացածները դէմ եղան, ասելով, որ չեն ճանաչում իրենց պապերի ստորագրած թուղթ-գիրը: Այնպէս որ արդիւնքում Միրագեանների ու Տէր Ովայի մէջ սաստիկ վէճ

առաջացաւ, եւ իրենք գտնում են, որ հարկաւոր է այդ սեփականութիւնը բռնի ետ բերել (էջ 68-69)։ Անդրանիկի տեղեկութիւններով Միարգեաններ էին ապրում նաեւ Խոզընգեղից հարաւ գտնուող Ղըզըլճուղ հայկական գիւղում, որտեղ հայերը 25-30 տուն են, քրդերը՝ 2-3 տուն (էջ 70), ինչպէս նաեւ Ղըզըլճուղից արեւմուտք, Մնձուրի միւս ափին, 25 տներից բաղկացած Թիրիշմէկ Գիւղում ամբողջը *«Միրագեան ցեղին կը պատկանին»* (էջ 76)։

[34] Սուրբ Յուսիկ - Գրիգոր Լուսաւորչի թոռը, նրա աւագ որդի Վրթանէսի երկուորեակներից մէկը՝ Աղուանքի լուսաւորիչ համարուող Գրիգորիսի կրտսեր եղբայրը։ Հայոց Հայրապետ է դարձել 341/342ին։ Ըստ աւանդութեան՝ մեծ տառապանքներ էր կրում հայոց արքունիքի եւ ազնուականների աշխարհիկ բարքերի պատճառով ու յաճախ էր սաստում նրանց, որի պատճառով Տիրան թագաւորը նրա դէմ թշնամացել էր։ Հերթական մի կշտամբանքից յետոյ թագաւորի հրամանով նրան Ծոփաց Գաւառի Բնաբեղ Բերդի հենց եկեղեցու մէջ բրածեծ են անում, որից յետոյ կիսամահ հայրապետին տեղափոխում են Թորդան Գիւղ՝ իր հայրական կալուածքը, որտեղ էլ մահանում է 347ին (Շնորհք Արք. Գալուստեան, *Հայազգի Սուրբեր*, Երեւան, 1997, էջ 51-53)։ Սուրբ Յուսիկի թաղման վայրը Բարձր Հայքի Դարանաղիի Թորդանում են յիշում Բուզանդն ու Խորենացին։

[35] Քարտէզներով ոսկի փնտռող հայերի առասպելը շատ տարածուած է ողջ Արեւմտեան Հայաստանի՝ Արեւելեան Թուրքիայի ներկայիս քուրդ ու թուրք բնակչութեան մէջ։ Մի կողմից թաղուած ոսկիների մասին պատմութիւնները, միւս կողմից՝ իսկապէս քարտէզները ձեռքներին պտտուող հայերի գոյութիւնը միմեանց փոխլրացնում են՝ բորբոքելով հայերի թողած հարստութիւնները փնտռողների երեւակայութիւնը։ Մենք էլ քարտէզով էինք. մեր ձեռքին Դերսիմի վարչական քարտէզն էր։ Սակայն արդէն փորձ ունէինք, որ բացատրութիւններն աւելորդ են, տեղացիները, մէկ է, քարտէզով մարդկանց ոսկի փնտռողների տեղ էին ընդունում։

[36] Չարսանջակ - քաղաք եւ վարչական կենտրոն Օսմանեան Կայսրութեան Դերսիմի հարաւային դաշտային շրջանում։ ԺԹ. դարի երկրորդ կէսից մտնում էր Խարբերդի Նահանգի Դերսիմի Գաւառի մէջ։ Համապատասխանում է պատմական Ծոփաց Աշխարհի Շահունեաց Ծոփք եւ Պաղնատուն Գաւառին։ Ի. դարասկզբին ունէր 60 հայաբնակ գիւղ (Երեւանեան. նաեւ՝ Հալաջեան, էջ 88-99)։

[37] Թաղամաս Ստամբուլում։

[38] Իրականում ինքնութիւնը՝ հայ լինելը վերականգնելը եւ հայ դառնալը, ինչպէս պարզուեց, անձի մկրտութեան վկայականն էր, որում «հայ» բառը արտացոլուած է միայն հայ եկեղեցու առնչութեամբ՝ *«Կը Հաստատենք, որ վերոյիշեալ անձը մկրտուած է ըստ օրինի եւ որպէս զաւակ Հայ եկեղեցիի»*։

[39] Մկրտութեան վկայականում մկրտութեան տարեթիւը նշուած է 1974ը, վկայականի տրման տարեթիւը՝ 2001։

[40] Նկատի ունի Մնձուրի երաժշտական ամէնամեայ փառատօնը, որ կազմակերպւում է 2000ից ի վեր։

[41] Խոզրքէոյ Գիւղից մօտ մէկ կիլոմետր հեռաւորութեամբ բացատ է։

[42] Հին Հաքիս, Հին Հագս: Սոյն Հագսը, որ ունէր 200 հայ, 240 քուրդ (ալեւի) բնակչութիւն, Դերսիմի Կըզըլքիլիսէ գաւառակենտրոնից արեւմուտք, Խութաց Ձորի անառիկ կիրճում էր գտնւում: Այն իսպառ աւերուել է Ցեղասպանութեան տարիներին: Մէկ այլ Հագս, որն ունէր 600 հայ, 870 քուրդ (ալեւի) բնակչութիւն, այժմ էլ Նազիմիէի Թունջելի Նահանգի Նազիմիէ Գաւառի անտառապատ, լեռնային գիւղերից է (Հալաջեան, էջ 75), չնայած բնակարաններն ամբողջովին աւերուել են թուրքական իշխանութիւնների կողմից՝ Քրդական Աշխատավորական Կուսակցութեան հետ գիւղի բնակչութեան ենթադրեալ կապերը խզելու նպատակով (տե՛ս սոյն ժողովածուում՝ «Սովորաբար Մարդու Ծագումը...» պատմութիւնը): Սոյն Հագսից հարաւ, դեռ կար երրորդ՝ պատմական Հագսը, Խութաց Ձորի աջ ափին, որից Ի. դարասկզբին մնացել էին բերդի, ամրոցի եւ եկեղեցիների աւերակներ (Հալաջեան, էջ 75):

[43] Այսինքն կենտրոն:

[44] H. Söylemez, “Türkiye'de, Araplaşan Binlerce Ermeni De Var,” http://www.aksiyon.com.tr/detaylar.do?load=detay&link=17376

[45] Ուրֆայում հաստատուած, մահմեդականացած հայերի «իսլամական խոր հաւատի» եւ հայութեան դէմ ընդդիմանալու մասին շատ յաճախ եմ պատմութիւններ գրանցել, այդ թւում՝ իրենց քրիստոնեայ ազգականների հետ կապերի խզման, նրանց հետ ազգականութիւնը շարունակելու մերժման մասին: Ուշագրաւ է, որ թուրքական աղբիւրները երբեք չեն խօսում Ուրֆայում ծպտեալ հայերի գոյութեան մասին:

[46] Տե՛ս նաեւ՝ Ռ. Մելքոնեան, «Ներքին Ամուսնութիւնների Սովորոյթը Թուրքիայի Ծպտեալ Հայերի Շրջանում» , *Հանրապետական*, Երեւան, 2008, թիւ 5, էջ 6-9:

[47] Խօսքը գնում է Բոխումում (Գերմանիա), 2007ին հրատարակուած թուրք գրող Քեմալ Եալչընի *Sari Gelin* վէպի մասին: «Բիզիմքիլէր»ի թեման բարձարացուած է նաեւ Եալչընի *Հոգիս Քեզմով Կը Խայտար*, Երեւան, Զանգակ-97, 2003, *Միրտս Քեզնով Է Խայտում*, Երեւան, Ոսկան Երեւանցի, 2005 փաստա-վաւերագրական վէպում:

[48] «Մերոնց» ասելով նկատի ունի Ցեղասպանութիւնից յետոյ քրդական միջավայրում հայկական ինքնութեամբ պահպանուած եւ աւելի ուշ Ստամբուլ տեղափոխուած արեւմտահայերին:

[49] Պոլսահայեր ասելով նկատի ունի Կոստանդնուպոլսում ապրած հայերի ժառանգներին: Ստամբուլ քաղաքը Ի. դարի յիսունականներին արագօրէն սկսեց աճել որպէս խոշոր արդիւնաբերական քաղաք, եւ յիսուն տարուայ ընթացքում քաղաքի բնակչութիւնն աճեց համարեա տաս անգամ: Քաղաքում ապրող բնիկ հայերի զգալի մասը 1960ականներից տեղափոխուել է Եւրոպա եւ Ամերիկաներ, իսկ գաւառներում Ցեղասպանութիւնից յետոյ փրկուած հայերն աստիճանաբար տեղափոխուել են Ստամբուլ: «Մենք ստամբուլահայ չենք» ասելով նկատի ունի, որ Ստամբուլում ապրող ներկայիս հայերի մեծ մասը գաւառներից տեղափոխուածներ են: Արդիւնքում Ստամբուլի հայերի մեծամասնութիւնն իսկապէս «պոլսահայերի» ժառանգորդը չէ:

[50] Պատմողը նկատի ունի 1930-50ականներին գաւառներից Ստամբուլ տեղափոխուած հայերին, ոչ թէ մինչեւ Ցեղասպանութիւնը Պոլսում ապրողներին:

[51] Հայաստան բառն օգտագործում է Արեւմտեան Հայաստանի մասին, ինչպէս տեւական ժամանակ Օսմանեան Կայսրութիւնում էր այդ տարածքի անունն ասւում՝ Էրմենիստան:

[52] Խօսքը յայտնի հայազգի լրագրող Հրանդ Տինքի մասին է, ով սպանուեց թուրք ազգայնականների կողմից 2007 Սեպտեմբերի 15ին Ստամբուլում, իր կողմից խմբագրուող *Ակօս* թերթի խմբագրատան առաջ: Տինքի աղմկայարոյց դատավարութիւնը դեռեւս շարունակւում է:

[53] Կըզըլ Քիլիսէ - այժմ՝ Նազիմիէ: Քաղաք եւ վարչական կենտրոն Թուրքիայի Հանրապետութեան Թունջելի Նահանգում: ԺԹ. դարի երկրորդ կէսից մտնում էր Խարբերդի Նահանգի Դերսիմի Գաւառի մէջ՝ Կըզըլքիլիսէ անունով: Ընկած է Ծոփքի Պաղնատան հիւսիսի, թերեւս նաեւ մի փոքր մաս՝ Խորձեանի հարաւի մէջ, արեւելքից սահմանակցելով Ծոփքի Խորձեան Գաւառի Կողոբերդ (Կեղի, Քըղի) հատուածին:

*Կըզըլ Քիլիսէ* թուրքերէնից թարգմանաբար նշանակում է *Կարմիր Եկեղեցի*: Կըզըլ-Քիլիսէ անունը բացատրւում է քաղաքի հայկական եկեղեցիներից մէկում պահուող կարմիր աւետարանի գոյութեամբ:

[54] Մազգիթ - Մեծկերտ, (Թուրքերէն հնչիւնափոխութեամբ՝ Մազգիրտ, օգտագործուել է նաեւ Գարաչոր, Կարաչոր անունը): Քաղաք եւ վարչական կենտրոն Թուրքիայի Հանրապետութեան Թունջելի Նահանգում: Համապատասխանում է պատմական Ծոփքի՝ Չորրորդ Հայքի Պաղնատուն Գաւառին, հարաւից սահմանակցում է Ծոփքի Բալահովիտ (ներկայիս Բալու) Գաւառին): Խոզաթ (Խոզադ, Խոզատ, Գիւզաթ, Գոզաթ, Ղուզատ), քաղաք եւ վարչական կենտրոն Թուրքիայի Հանրապետութեան Թունջելի Նահանգում, ԺԹ. դարում՝ գաւառակ Դերսիմի Գաւառի կազմում, Խարբերդի Նահանգում: Գտնւում է Դերսիմի կենտրոնում: Այժմեան Խոզաթն ընկնում է Բարձր Հայքի Մնձուր եւ Դարանաղեաց գաւառների հարաւային եւ Ծոփաց Նահանգի Փոքր կամ Շահունեաց Ծոփք Գաւառի հիւսիսային հատուածում: Չմշկազագ (Չմշկածագ - (թուրքերէն հնչիւնաբանութեամբ՝ Չիմիշկեզիկ), քաղաք եւ վարչական կենտրոն Թուրքիայի Հանրապետութեան Թունջելի Նահանգում, հարաւ-արեւմտեան մասում, աշխարհագրօրէն ընկնում է Խարբերդի, Չարսանջակի եւ Ակնայ մէջը: Ի. դարասկզբին Չմշկածագ գիւղաքաղաքը որպէս Չմշկածագ Գաւառակի քայմաքամանիստ Դերսիմի Գաւառի կազմում Խարբերդի նահանգում էր:

Մասամբ համապատասխանում է պատմական Ծոփաց Նահանգի Փոքր կամ Շահունեաց Ծոփք Գաւառին: Չմշկածագում է ծնուել հայազգի բիւզանդական կայսր Յովհաննէս Ա. Չմշկիկը: ԺԲ. դարի պատմիչ Մատթէոս Ուռհայեցին հաղորդում է, որ Չմշկիկը Խոզան գաւառից էր, այն վայրից, որն այժմ Չմշկածագ է կոչւում (Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, Երեւան, Հայաստան Հրատ., 1973, էջ 12): Ի. դարասկզբին Չմշկածագ գիւղ կար Խոզաթի շրջանում (Հալաջեան, էջ 34): Արզինջա - Երզնկա: Էլազըկ - քաղաք եւ վարչական կենտրոն Թուրքիայի Հանրապետութիւնում, համառօտուած է Մամուրէթ Իւլ-Ազիզ անունից: Մամուրէթ Իւլ-Ազիզը Խարբերդ Քաղաքին կպած փոքր բնակավայր էր Ի. դարասկզբին, որը Ցեղասպանութեան շրջանում հռչակուեց

էրզրումի ողջ նահանգից այստեղ քշուած հայերի կոտորածների ծաւալներով ու բարբարոսութեան աստիճանով: Այժմ Խարբերդ քաղաքը փաստացի Էլազիկի մի թաղամաս է:

[55] Արեւելքում շատ ժողովուրդների մօտ օգտագործուող «փիր» բառը նշանակում է «սուրբ», «սուրբ մարդ», երբեմն՝ նաեւ կրօնական առաջնորդ, կրօնապետ: Պատմողը խիստ կամայական է մեկնաբանում կրօնական առանձնայատկութիւնները, բայց նրա ասածի բովանդակութիւնն այն է, որ բոլոր հաւատներն էլ հիմքում նոյն սկզբունքներն ունեն:

[56] Կալուածների վկայական - սեփականութիւնը հաստատող պետական փաստաթուղթ, կալուածաթուղթ:

[57] Տե՛ս՝ Նախաբան:

[58] Նկատի ունի, որ Էնվէր անունը Հայոց Ցեղասպանութեան կազմակերպիչներից Էնվէր փաշայի անունն է:

[59] Հազս - տե՛ս՝ ծնթ. 42:

[60] Տե՛ս՝ ծնթ. 42:

[61] Այս բնակավայրի մասին այլ տեղեկութիւններ չյաջողուեց գտնել:

[62] Այս բնակավայրի մասին այլ տեղեկութիւններ չյաջողուեց գտնել:

[63] Որոշ կասկածներով ենթադրում ենք, որ Քիւզուլը ներկայիս Օւաճիկի շրջանում գտնուող Կիւզուք գիւղն է, որի մասին Հալաջեանը տեղեկացնում է, թէ մինչեւ Ցեղասպանութիւնը 900 հայ եւ 480 քուրդ (ալեւի) բնակչութիւն ունէր: Գիւղում կար գետնուղի՝ աջ ու ձախ կողմից փորուած սենեակներով, որոնցից մէկում պահպանւում էին սեկի մէջ փաթաթուած գրքեր ու ձեռագիր մատեաններ (Հալաջեան, էջ 40):

[64] Դերսիմի ալեւիների մէջ ալեւի կրօնապետերին կոչում են փիր եւ դեդէ:

[65] Ապահովական մտահոգութիւններով զանց ենք անում նրա իսկական անունը:

[66] Միք - այժմ՝ Գէօկչէք: Գէօկչէք գիւղը Թունջելիից մի փոքր հիւսիս-արեւելք է, Նազիմիէից՝ արեւմուտք:

[67] Հանգերուան - ենթադրում ենք, որ խօսքը ալեւիական յայտնի Հայտերան, Հայդարան, Հայտարան աշիրէթի մասին է, որ իշխում էր այս տարածքում (Հալաջեան, էջ 75-76):

[68] 1970ականներին Թուրքիայում լռութեան մատնուած հայերին յիշեցին նախ՝ քրդական ազատագրական պայքարի առնչութեամբ: Այդ պայքարի հրահրողներ համարուեցին թաքնուած հայերը, եւ ողջ երկրում «թաքնուած հայերի» կամ ծայրամասերում անձայն գոյատեւող, բայց որպէս հայ ապրողների որս սկսուեց: Երկրորդ՝ ԱՍԱԼԱի նոր սկսուած գործողութիւնների առնչութեամբ: Հայերի հանդէպ բացասական քարոզչութիւնն ուղեկցւում էր ձերբակալութիւններով եւ սպանութիւններով: Մարդիկ յաճախ պարզապէս «անհետանում» էին: Արեւմտեան Հայաստանի՝ Արեւելեան Թուրքիայի տարածքի իմ բոլոր զրուցակիցներն իրենց վրայ զգացել են այդ կտրուկ բացասական փոփոխութիւնը: Եթէ մինչ այդ հայերի մասին բացարձակ լռութեան պայմաններում առիթ էր տրուել մասնաւոր յարաբերութիւնների միջոցով աստիճանաբար ձուլուել կամ լռելեայն սերնդէ-սերունդ փոխանցել հայկական ինքնութեան փշրանքները, ապա 1970ականներին նոյնիսկ

ամենահեռաւոր, խուլ գիւղերում գիտէին, որ յարմար պահ է ստեղծուել կրկին խլել հայերի ունեցուածքը, եւ հայ սպանելը կարող էր պատասխանատուութիւն չառաջացնել: Այդ տարիներին է վերաբերում Սասունի, Բիթլիսի, Մուշի, Ադիամանի հայերի վերջին բեկորների արտագաղթը: Նրանք շտապում էին յայտնուել մեծ քաղաքներում, որտեղ իրենց անցեալի վերաբերեալ տեղեկութիւնները յայտնի չէին: Միաժամանակ նոյն տարիներին խորացաւ իսլամացումը: Ազգակցական խմբերի իսլամացուած հատուածներն ստիպում էին իրենց քրիստոնեայ մնացած ազգականներին արագօրէն իսլամանալ եւ մոռանալ իրենց կապը հայութեան հետ: «Անհետացողների» ճակատագրով չէին համարձակւում հետաքրքրուել: Հասկանում էին, որ դա յատուկ ծառայութիւնների գործն է: Եթէ նոյնիսկ այդպէս չէր, դա հաստատուն համոզմունք էր:

69 Քաղաք Սեբաստիա Վիլայէթի Սեբաստիա Գաւառում: Կիւրինի տեղահանութիւնը տե՛ս՝ http://allturkey.am/1019/%D5%BD%D5%BE%D5%A1%D5%A6%D5%AB-%D5%A3%D5%B5%D5%B8%D6%82%D6%80%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%AB-1915-%D5%A9%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%BF%D5%A5%D5%B2%D5%A1/; http://www.civilitasfoundation.org/am/2009-06-01-12-28-04/522-my-entire-being-negated.html

70 Էլբիստան - քաղաք ներկայիս Թուրքիայի Հանրապետութեան հարաւում, Մարաշ Քաղաքից ոչ-հեռու: Կիլիկիայից բռնագաղթած հայերի շատ կարաւաններ են անցել Էլբիստանով:

71 Խարբերդցի:

72 Փալու-Բալու (թուրքերէն հնչիւնափոխութեամբ՝ Փալու), քաղաք եւ գաւառակ Եփրատի ափին: Օսմանեան Կայսրութեան շրջանում նախ՝ Խարբերդի Կուսակալութեան գաւառակ, ապա միացուել է Դիարբեքիրի Կուսակալութեանը: Սահմանակից էր Ճապաղջրին, Խարբերդին, Չարսանջակին եւ վարչական Դերսիմին: 1914ին Դերսիմի քայմաքամութիւններից մէկն էր: Համապատասխանում է պատմական Ծոփքի Բալահովիտ Գաւառին: Բալուն բաժանւում էր 7-9 գիւղախմբերի՝ Գարաչոր, Բուլանըք, Մազրուաթ, Գէօքդերէ, Օխու, Հուն, Խարաբեկէն, Սարաջուր, Աշմուշատ:

73 Բինգէօլ - Արսէնը նկատի ունի ոչ թէ ներկայիս Բինգէօլի Նահանգը Թուրքիայի հարաւ-արեւելքում, այլ այդ նահանգում գտնուող Բինգէօլի լեռները (հայկական աղբիւրներում՝ նաեւ Բիւրակն)՝ հայկական Տաւրոսի Բինգէօլի Սարահարթում: Բինգէօլ (հազար լիճ) լեռներում են գտնւում Արաքս եւ Մնձուր գետերի ակունքները: Ներկայումս Դերսիմի Նահանգի Օւաճիկի Գաւառակի տարածքում է: Բինգէօլը բազմաթիւ հայկական առասպելներ ու աւանդազրոյցներ սնուցող լեռնային տարածք է եւ մինչեւ Ցեղասպանութիւն Էրզրումի ողջ հայութեան համար ուխտագնացութեան յայտնի վայր էր: Հալաջեանը գրում է, որ Բինգէօլում Մնձուրի ակունքների ջրերը համարւում էին հայոց հեթանոսական Անահիտ Աստուածուհու ստինքների կաթը, եւ

աւանդական վարդավառեան տօնահանդէսի վայր էր համարւում: Աւանդազրոյցներից մէկ ուրիշի համաձայն Հայկ Նահապետը Բէլի դէմ կռուելուց առաջ իր նետը մի ամբողջ օր պահել է Բիւրակնի սառնորակ ակունքների ջրերում՝ համոզուած, որ դրանք կ'աւելացնեն նետի զօրութիւնը:

[74] Հայերը սովորաբար իրենց հասարակական համայնքային բջիջներն «աշիրէթ» չեն անուանում եւ «աշիրէթային» համայնքներով չեն ապրել: Արեւմտեան Հայաստանի տարածքում ԺԹ. դարի վերջին նրանց համակեցութեան բջիջը կա՛մ գիւղն էր, կա՛մ՝ գերդաստանը, նահապետական ընտանիք բառով բնորոշուող: Արսէնն ակնյայտօրէն օգտագործում է քրդերից փոխառեալ «աշիրէթ» բառը, չնայած խօսքը գնում է գերդաստանի մասին:

[75] Խոշմաթ (այժմ՝ Չաքուրքաշ) - Բալու քաղաքից մի փոքր հիւսիս-արեւելք: 1912-13ի հայոց պատրիարքարանի տուեալներով այս գիւղում ցեղասպանութիւնից առաջ ապրում էին 114 տուն հայեր, գործում էին երկու դպրոցներ՝ 160 աշակերտներով (Raymond H. Kévorkian / Paul B. Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman à la Veille du Génocide*, Paris, Éd. Arhis, 1992, էջ 408): Հալաջեանի տեղեկութիւններով Խոշմաթը Արածանիի աջափնեայ գիւղերից ամենամեծն ու ամենահայաշատն էր՝ 105 տուն, 840 մարդ (Հալաջեան, էջ 83):

[76] Հաւբաբ - Հաւաւ (այժմ՝ Էքինէօզու): Բալու Քաղաքից հիւսիս-արեւմուտք մօտ քսան կմ. հեռաւորութեան վրայ: Քրդերն այն անուանում են Հաբափ, խօսակցութեան մէջ ցայսօր գործածական են նաեւ Հաբաբ, Հաւբաբ, Հաւհաւ ձեւերը: Մինչեւ վերջերս Հաւաւը Բալու Գաւառի գիւղերից էր: Բալուին շատ մօտ գտնուող Քովանջըլար գիւղում 1934ին հաստատուած Ռումինիայից եւ Բուլղարիայից գաղթած մուսուլմանները, սակայն, այնքան զարգացրին Քովանջըլարը, որ այն 1988ին թիւ 3352 օրէնքով դարձաւ Էլազըղ Նահանգի 11 գաւառներից մէկը: Քովանջըլարի հետ միասին Հաւաւ եւ Օխի գիւղերը նոյնպէս յայտնուեցին նոր գաւառի տարածքում: Հաւաւն ունէր 207 տուն հայ բնակչութիւն, երկու եկեղեցի, երկու դպրոց՝ 260 աշակերտներ (Kévorkian/Paboudjian, էջ 408): Հալաջեանի տեղեկութիւններով Բալուի հովտի գիւղերից ամենամեծն ու ամենահայաշատն էր՝ 235 տուն, 1880 մարդ (Հալաջեան, էջ 82):

[77] Սեքրաթ - Սագրաթ (այժմ՝ Եազուպաշու), Բալու Քաղաքից հիւսիս-արեւելք: Ունեցել է 75 տուն հայ բնակչութիւն, եկեղեցի, 73 աշակերտներով դպրոց (Kévorkian/Paboudjian, էջ 408):

[78] Քարաքոչան (նախկինում՝ Թափա, կամ Թեփէ), Բալուից հիւսիս-արեւելք, Օխու Գիւղից արեւմուտք: Մինչեւ Ցեղասպանութիւնն ունեցել է 61 տուն հայ բնակչութիւն, 60 աշակերտներով երկսեռ դպրոց (Kévorkian/Paboudjian, էջ 408): Հալաջեանը նոյնպես հաստատում է դպրոցի գոյութիւնը, որտեղ դասաւանդում էր քահանան: Ըստ նրա՝ գիւղն ունէր 448 հայ եւ 50 քուրդ բնակչութիւն (Հալաջեան, էջ 84):

[79] Բոսֆորը Պարսից Ծոցի հետ կապող երկաթուղի, որի երկարութիւնը հասնում է 2400 կմ.: ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին Օսմանեան Կայսրութեան տարածքով անցնող երկաթուղու կառուցումը մրցակցութեան առարկայ է դարձել եւրոպական մեծ պետութիւնների, մասնաւորապէս Բրիտանիայի եւ

Գերմանիայի միջեւ: Պաղտատի երկաթուղու շինարարութիւնն ու շահագործումը մեծացնում էր տարածաշրջանում նրանց դերակատարութիւնը: 1888-1899ին Գերմանիային յաջողուեց Թուրքիայից ստանալ Պաղտատի երկաթուղու հիմնական հատուածի կառուցման եւ շահագործման արտօնութիւն: Ամբողջ երկաթուղու կառուցումն աւարտուել է 1934-1941ին՝ անգլիական եւ ֆրանսիական մասնաւոր ընկերութիւնների կողմից: Գերման փորձագէտները Թուրքիային խորհուրդ են տուել Արեւմտեան Հայաստանի տարածքում թուրքական միատարրութիւն ստեղծելու համար հայերին զանգուածաբար վերաբնակեցնել Պաղտատի երկաթուղու շինարարութեան տեղամասերում, որով կը լուծուէր երկու կարեւոր խնդիր՝ երկաթուղու կառուցումը կ'ապահովուէր ձեռներէց ու գործունեայ բանուորական ուժով, եւ միաժամանակ կը թուլանար ռուսական ազդեցութիւնը Արեւմտեան Հայաստանում: Համարւում է, որ այս տեսակէտը յետագայում հիմք հանդիսացաւ Հայոց Ցեղասպանութեան համար: Պաղտատի երկաթուղու առանձին տեղամասերի շինարարութեան բազմաթիւ հայեր են մասնակցել, որոնց Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին գլխովին ոչնչացրել են:

[80] Օխու (այժմ՝ Բուլգուրջուք), Բալու Քաղաքից հիւսիս-արեւելք: Ի. դարասկզբին խառը հայ-քրդական գիւղ էր (25 տուն հայ, 25 տուն քուրդ): Ունէր դպրոց՝ 40 աշակերտներով (Kévorkian/Paboudjian, էջ 408): Ըստ Հալաջեանի, Օխուն ունէր 45 տուն հայ, 32 տուն քուրդ, համապատասխանաբար 586 հայ եւ 200 քուրդ բնակչութիւն, Ս. Կիրակոս անունով եկեղեցի եւ հայկական դպրոցում սովորում էին նաեւ քուրդ երեխաներ (Հալաջեան, էջ 83):

[81] Յետագայում Բարունակ Թօփալեանը պիտի գրէր գիրք՝ «*Հայրենի Գիւղս Օխու*», Պոսթըն, Տպ. Հայրենիք, 1943:

[82] Տե՛ս՝ ծնթ. 54:

[83] Տե՛ս՝ ծնթ. 76: Այն աւելի մեծ վարչական միաւորի միացուելով, հաւանաբար համապատասխանաբար տեղափոխել են նաեւ արխիւը:

[84] Տիգրանակերտ ասելով նկատի ունի Դիարբեքիրը:

[85] Բոսֆորի նեղուցով Ստամբուլը բաժանուած է երկու մասի, ասիական եւ եւրոպական, որոնք միմեանց միանում են կամուրջներով: Ասիական մասը անուանում են Աթաշեհիր, թարգմանաբար՝ հայրաքաղաք:

[86] Միհրան Փրկիչ Գիւլթեքին, Դերսիմի Հայերի Միութեան նախաձեռնողն ու կազմակերպիչը: Քրիստոնեայ է մկրտուել եւ իր հայութիւնը բարձրաձայնել է վերջին տարիներին՝ իր Սուլէյման անունը փոխարինելով Միհրան անունով: 2013 Մարտի 12ին իր հարցազրոյցներից մէկում, խօսելով ստամբուլահայութեան վերաբերմունքի մասին, ասում է. *«Մեզ թոյլ չեն տալիս իրենց դպրոցներում սովորել եւ մեր թաղման արարողակարգը եկեղեցում անցկացնել: Այս հանգամանքը վիրաւորում է մեր արժանապատուութիւնը: Նման դէպքում, եթէ հարկ լինի, նաեւ Մարդու Իրաւունքների Եւրոպական Դատարան կը դիմենք… Ուզում եմ կոչ անել, որ վերանայեն դպրոց յաճախելու եւ եկեղեցում թաղման ծիսակարգ կատարելու ուղիներն ու կարգերը,*

*հակառակ դէպքում ապագայում մեծ խնդիրներ կ'առաջանան: Չենք կարծում, որ սա վայել է քրիստոնէութեանը»* (http://news.am/arm/news/144048.html):

[87] Նկատի ունի քրդախօս, նաեւ սուննի մահմեդական կամ այդպիսիք ընկալուող հայեր:

[88] Ստամբուլի հայկական դպրոցներում ընդհանուր կրթութիւնը թուրքերէնով է, հայերէն դասերը միայն հայերէն լեզուի եւ կրօնի դասերն են: Դպրոց ընդունուող երեխաները ընտանիքից յաճախ թրքախօս են գալիս դպրոց եւ միայն այստեղ են սկսում սովորել հայերէն: Դասամիջոցներին երեխաների շփման լեզուն թուրքերէնն է, քանի որ երեխաներն այդ լեզուին աւելի լաւ են տիրապետում: Այս ամէնի հետեւանքով դպրոցն աւարտում են հայերէնի սակաւ իմացութեամբ: Դպրոցներն այնուամենայնիւ հայկական համայնքն ամրացնող շատ դրական դեր են խաղում, քանի որ հայ երեխաների զգալի մասը միայն դպրոցում են միմեանց հետ ծանօթանում, շփւում, ընկերական կապեր հաստատում: Ստամբուլի հայերի զգալի մասի երեխաները յաճախում են թուրքական դպրոցներ:

[89] Ստամուբուլի հայերի համար վերջին հարիւրամեակում անձնանունները միշտ խնդրայարոյց են եղել: Սովորելով ապրել այնպէս, որ առանձնապէս աչքի չընկնեն, նրանք ջանում են ընտրել անուններ, որոնք կա՛մ ընդհանուր եւրոպական նկատուեն (Ժիւլիէթ, Սիւզի, Ժակլին, Հիլդա, Արթուր, Արման, Ալեքս, Դենիէլ, Դէյվիդ…), կա՛մ հայկական լինեն, բայց հայկական միջավայրից դուրս ազգութիւնը «չմատնեն» (ժպիտ, Հերոս, Սեւան), կամ հնչիւնաբանութեամբ մօտ լինեն իսլամական անուններին: Ուշագրաւ է, որ երիտասարդ սերնդի մէջ բացառապէս հայկական ընկալուող անուններն (Գէորգ, Տիգրան, Սարգիս, Արսէն, Սուրէն, Միհրան, Անահիտ) առաւել տարածուած են քրիստոնէացող կամ քրիստոնեայ մնացած «քուրդ հայերի» մօտ: Այս անուններն, անշուշտ, յաճախ երկրորդ անուններ են, քանի որ պաշտօնական, փաստաթղթային անունները դեռեւս շարունակում են մնալ իսլամական կամ քրդական անուններ:

[90] Ստամբուլի հայկական վարժարաններում դպրոցի տնօրինութիւնը իրաւունք ունի ընդունել միայն այն երեխաներին, ում ծնողները քրիստոնէական մկրտութեան վկայական ունեն: Դպրոցական տարուայ սկզբին կրթութեան պաշտօնական մարմիններն ստուգում են դպրոցի կողմից ընդունուած երեխաների ծնողների ներկայացրած փաստաղթերը:

[91] Գոմքը գտնւում է Բիթլիսի Նահանգի Սասուն Գաւառի Փսանաց Գաւառակում. ունէր Ս. Քառասուն Մանուկ եկեղեցի եւ գիւղի մօտ՝ հանրայայտ Գոմոց կամ Սուրբ Պետրոս Առաքեալի Ճկոյթ Վանքը (Վ. Պետոյեան, *Սասունի Եւ Տարօնի Պատմա-Աշխարհագրական Տեղագրութիւնը*, Երեւան, 2005, էջ 49): Ըստ Պետոյեանի, գիւղում ապրում էին 23 տուն հայեր (Պետոյեան, *Սասնայ Ազգագրութիւնը*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1965, էջ 9): 1916 Օգոստոսի 16ին Սասունից փրկուած փախստական հայերի վկայութեամբ ջարդերի ժամանակ Գոմքում ապրում էին 25 տուն հայեր՝ 400 մարդ, որից փրկուել են միայն 10 մարդ (*Հայոց Ցեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում, Վերապրածների Վկայութիւններ, Հտոր. 2, Բիթլիսի Նահանգ*, Երեւան, 2012, էջ 288): Գոմքեցի

եղբայրների այս պատմութիւնը գալիս է հաստատելու, որ փախստականներից զատ եղել են նաեւ այլ փրկուածներ, երեխաներ, ովքեր մնացել են իրենց հայրենիքում եւ յետագայում իսլամացել-արաբացել:

[92] Սասունի Գոմք Գիւղի դիմադրութեան մասին տե՛ս՝ Սոֆիա Յակոբեան, *Սասունի Գոմք Վանքի Դիմադրութիւնը, 2013/06/28, http://akunq.net/am/?p=32446; http://allturkey.am/4149/%D5%BD%D5%A1%D5%BD%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB-%D5%A3%D5%B8%D5%B4%D6%84-%D5%BE%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB-%D5%A4%D5%AB%D5%B4%D5%A1%D5%A4%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8/*

[93] Ցեղասպանութիւնից յետոյ արաբացած հայերի մասին տեղեկութիւններ շատ կային, բայց գլխաւորապէս՝ Սիրիայի տարածքում: Վերջերս նոյնիսկ տեղեկութիւն հրատարակուեց այն մասին, որ Սիրիայի տարածքում իսլամացած արաբախօս եւ քրդախօս հայերն առանձին աշիրէթներ են կազմել, ինչպէս, օրինակ, «Հայոց Իսլամական Ցեղախումբը», որը կազմուել է 1998 Փետրուարի 2ին հրաւիրուած յատուկ ժողովի ընթացքում (Ճորճ Ճ. Աբէլեան, «Աշիրաթ Արման Ալ Շաթաթ»՝ հայոց իսլամական ցեղախումբ, «Աշիրաթ Արման ալ Մուսլիմա», 21.05.2010; http://noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=4793) . նաեւ՝ Ճորճ Ճ. Աբէլեան, «Տեղեկագիր Հայոց Մեծաց Նիւթ. Հայոց Սփիւռքի Ցեղախումբը»՝ *Աղբարի՛կ, Ափիկ Մը Ջու՛ր..., Յկեանս Նահատակութիւն 2*, Այնճար-Լիբանան, Տպարան Համազգային, 2010, էջ 373-447: Անհամեմատ աւելի քիչ է յայտնի Թուրքիայում արաբացած հայերի մասին (Ռուբէն Մելքոնեան, «Արաբացած Հայեր Թուրքիայում», *Երկիր Թերթ*, 5 Հոկտեմբեր 2007. նաեւ՝ Ռուբէն Մելքոնեան, «Ցեղասպանութիւնը Վերապրած Սասունի Հայութեան Արդի Խնդիրների Շուրջ» http://www.noravank.am/upload/pdf/383_am.pdf) . նաեւ՝ «Լինել Միայնակ Ու Բախտաւոր՝ Սասունի Լեռներում…» (http://hayernaysor.am/%D5%AC%D5%AB%D5%B6%D5%A5%D5%AC-%D5%B4%D5%AB%D5%A1%D5%B5%D5%B6%D5%A1%D5%AF-%D5%B8%D6%82-%D5%A2%D5%A1%D5%AD%D5%BF%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80-%D5%BD%D5%A1%D5%BD%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB-%D5%AC%D5%A5%D5%BC/) : Սասունի Խաբլլջոզի կամ Հազզոյի շրջանի Փիրշենք/Փուրշենք հայկական գիւղում արաբացած եւ քրիստոնեայ պահպանուած հայերի մասին տե՛ս՝ «Հայլար», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, *Հտր. Լ Գ.*, Պէյրութ, 2013, էջ 427-439):

[94] Քարթի Գիւղի վեաբերեալ տեղեկութիւններ չգտանք: Թուարկած շարքից հաւանական է թւում, որ այն կարող էր լինել Սասունի Փսանք Գաւառակի Քարավանք գիւղը (Պետոյեան, *Սասնայ Ազգագրութիւն*, էջ 10), որի մասին մի շարք տեղեկութիւններ ունենք, թէ այնտեղ մինչեւ այսօր տաս-տասնմէկ հայ ընտանիք է ապրում (տեղեկութիւնը հաղորդել է Քարավանք գիւղից Ստամբուլում ապրող հայ ինքնութեամբ մի երիտասարդ, ում ծնողները

շարունակում են ապրել Քարավանքում): Քարավանքում ցայսօր ապրող իսլամացած հայերի մասին վկայութիւններ կան նաեւ «Ռէյս Տանոյի Թոռ Գէորգը. Արխունցիները» եւ «Սասունցիները» պատմութիւններում՝ *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր., ԼԳ.,* էջ 408-426, 464-492: Չի բացառում նաեւ, որ սոյն Քարթլին լինի Մօտկանի Գաւառակի Քաշախ գիւղը, որի կոտորածների մասին 1916 Օգոստոսի 22ին պատմել է այդ գիւղացի Աւետ Գասպարեանը: Ըստ վկայութեան գիւղի 1500 բնակչից փրկուել է միայն 10 տղամարդ եւ 5 կին (*Հայոց Ցեղասպանութիւնը*, էջ 83-85): Ըստ Պետոյեանի, Քաշախում կար հայերի 200 տուն (Պետոյեան, *Մասնայ Ազգագրութիւն*, էջ 12):

[95] Մըշկընի անունով գիւղը հաւանաբար նախկին Մըշգեղ, Մըջգեղ, Միջգեղ անունով գիւղը պիտի լինի Բիթլիսի Նահանգի Սասունի Գաւառի Փսանք Գաւառակում, որտեղի 900 հայ բնակչից, ըստ 1916 Օգոստոսի 16ի Ստեփան Յարութիւնեանի վկայութեան, ջարդերից փրկուել եւ Կովկաս է անցել 31 մարդ (*Հայոց Ցեղասպանութիւնը*, էջ 287-288): Ըստ Պետոյեանի, սակայն, Մըջգեղում մինչեւ Ցեղասպանութիւնն ապրում էին միայն 409 հայեր (Պետոյեան, *Մասնայ Ազգագրութիւն*, էջ 9): Մըշգեղ գիւղից վերապրածների սերունդներ կան Հայաստանի Հանրապետութեան Թալինի Շրջանի Աշնակ գիւղում (նրանց ընտանեկան յիշողութիւնների մասին տե՛ս՝ *Խօսելով Միմեանց Հետ. Անձնական Յիշողութիւններ Անցեալի Մասին Հայաստանում Եւ Թուրքիայում* գրքում, Բոնն, Գերմանիա, Հրատ. Գերմանիայի Ժողովրդական Բարձրագոյն Դպրոցների Միութեան Միջազգային Համագործակցութեան Ինստ., 2010, էջ 98):

[96] Ջամալա Գիւղը Պետոյեանի կողմից Բիթլիսի Նահանգի Սասունի Գաւառի Փսանք Գաւառակի Ջմալենք անունով յիշուած գիւղն է, որտեղ կար քսան հայ տուն (Պետոյեան, *Մասնայ Ազգագրութիւն*, էջ 10):

[97] Կոնգ գիւղի մասին տեղեկութիւն չգտանք: Չեմ բացառում, որ այն կարող է լինել Սասունի Հազզօ-Խաբլջոզի Գաւառակի Կող գիւղը, որտեղ, ըստ Պետոյեանի, մինչեւ Ցեղասպանութիւնն ապրում էր 200 հայ (Պետոյեան, *Մասնայ Ազգագրութիւն*, էջ 11):

[98] Նշտլիխ Գիւղի մասին տեղեկութիւն չգտանք:

[99] Չթխնիխ Գիւղի մասին տեղեկութիւն չգտանք:

[100] Տատանգ - Թաթանգ գիւղն է Բիթլիսի Նահանգի Սասունի Գաւառի Փսանք Գաւառակում, որի հայ բնակչութեան ջարդերի մասին տեղեկութիւն կայ Սասունի Գեարմաւ Գիւղի բնակիչ Մարտիրոս Համազասպեան Թումասեանի պատմածում: Ըստ նրան՝ Թաթանգն ունեցել է 40 տուն (*Հայոց Ցեղասպանութիւնը*, էջ 25), չնայած Պետոյեանի տեղեկութիւններով այս գիւղում կար ընդամէնը ութ տուն (Պետոյեան, *Մասնայ Ազգագրութիւն*, էջ 10):

[101] Աւելի հաւանական է թւում, որ պատմողի կողմից Բընուինգ անունով յիշատակուող գիւղը Բիթլիսի Նահանգի Մոտկանի Գաւառակի Բլոկանք, նաեւ Պլոկանք, Բալոյենք/Բելոյենք անունով յայտնի գիւղը պէտք է լինի, որտեղից ջարդերից «ընդամէնը ազատուած են վեց անձ» (*Հայոց Ցեղասպանութիւնը*, էջ 285): Չի բացառում նաեւ, որ այն լինի Սասունի Փսանք Գաւառի Բուի գիւղը որը Պետոյեանը յիշում է Ջմալենք եւ Թաթանք գիւղերի շարքում (Պետոյեան, *Մասնայ Ազգագրութիւն*, էջ 10):

[102] Սարթինգ, Սերթինգ, Սիրթինգ, Սըրթինգ ձեւերով որեւէ գիւղ/բնակատեղի չգտանք, սակայն Սասունի Փսանք Գաւառակում կար Սարեկան գիւղ՝ Զմալենք, Բուի եւ Թաթանք գիւղերի հարեւանութեամբ (Պետոյեան, *Մասնայ Ազգագրութիւն*, էջ 10):

[103] Արփի - Մօտկանի շրջանի գիւղերից, մինչեւ Ցեղասպանութիւնն ունէր հարիւր տուն հայ բնակչութիւն, շէն եւ կամարակապ եկեղեցի (Պետոյան, *Սասունի Եւ Տարօնի*, էջ 60. նաեւ՝ Պետոյեան, *Մասնայ Ազգագրութիւն*, էջ 12): Արփի գիւղից փրկուածների սերունդներ են ապրում ՀՀ Թալինի Շրջանի Շղարշիկ գիւղում: Արփիում մինչեւ այսօր հայախօսութիւնը պահպանուել է (տե՛ս՝ «Մեր Տունը Քանդուած Էր»՝ *Խօսելով Միմեանց Հետ. Անձնական Յիշողութիւններ Անցեալի Մասին Հայաստանում Եւ Թուրքիայում*, էջ 83-92):

[104] Շնուղ - Եթէ իմ բանասացի յիշատակած Շնուղ Գիւղը Խութ-Բոնաշէնի Շնիստ գիւղը չէ, ապա այս գիւղի մասին որեւէ այլ տեղեկութիւն չգտայ:

[105] Պուգնոտ - Բիթլիսի Մօտկանի Գաւառակի գիւղերից է, Արփի լեռնային գիւղի ստորոտում: Ըստ Պետոյեանի, գիւղը յայտնի էր Բույնուտ անունով, իսկ *«Մշոյ առաջնորդարանի ցուցակում Բոկնոտ է գրուած»*: Ունեցել է 30 տուն հայեր (Պետոյեան, *Մասնայ Ազգագրութիւն*, էջ 12): Գիւղը Պուգնոտ անունով են յիշում նաեւ վերապրածները, որոնց սերունդներից կան ՀՀ Թալինի Շրջանում («Մեր Տունը Քանդուած Էր», էջ 83-92):

[106] 1916 Օգոստոսի 16ին Սասունից փրկուած փախստական հայերի վկայութեամբ ջարդերի ժամանակ Սասունի Փսանաց Գաւառի Փշուտ Գիւղում ապրում էին 12 տուն հայեր՝ 150 մարդ: Փրկուածների մասին ոչինչ չի յաջողուել պարզել (*Հայոց Ցեղասպանութիւնը*, էջ 288):

[107] Մշոյ Մոգոնք, Մուգունք, Մոկունք գիւղի ջարդերի մասին տեղեկութիւններ կան Գրիգոր Քահանայ Տէր-Գրիգորեանի՝ Մշոյ դաշտի եւ Սասունի կոտորածների մասին 1917 Յունուարի 25ին կազմած տեղեկագրում (*Հայոց Ցեղասպանութիւնը*, էջ 16, 19):

[108] Փոշուտ – Փշուտ. գիւղում քրիստոնեայ հայերի մասին է խօսում նաեւ «Հայ-լար» պատումը՝ *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. Լ.Գ.*, էջ 427-439): Սակայն գիւղում Ցեղասպանութիւնից յետոյ ապրող քրիստոնեայ հայերի մասին այս տեղեկութիւնը յայտնի չի դարձնում, արդեո՞ք նրանք Փշուտի նախկին բնակիչներ էին, թէ՞ այլ գիւղերից յետագայում Փշուտ հաստատուածներ:

[109] Հարցս տրուած էր հասկանալու համար, թէ արդեո՛ք իսլամացած հայերի այս խումբը որեւէ շփում ունէր Սասունի հարեւան գիւղերում մնացած որոշ քրիստոնեայ հայերի հետ, ովքեր առնուազն մինչեւ 1970ականները շարունակում էին նշել Վարդավառի տօնը:

[110] «Վարդավառ» տօնի անունը Սասունում քրիստոնեայ մնացած հայերը գիտէին եւ նշում էին այդ տօնը: Քիչ հաւանական է, որ Գոմքի կիսաարաբացած հայերը Սասունի այլ գիւղերում պահպանուած քրիստոնեայ հայերի հետ շփուելու դէպքում Վարդավառը «սուրբ նահատակի» անուն համարէին կամ այդպիսի բացատրութիւն լսած լինէին:

[111] Արամ Աթէշեան - Կոստանդնապոլսի հայոց պատրիարքարանի տեղապահ:

[112] Գրիգոր Աղապալօղլու՝ Կոստանդնապոլսի հայ աւետարանական պատուելի: